

# Նախնական ուսումնասիրություն

Ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման և  
մետաղական բնական պաշարների վերամշակման  
ոլորտների վերաբերյալ

# Բովանդակություն

Հապավումներ	2
1. Ներածություն	3
2. Իրավական և ինստիտուցիոնալ դաշտ	16
3. Ոլորտներից պետության ստացած եկամուտները և դրանց բաշխումը	31
4. Ոլորտների հետախուզումը, արդյունահանումը և արտահանումը	43
5. Ոլորտներին վերաբերող տվյալների հասանելիությունը	77
6. Եզրահանգումներ	84
7. Հավելվածներ	87

# Հապավումներ

ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ԱԻՆ	Արտակարգ իրավիճակների նախարարություն
ԱՃԹՆ	Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն
ԲԲԸ	Բաց բաժնետիրական ընկերություն
ԲՇԽ	Բազմաշահառու խումբ
ԵՏՄ	Եվրասիական Տնտեսական Միություն
Թ.	Թվական
թթ.	Թվականներ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
մլն	Միլիոն
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՇՄՆ	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
ՊԵԿ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՎԿ	ՀՀ վիճակագրական կոմիտե
ՏԿԵՆ	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն

# 1. Ներածություն

Հայաստանը 2017թ. մարտից հանդիսանում է Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության<sup>1</sup> (ԱՃԹՆ/EITI) անդամ երկիր և 2017թ. Հայաստանի մետաղական հանքարդյունաբերության ոլորտում իրականացնում է ԱՃԹՆ-ի միջազգային ստանդարտով ԱՃԹՆ-ի անդամ երկրներին ներկայացվող պահանջներին համապատասխան թափանցիկության և հաշվետվողականության ապահովման աշխատանքներ: Միջազգային ստանդարտի կիրառման շնորհիվ մետաղական հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ հրապարակվել և հրապարակվում է համապարփակ և արդիական տեղեկատվություն, ինչպես նաև ձևավորվել է կառուցողական հանրային քննարկման հարթակ՝ ի դեմս ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի:

«Գրանթ Թորնթոն» աուդիտորական ընկերությունը կազմում է Հայաստանի երրորդ՝ 2019թ. ԱՃԹՆ-ի զեկույցը, որը ներկայացնում է Հայաստանի մետաղական հանքարդյունաբերության ոլորտը: ԲՇԽ-ի 2020թ. հունիսի 3-ի որոշման<sup>2</sup> համաձայն՝ Հայաստանի երրորդ ԱՃԹՆ-ի զեկույցի պատրաստումն ուղեկցվում է ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման և մետաղական բնական պաշարների վերամշակման (ներառյալ հանքաքարի և խտանյութի առք ու վաճառքով զբաղվող տեղական կազմակերպությունների գործունեությունը) ոլորտները ԱՃԹՆ-ի շրջանակում (2020 հաշվետու տարին ներկայացնող զեկույցում) ներառելու նպատակահարմարությունը հետազոտող նախնական ուսումնասիրություն կազմելով: Այսինքն, նախնական ուսումնասիրության կազմման նպատակն է հստակեցնել հաջորդող ԱՃԹՆ-ի զեկույցների շրջանակը և այն ներկայացնել ԲՇԽ-ին:

Ուսումնասիրության շրջանակներում հետազոտվել են վերը նշված ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման և մետաղական բնական պաշարների վերամշակման (ներառյալ հանքաքարի և խտանյութի առք ու վաճառքով զբաղվող տեղական կազմակերպությունների գործունեությունը) ոլորտները և գնահատվել այդ ոլորտները ԱՃԹՆ-ի հետագա զեկույցներում ներառելու անհրաժեշտությունը:

Այս ուսումնասիրության վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման նպատակով մենք.

- Ուսումնասիրել ենք համապատասխան օրենսդրությունը, ենթաօրենսդրական ակտերը, իրականացրել ենք վիճակագրական տվյալների և համապատասխան զեկույցների ուսումնասիրություն և վերլուծություն,
- քննարկումներ ենք անցկացրել ԲՇԽ-ի, ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության հետ,
- կազմակերպել ենք հանդիպումներ ՀՀ կառավարության և ընկերությունների ներկայացուցիչների հետ:

Անցկացված քննարկումների և հանդիպումների ընդլայնված ցանկը ներկայացված է [Հավելված 1](#)-ում:

## 1.1. Նախնական ուսումնասիրության կազմման մեթոդաբանությունը և շրջանակը

Նախնական ուսումնասիրության աշխատանքների շրջանակը ներառել է.

- սահմանել ոլորտի մասնակիցներին և շահագրգիռ կողմերին,
- ուսումնասիրել ԲՇԽ-ի աշխատանքային ծրագրերը,
- ուսումնասիրել ԱՃԹՆ-ի նախկին զեկույցները, ԱՃԹՆ-ի առաջին Ջեկույցի կազմման համար իրականացված նախնական ուսումնասիրությունը, Հայաստանի ԱՃԹՆ-ի վավերացման

<sup>1</sup> <https://www.eiti.org/>

<sup>2</sup> [https://www.eiti.am/file\\_manager/EITI%20Documents/Minutes/MSG\\_decisions\\_for\\_2019\\_EITI\\_Report.pdf](https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_decisions_for_2019_EITI_Report.pdf)

հաշվետվությունը, ԱՃԹՆ-ի հաշվետվողականությունն ապահովող իրավական դաշտը, իրական սեփականատերերի բացահայտումն ապահովող իրավական կարգավորումները,

- գնահատել առկա տեղեկատվության հասանելիության մակարդակը,
- բացահայտել անհրաժեշտ տեղեկատվության աղբյուրները և որոշել հրապարակայնացման տարբերակները,
- առաջարկել ԱՃԹՆ-ին համապատասխան հաշվետվողականության շրջանակներ, մասնավորապես անհրաժեշտ տեղեկատվության առկայությունը, արդիականությունը և արժանահավատությունը,
- բացահայտել տեղեկատվության հրապարակայնացմանը խոչընդոտող գործոններ և առաջարկել դրանց լուծման ուղղություններ,
- սահմանել հարկային վճարների և պետական եկամուտների համար էականություն, առաջարկել էականության շեմերը,
- մշակել սույն ուսումնասիրության մեջ ընգրկվող կազմակերպությունների նախնական ցանկ,
- բացահայտել այն օրենսդրական, նորմատիվ կարգավորման, ադմինիստրատիվ կամ պրակտիկ գործոնները, որոնք խոչընդոտում են լիարժեք հրապարակմանը,
- հիմք ընդունելով իրականացված ուսումնասիրությունը՝ ԲՇԽ-ին տրամադրել դիտարկումներ ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման և մետաղական բնական պաշարների վերամշակման (ներառյալ հանքաքարի և խտանյութի առք ու վաճառքով զբաղվող տեղական կազմակերպությունների գործունեությունը) ոլորտները ԱՃԹՆ-ի շրջանակում ամբողջական ծավալով դիտարկելու նպատակահարմարության վերաբերյալ:

Այս նախնական ուսումնասիրության մեջ ներկայացվում են.

- ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման և մետաղական բնական պաշարների վերամշակման ոլորտները կարգավորող հիմնական օրենսդրությունը, ֆիսկալ դաշտը: Նկարագրվում են թույլտվությունների տրամադրման և պայմանագրերի կնքման, ինչպես նաև իրական սեփականատերերի բացահայտմանն ուղղված ընթացակարգերը,
- պետական և համայնքային բյուջեների եկամուտները նշված երկու ոլորտներից և դրանց բաշխումը: Քննարկվում են վճարների և եկամուտների էականության շեմերը,
- ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման ոլորտի հետախուզումը և արդյունահանումը, մետաղական բնական պաշարների վերամշակման և ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման ոլորտների ընկերությունների կողմից իրականացվող արտադրությունը և արտահանումը: Բացահայտվում են ոլորտների ներդրումը ՀՀ տնտեսության մեջ, ինչպես նաև ոլորտների ընկերությունների կողմից կատարվող սոցիալական և բնապահպանական ծախսումները,
- տեղեկատվության հրապարակայնացմանը խոչընդոտող օրենսդրական, նորմատիվ կարգավորման, ադմինիստրատիվ կամ պրակտիկ գործոնները, տեղեկատվության հասանելիությունը պետական գերատեսչությունների համակարգերում և (կամ) կորպորատիվ հաշվետվություններում: Քննարկվում է նաև «Ծրագիր» եզրույթի սահմանումը,
- առաջարկներ՝ ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման և մետաղական բնական պաշարների վերամշակման ոլորտներում գործող պետական գերատեսչություններում տվյալների որակի ապահովման գործող գործառույթների բարելավման հետ կապված:

Ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանմանը և մետաղական բնական պաշարների վերամշակմանը վերաբերող ուսումնասիրությունների ընթացքում տեղեկատվությունը հավաքագրվել է՝

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեից,
- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից,
- ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից,
- ՀՀ վիճակագրական կոմիտեից,
- Օրենսդրության, ենթաօրենսդրական ակտերի, համապատասխան զեկույցների ուսումնասիրությունից և վերլուծությունից,
- Պետական մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներից և քննարկումներից:

Նախնական ուսումնասիրությունը պատրաստելիս՝ քննարկումներ են տեղի ունեցել ԱՃԹՆ-ի քարտուղարության հետ, որոնց ընթացքում հստակեցվել են ուսումնասիրության շրջանակները, քննարկվել են ուսումնասիրության պատրաստման ընթացքում առաջացած ընթացիկ խնդիրները:

## 1.2. Նախնական ուսումնասիրության մեջ ներկայացվող ընկերությունները

Ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանում իրականացնող ընկերությունների ցանկը տեղադրված է ՏԿԵՆ-ի պաշտոնական կայքում և ներկայացված է ստորև:

### Աղյուսակ 1.2.1

2021թ. ապրիլի 1-ի դրությամբ ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերությունների ցանկ

Ընկերության անվանում	Ընդերքօգտագործման պայմանագրի համար	Պայմանագրի տրման ամսաթիվ
1. «Ադամանդ-Կ» ՍՊԸ	ՊՎ-279	23.11.12թ.
2. «Ավշար ջուր» ՍՊԸ	Պ-579	07.02.19թ.
3. «Արատա Գոլդ» ՍՊԸ	ՊՎ-121	20.10.12թ.
4. «Արարատ Գրուպ» ՍՊԸ	ՊՎ-125	20.10.12թ.
5. «Արզնի առողջարան» ՓԲԸ	ՊՎ-147	20.10.12թ.
6. «Արսեն և Ներսես» ՍՊԸ	ՊՎ-390	18.01.13թ.
7. «Բյուրեղ հանքային ջրի» ՓԲԸ	ՊՎ-117	20.10.12թ.
8. «Դիլիջան» հանքային ջրի գործարան ՍՊԸ	ՊՎ-124	20.10.12թ.
9. «Երևանի Գարեջուր» ՓԲԸ	ՊՎ-123	20.10.12թ.
10. «Էկո ագրո» ՍՊԸ	Պ-602	17.05.19թ.
11. «Էմ Այ Բի Քոնսալթինգ» ՍՊԸ	Պ-625	03.09.20թ.
12. «Էյ Ընդ Էմ Ռեյր» ՍՊԸ	Պ-548	13.12.16թ.
13. «Իջևանի գինու, կոնյակի գործարան» ՓԲԸ	Պ-561	14.08.17թ.
14. «Իռեն-Մես» ՍՊԸ	ՊՎ-312	27.11.12թ.
15. «Լարգո-Վին» ՍՊԸ	ՊՎ-456	25.02.13թ.
16. «Լիճք» հանքային ջրերի գործարան» ՍՊԸ*	Պ-605	08.04.20թ.
17. «Կառա» ՍՊԸ	Պ-614	20.12.19թ.

Ընկերության անվանում	Ընդերքօգտագործման պայմանագրի համար	Պայմանագրի տրման ամսաթիվ
18. «Հանքավան» առողջարանային համալիր ՔՔԸ	Պ-536	23.05.16թ.
19. «Նաիրի» ՍՊԸ	ՊՎ-359	18.12.12թ.
20. «Նյու իդա» ՍՊԸ	Պ-599	25.04.19թ.
21. «Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ	Պ-530	23.05.16թ.
	Պ-535	23.05.16թ.
22. «Ռաֆայել» ՀՁ ՍՊԸ	ՊՎ-118	20.10.12թ.
23. «ՌՌՌ հանքային ջրերի գործարան» ՓԲԸ	ՊՎ-119	20.10.12թ.
	ՊՎ-120	20.10.12թ.
24. «Սևան» հանքային ջրերի գործարան» ՍՊԸ	Պ-507	03.10.14թ.
25. «Սիմոնա Ակվա» ՍՊԸ	ՊՎ-449	25.02.13թ.
26. «Սվ ջուր» ՍՊԸ	Պ-627	22.09.20թ.
27. «Վանակվա գրուպ» ՍՊԸ	Պ-593	25.10.18թ.
28. «Վանաձոր Ասսար» Առողջարան ՍՊԸ	ՊՎ-443	11.02.13թ.
29. «Վարդ աղբյուր» ՍՊԸ	Պ-533	12.04.16թ.
30. «Վիգեն» ՍՊԸ	ՊՎ-365	18.12.12թ.
31. «ՎՀՀ» ՍՊԸ	Պ-500	01.09.14թ.
32. «Տեխնոման» ՍՊԸ	Պ-506	01.07.14թ.
	Պ-631	30.10.20թ.

Նշումներ. \*«Լիճք» հանքային ջրերի գործարան» ՍՊԸ-ի դեպքում նույն պայմանագրի ներքո տրված է տարբեր նպատակներով ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման թույլտվություն: «Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ-ի և «ՌՌՌ հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի դեպքում տարբեր պայմանագրերի ներքո տրվել են տարբեր նպատակներով հանքային ջուր արդյունահանելու թույլտվություններ: «Տեխնոման» ՍՊԸ-ի դեպքում ևս առկա է երկու պայմանագիր, սակայն այս դեպքում թույլտվությունները տրվել են նույն նպատակով, բայց տարբեր հորատանցքերից հանքային ջրի արդյունահանման համար: Աղբյուրը. ՏԿԵՆ-ի պաշտոնական կայք<sup>3</sup>

Ինչ վերաբերում է մետաղական բնական պաշարների վերամշակմամբ զբաղվող տեղական կազմակերպություններին, ապա նրանց անվանական նույնականացում իրականացնելու համար տնտեսական գործունեության դասիչներից ընտրվել են մետաղական բնական պաշարների վերամշակման ոլորտին առնչվող գործունեության տեսակները, որի հիման վրա ՊԵԿ-ից ստացվել է այդ ոլորտում գործող կազմակերպությունների ցանկը: Վերջինս, ինչպես նաև դասակարգիչների ցանկը ներկայացված են ստորև:

<sup>3</sup> [http://www.mtd.am/u\\_files/file/2021-ynderq/28-4Hanqayinlrer\\_cucak.pdf](http://www.mtd.am/u_files/file/2021-ynderq/28-4Hanqayinlrer_cucak.pdf)



Աղյուսակ 1.2.2

2021թ. ապրիլի դրությամբ մեքաղական բնական պաշարների վերամշակմամբ զբաղվող ընկերությունների ցանկ\*

Ընկերության անվանում	ՀՎՀՀ	Հարկային ռեժիմ
1. «47 Զուլրի» ՍՊԸ	02689269	Միկրո և շրջանառության հարկ
2. «Ամազոն-48» ՍՊԸ	02639489	Միկրո և շրջանառության հարկ
3. «Ամփ Հոլդինգ» ՍՊԸ	00475028	ԱԱՀ
4. «Անանիա Շիրակացի» Գիտաուսումնական Կենտրոն» ՍՊԸ	00851158	Միկրո և շրջանառության հարկ
5. «Անդ Սար Մհեր» ՍՊԸ	04424361	ԱԱՀ
6. «Աս Մետալ» ՍՊԸ	04233732	ԱԱՀ
7. «Ասկե Գրուպ» ԲԲԸ	02800538	ԱԱՀ
8. «Արմենիան Տիտանիում Փրոդաքշն» ՍՊԸ	00423218	ԱԱՀ
9. «ԱրսզոշիՆ» ՍՊԸ	02809833	ԱԱՀ
10. «ԱՐՍիլիցիուՄ» ՍՊԸ	02683006	ԱԱՀ
11. «Արվա Աուրում» ՍՊԸ	01564953	Միկրո և շրջանառության հարկ
12. «Աֆզ Պրոդաքշն» ՍՊԸ	04422427	ԱԱՀ
13. «Բեսթ Սոլյուշն» ՍՊԸ	00924882	Միկրո և շրջանառության հարկ
14. «Գլանց» ՍՊԸ	02659726	ԱԱՀ
15. «Էկո Ֆոլյ» ՍՊԸ	05022625	ԱԱՀ
16. «Լեռնային Հարստություն» ՍՊԸ	02580115	ԱԱՀ
17. «Լիգայան Մետալ» ՍՊԸ	04226195	ԱԱՀ
18. «Կար-Սլեյթ» ՍՊԸ	06952916	ԱԱՀ
19. «Հակ-Երից» ՍՊԸ	02642482	Միկրո և շրջանառության հարկ
20. «Հեմերա» ՍՊԸ	04429245	Միկրո և շրջանառության հարկ
21. «Հոկտեմբերյանի Հաստոցաշինական Գործարան» ՍՊԸ	04433209	ԱԱՀ
22. «Մարգարյան Եղբայրներ» ՍՊԸ	03528762	ԱԱՀ
23. «Մաքուր Երկաթի Գործարան» ԲԲԸ	00404207	ԱԱՀ
24. «Մոնեֆֆ Գրուպ» ՍՊԸ	00146767	ԱԱՀ
25. «Նիկոլ Դիման» ԱԿ	02208258	ԱԱՀ
26. «Ն-Ս» ՍՊԸ	00002805	ԱԱՀ
27. «Շին Պլազա» ՍՊԸ	06951037	ԱԱՀ
28. «Պոռ Էքսպերտ» ՍՊԸ	01290491	Միկրո և շրջանառության հարկ
29. «Ռուդա ԳրուՊ» ՍՊԸ	00926544	ԱԱՀ
30. «Ռուսալ Արմենալ» ՓԲԸ	00061695	ԱԱՀ
31. «Սեմուր Ընդ Կո» ՍՊԸ	02560685	ԱԱՀ
32. «Փայլուն» ՍՊԸ	00002779	Միկրո և շրջանառության հարկ
33. Ալբերտ Պարունակյան ԱՁ	27902108	Միկրո և շրջանառության հարկ
34. Աշոտ Հակոբյան ԱՁ	57359658	Միկրո և շրջանառության հարկ

Ընկերության անվանում	ՀՎՀՀ	Հարկային ռեժիմ
35. Արման Հակոբյան ԱԶ	87840073	Միկրո և շրջանառության հարկ
36. «Արմավիրի Հաստոցաշինական Գործարան» ԲԲԸ	04401317	ԱԱՀ
37. Արմեն Հակոբյան ԱԶ	28006853	Միկրո և շրջանառության հարկ
38. Արմեն Մացակյան ԱԶ	66973484	Միկրո և շրջանառության հարկ
39. Արմեն Սեյրանյան ԱԶ	83710324	Միկրո և շրջանառության հարկ
40. Արտակ Վարդանյան ԱԶ	35114439	Միկրո և շրջանառության հարկ
41. Արտաշես Օհանջանյան ԱԶ	25325338	Միկրո և շրջանառության հարկ
42. Արփինե Դավթյան ԱԶ	25272107	Միկրո և շրջանառության հարկ
43. Գայանե Ամիրխանյան ԱԶ	70993031	ԱԱՀ
44. Գարուշ Պողոսյան ԱԿ	83243387	Միկրո և շրջանառության հարկ
45. Գիպերոն ՍՊԸ	04217677	ԱԱՀ
46. Էդգար Մարտիրոսյան ԱԶ	40571655	Միկրո և շրջանառության հարկ
47. Էդուարդ Սարգիսով ԱԶ	27935903	Միկրո և շրջանառության հարկ
48. Թամարա Հակոբյան ԱԶ	26539305	Միկրո և շրջանառության հարկ
49. Թեյմուր Սևիյան ԱԶ	47737696	Միկրո և շրջանառության հարկ
50. «Կուպերելեկտրիկ» ՍՊԸ	02239163	Միկրո և շրջանառության հարկ
51. «ԿՎարց – Մետ» ՍՊԸ	08619461	Միկրո և շրջանառության հարկ
52. Հայկ Գրիգորյան ԱԶ	30964039	Միկրո և շրջանառության հարկ
53. Հովհաննես Բագրատյան ԱԶ	26544853	Միկրո և շրջանառության հարկ
54. Հովհաննես Դավթյան ԱԶ	32547745	Միկրո և շրջանառության հարկ
55. Սամվել Աղեկյան ԱԶ	74398841	Միկրո և շրջանառության հարկ
56. Սայիդ Քուհ Խեզրի ԱԶ	20111854	Միկրո և շրջանառության հարկ
57. Սարգիս Օհանյան ԱԶ	35035965	Միկրո և շրջանառության հարկ
58. Սևակ Քիլիկյան ԱԶ	35204585	Միկրո և շրջանառության հարկ
59. Վահագն Պետրոսյան ԱԶ	88518666	Միկրո և շրջանառության հարկ
60. Վահե Հովհաննիսյան ԱԶ	27869658	Միկրո և շրջանառության հարկ
61. Վանուշ Պետրոսյան ԱԶ	20140026	Միկրո և շրջանառության հարկ
62. Վարդան Հովհաննիսյան ԱԶ	35155483	Միկրո և շրջանառության հարկ
63. Վերգինե Գրիգորյան ԱԶ	85507887	Միկրո և շրջանառության հարկ
64. «Ֆոնոն» ՍՊԸ	00051127	ԱԱՀ

Նշումներ. ցանկում և հետագա վերլուծություններում ներառված չեն տվյալ դասիչների ներքո գործող հանքարդյունահանմամբ զբաղվող ընկերությունները Աղբյուրը. ՊԵԿ-ի՝ ԱՃԹՆ-ի նախնական ուսումնասիրության շրջանակում ներկայացված տվյալներ

Աղյուսակ 1.2.3

Մեքսիկական բնական պաշարների վերամշակման ոլորտին առնչվող տնտեսական գործունեության դասակարգիչներ

Գործունեության դասակարգիչ	Դասակարգիչի անվանում
C24.1	Թուջի, պողպատի և ֆեռոհամահալվածքների արտադրություն
C24.10	Թուջի, պողպատի և ֆեռոհամահալվածքների արտադրություն
C24.10.0	Թուջի, պողպատի և ֆեռոհամահալվածքների արտադրություն
C24.3	Պողպատի նախնական մշակում և այլ պողպատե արտադրատեսակների արտադրություն
C24.4	Թանկարժեք և հիմնական գունավոր մետաղների արտադրություն
C24.41	Թանկարժեք մետաղների արտադրություն
C24.41.1	Թանկարժեք մետաղների արտադրություն
C24.41.2	Բանկային ոսկու և ստանդարտացված ձուլակտորների արտադրություն
C24.42	Ալյումինի արտադրություն
C24.42.0	Ալյումինի արտադրություն
C24.43	Կապարի, ցինկի և անագի արտադրություն
C24.43.0	Կապարի, ցինկի և անագի արտադրություն
C24.44	Պղնձի արտադրություն
C24.44.0	Պղնձի արտադրություն
C24.45	Այլ գունավոր մետաղների արտադրություն
C24.45.0	Այլ գունավոր մետաղների արտադրություն
C24.5	Մետաղների ձուլում
C24.51	Թուջի ձուլում
C24.51.0	Թուջի ձուլում
C24.52	Պողպատի ձուլում
C24.52.0	Պողպատի ձուլում
C24.53	Թեթև մետաղների ձուլում
C24.53.0	Թեթև մետաղների ձուլում
C24.54	Այլ գունավոր մետաղների ձուլում
C24.54.0	Այլ գունավոր մետաղների ձուլում

Ըստ ՊԵԿ-ի կողմից ներկայացված տեղեկատվության, 2021թ. ապրիլի դրությամբ գործել է մետաղական բնական պաշարներ վերամշակող 64 ընկերություն (որը չի ներառում հանքարդյունաբերությամբ զբաղվող երկու ընկերությունները), որոնցից 27-ը գործում է ԱԱՀ հարկային ռեժիմով, մյուս մասը՝ միկրո<sup>4</sup> և շրջանառության հարկի<sup>5</sup> ռեժիմով: 64

<sup>4</sup> Միկրոձեռնարկատիրության համակարգի շրջանակներում կազմակերպությունները և ֆիզիկական անձինք Հարկային Օրենսգրքի 56-րդ գլխով սահմանված դեպքերում ազատվում են մասնավորապես ԱԱՀ-ով և (կամ) շահութահարկով, ինչպես նաև շրջանառության հարկով հարկումից (<http://www.irtek.am/views/act.aspx?aid=150068>)

<sup>5</sup> Շրջանառության հարկը օրենքով սահմանված կարգով, չափերով ու ժամկետներում առևտրային կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից իրականացվող գործունեության համար պետական բյուջե վճարվող՝ ավելացված արժեքի հարկին (ԱԱՀ) և (կամ) շահութահարկին փոխարինող հարկ է (<https://www.arlis.am/documentview.aspx?docid=80449>)

ընկերություններից չորսը ներքին արդյունահանողից գնում կատարած կազմակերպություններ են, ընդ որում բոլոր չորսը ԱԱՀ վճարողներ են: Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ կարող են համարվել այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը և անհատ ձեռնարկատերը, որոնց նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 24 միլիոն դրամը<sup>6</sup>: Շրջանառության հարկ վճարող կարող են համարվել այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը, որոնց նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 115 միլիոն դրամը<sup>7</sup>: Այսինքն, այս երկու ռեժիմներով աշխատում են փոքր շրջանառություն ունեցող հարկ վճարողները: Ի լրումն, կիրառվող հարկի դրույքաչափերը ցածր են (ավելին, միկրոձեռնարկատիրության սուբյեկտներն ազատվում են միկրոձեռնարկատիրության մասով առաջացող բոլոր պետական հարկերի հաշվարկման և պետական բյուջե վճարման պարտավորությունից, բացառությամբ ՀՀ հարկային օրենսգրքի 269-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի) և հարկային վճարներն էլ կազմում են շրջանառության փոքր մասը, հետևաբար նշված հարկ վճարողներից ստացվող հարկային եկամուտները չեն կարող ունենալ էականության բարձր աստիճան ընդամենը պետբյուջեի եկամուտների մեջ: Մասնավորապես, շրջանառության հարկի դրույքաչափերը արտադրական և առևտրական (այդ թվում մետաղական բնական պաշարների վերամշակման ու հանքաքարի և խտանյութի առք ու վաճառքի) գործունեության դեպքում կազմում են համապատասխանաբար 3.5% և 5%, միաժամանակ, ՀՀ կառավարության 16.02.2017թ. N136-Ն որոշմամբ սահմանված ցանկում ներառված երկրորդային հումքի առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտների մասով շրջանառության հարկը հաշվարկվում է 1.5% դրույքաչափով<sup>8</sup>:

### 1.3. Տվյալների որակը և որակի ապահովումը (պահանջ 4.9)

Զեկույցի պատրաստման ընթացքում օգտագործվող տեղեկատվությունը հիմնականում ստացվել է կա՛մ հրապարակված պաշտոնական աղբյուրներից, կա՛մ պաշտոնական աղբյուրներին տեղեկատվության ստացման հարցմանն ի պատասխան: Սա ենթադրում է, որ առկա է տվյալների արժանահավատության որոշակի աստիճան, սակայն ստացված տեղեկատվության ստուգումներ չեն իրականացվել: Համապատասխան պետական մարմինները պատասխանատու են տրամադրված տվյալների ամբողջականության և ճշգրտության համար:

Ներկայումս ՀՀ գործող օրենսդրությամբ չի պահանջվում ստորերկրյա հանքային ջրեր արդյունահանող և մետաղական բնական պաշարների վերամշակմամբ զբաղվող ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների պարտադիր աուդիտ: 2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ են մտել 2019թ. դեկտեմբերի 4-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Հաշվապահական հաշվառման մասին», «Աուդիտորական գործունեության մասին» և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները: Սույն օրենքներով սահմանվել են ֆինանսական հաշվետվությունների պարտադիր աուդիտի ենթակա ընկերությունների չափանիշները: Չափանիշներից են, ի թիվս այլոց, ընկերությունների ֆինանսական ցուցանիշները:

azdarar.am կայքում հրապարակված են ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման և բնական մետաղական պաշարների վերամշակման ոլորտների ընկերություններից մի քանիսի աուդիտորական եզրակացությամբ ֆինանսական հաշվետվությունները:

<sup>6</sup> <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150068>, ՀՀ Հարկային օրենսգիրք, Հոդված 267, կետ 3

<sup>7</sup> <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150068>, ՀՀ Հարկային օրենսգիրք, Բաժին 13, Գլուխ 55, Հոդված 254, կետ 2

<sup>8</sup> <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150068>, ՀՀ Հարկային օրենսգիրք, Բաժին 13, Գլուխ 55, Հոդված 258, կետ 1

Աղյուսակ 1.3.1

Առողջապահության եզրակացությանը ֆինանսական հաշվետվություններ հրապարակած ստորերկրյա հանքային ջրեր արդյունահանող կազմակերպություններ

Ընկերության անվանում	Հաշվետու տարվա համար արտաքին աուդիտի հաշվետվության առկայություն (այո/ոչ)
1. «Ադամանդ-Կ» ՍՊԸ	Ոչ
2. «Ավշար ջուր» ՍՊԸ	Ոչ
3. «Արատտա Գոլդ» ՍՊԸ	Ոչ
4. «Արարատ Գրուպ» ՍՊԸ	Ոչ
5. «Արզնի» առողջարան» ՓԲԸ	Ոչ
6. «Արսեն և Ներսես» ՍՊԸ	Ոչ
7. «Բյուրեղ հանքային ջրի» ՓԲԸ	Ոչ
8. «Դիլիջան» հանքային ջրի գործարան ՍՊԸ	Ոչ
9. «Երևանի Գարեջուր» ՓԲԸ	<a href="#">Այո</a>
10. «Էկո ագրո» ՍՊԸ	Ոչ
11. «Էմ Այ Բի Քոնսալթինգ» ՍՊԸ	Ոչ
12. «Էյ Ընդ Էմ Ռեյր» ՍՊԸ	Ոչ
13. «Իջևանի գինու, կոնյակի գործարան» ՓԲԸ	Ոչ
14. «Իռեն-Մես» ՍՊԸ	Ոչ
15. «Լարգո-վին» ՍՊԸ	Ոչ
16. «Լիճք» հանքային ջրերի գործարան» ՍՊԸ*	Ոչ
17. «Կառա» ՍՊԸ	Ոչ
18. «Հանքավան» առողջարանային համալիր ԲԲԸ	Ոչ
19. «Նաիրի» ՍՊԸ	Ոչ
20. «Նյու իդա» ՍՊԸ	Ոչ
21. «Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ	Ոչ
22. «Ռաֆայել» ՀՁ ՍՊԸ	Ոչ
23. «ՌՌՌ հանքային ջրերի գործարան» ՓԲԸ	<a href="#">Այո</a>
24. «Սևան» հանքային ջրերի գործարան» ՍՊԸ	Ոչ
25. «Սիմոնա Ակվա» ՍՊԸ	Ոչ
26. «Սվ ջուր» ՍՊԸ	Ոչ
27. «Վանակվա գրուպ» ՍՊԸ	Ոչ
28. «Վանաձոր Ասսար» Առողջարան ՍՊԸ	Ոչ
29. «Վարդ աղբյուր» ՍՊԸ	Ոչ
30. «Վիգեն» ՍՊԸ	Ոչ
31. «ՎՀՀ» ՍՊԸ	Ոչ
32. «Տեխնոման» ՍՊԸ	Ոչ

Աղբյուրը. Անկախ ադմինիստրատորի անհատական վերլուծություններ

Աղյուսակ 1.3.1

Աուդիտորական եզրակացությամբ ֆինանսական հաշվետվություններ հրապարակած բնական մեքսիկական պաշարների վերամշակմամբ զբաղվող կազմակերպություններ

Ընկերության անվանում	Հաշվետու տարվա համար արտաքին աուդիտի հաշվետվության առկայություն (այո/ոչ)
1. «47 Ջուլի» ՍՊԸ	Ոչ
2. «Ամազոն-48» ՍՊԸ	Ոչ
3. «Ամփ Հոլդինգ» ՍՊԸ	<a href="#">Այո</a>
4. «Անանիա Շիրակացի» Գիտաուսումնական Կենտրոն» ՍՊԸ	Ոչ
5. «Անդ Սար Մհեր» ՍՊԸ	Ոչ
6. «Աս Մետալ» ՍՊԸ	Ոչ
7. «Ասկե Գրուպ» ԲԲԸ	Ոչ
8. «Արմենիան Տիտանիում Փրոդաքշն» ՍՊԸ	Ոչ
9. «ԱրսզոչիՆ» ՍՊԸ	Ոչ
10. «ԱՐՍիլիցիուՄ» ՍՊԸ	Ոչ
11. «Արվա Աուրում» ՍՊԸ	Ոչ
12. «Աֆզ Պրոդաքշն» ՍՊԸ	Ոչ
13. «Բեսթ Սոլյուշն» ՍՊԸ	Ոչ
14. «Գլանց» ՍՊԸ	Ոչ
15. «Էկո Ֆոյլ» ՍՊԸ	Ոչ
16. «Լեռնային Հարստություն» ՍՊԸ	Ոչ
17. «Լիգայան Մետալ» ՍՊԸ	Ոչ
18. «Կար-Սլեյթ» ՍՊԸ	Ոչ
19. «Հակ-Երից» ՍՊԸ	Ոչ
20. «Հեմերա» ՍՊԸ	Ոչ
21. «Հոկտեմբերյանի Հաստոցաշինական Գործարան» ՍՊԸ	Ոչ
22. «Մարգարյան Եղբայրներ» ՍՊԸ	Ոչ
23. «Մաքուր Երկաթի Գործարան» ԲԲԸ	<a href="#">Այո</a>
24. «Մոնեֆֆ Գրուպ» ՍՊԸ	Ոչ
25. «Նիկոլ Դուման» ԱԿ	Ոչ
26. «Ն-Ս» ՍՊԸ	Ոչ
27. «Շին Պլազա» ՍՊԸ	Ոչ
28. «Պոռք Էքսպերտ» ՍՊԸ	Ոչ
29. «Ռուդա ԳրուՊ» ՍՊԸ	Ոչ
30. «Ռուսալ Արմենալ» ՓԲԸ	Ոչ
31. «Սեմուր Ընդ Կո» ՍՊԸ	Ոչ

Ընկերության անվանում	Հաշվետու տարվա համար արտաքին աուդիտի հաշվետվության առկայություն (այո/ոչ)
32. «Փայլուն» ՍՊԸ	Ոչ
33. Ալբերտ Պարունակյան ԱԶ	Ոչ
34. Աշոտ Հակոբյան ԱԶ	Ոչ
35. Արման Հակոբյան ԱԶ	Ոչ
36. «Արմավիրի Հաստոցաշինական Գործարան» ԲԲԸ	Ոչ
37. Արմեն Հակոբյան ԱԶ	Ոչ
38. Արմեն Մացակյան ԱԶ	Ոչ
39. Արմեն Սեյրանյան ԱԶ	Ոչ
40. Արտակ Վարդանյան ԱԶ	Ոչ
41. Արտաշես Օհանջանյան ԱԶ	Ոչ
42. Արփինե Դավթյան ԱԶ	Ոչ
43. Գայանե Ամիրխանյան ԱԶ	Ոչ
44. Գարուշ Պողոսյան ԱԿ	Ոչ
45. Գիպերոն ՍՊԸ	Ոչ
46. Էդգար Մարտիրոսյան ԱԶ	Ոչ
47. Էդուարդ Սարգիսով ԱԶ	Ոչ
48. Թամարա Հակոբյան ԱԶ	Ոչ
49. Թեյմուր Սևիյան ԱԶ	Ոչ
50. «Կուպերելեկտրիկ» ՍՊԸ	Ոչ
51. «ԿՎարց – Մետ» ՍՊԸ	Ոչ
52. Հայկ Գրիգորյան ԱԶ	Ոչ
53. Հովհաննես Բագրատյան ԱԶ	Ոչ
54. Հովհաննես Դավթյան ԱԶ	Ոչ
55. Սամվել Աղեկյան ԱԶ	Ոչ
56. Սայիդ Քուհ խեզրի ԱԶ	Ոչ
57. Սարգիս Օհանյան ԱԶ	Ոչ
58. Սևակ Քիլիկյան ԱԶ	Ոչ
59. Վահագն Պետրոսյան ԱԶ	Ոչ
60. Վահե Հովհաննիսյան ԱԶ	Ոչ
61. Վանուշ Պետրոսյան ԱԶ	Ոչ
62. Վարդան Հովհաննիսյան ԱԶ	Ոչ
63. Վերգինե Գրիգորյան ԱԶ	Ոչ
64. «Ֆոնոն» ՍՊԸ	Ոչ

Աղբյուրը. Անկախ ադմինիստրատորի անհատական վերլուծություններ

#### 1.4. ԱՃԹՆ-ի անդամ երկրների փորձը ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման և մետաղական բնական պաշարների վերամշակման ոլորտներում

ԱՃԹՆ-ի անդամ երկրների կողմից ԱՃԹՆ-ի զեկույցների շրջանակներում ներկայացվող տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ այդ երկրները զբաղվում են արդյունահանման կամ դրա հետ առնչվող հետևյալ հիմնական գործունեություններով.

- նավթի արդյունահանում,
- գազի արդյունահանում,
- գունավոր մետաղների և այլ հանքանյութերի արդյունահանում և արտադրություն:

ԱՃԹՆ-ի անդամ 55 երկրներից միայն Տոգոն է, որ ԱՃԹՆ-ի զեկույցի շրջանակների մեջ ներառել է այս ուսումնասիրության առարկա հանդիսացող ոլորտներից մեկը՝ ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանմանը մոտ ոլորտ՝ ստորերկրյա ջրերի առևտուրը: Տոգոյի 2017թ. ԱՃԹՆ-ի զեկույցի մեջ բացահայտվում են ստորերկրյա ջրեր արդյունահանող ընկերություններին վերաբերող այնպիսի տեղեկություններ, ինչպիսիք են ընկերությունների կողմից ջրերի արտադրության և արտահանման ծավալները, սոցիալ-տնտեսական պարտավորությունները, ոլորտի օրենսդրությունը<sup>9</sup>:

---

<sup>9</sup> [https://itietogo.org/wp-content/uploads/2019/11/Rapport\\_ITIE-Togo-2017.pdf](https://itietogo.org/wp-content/uploads/2019/11/Rapport_ITIE-Togo-2017.pdf), Տոգոյի ԱՃԹՆ 2017թ. զեկույց



## 2. Իրավական և ինստիտուցիոնալ դաշտ

## 2.1. Հիմնական օրենսդրությունը

Սույն բաժնում ուսումնասիրվել են ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման և մետաղական բնական պաշարների վերամշակման ոլորտները (այսուհետ՝ հանքային ջրերի արդյունահանման և մետաղական բնական պաշարների վերամշակման ոլորտներ), ինչպես նաև հանքաքարի և խտանյութի առք ու վաճառքով զբաղվող տեղական կազմակերպությունների գործունեությունը կարգավորող օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտը: Ուսումնասիրության համար հիմք են ընդունվել ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի աշխատանքային ծրագրով սահմանված նպատակներն ու ԱՃԹՆ-ի Ստանդարտի պահանջները:

### Հանքային ջրերի արդյունահանում

Հանքային ջրերի արդյունահանման թույլտվության տրամադրման ոլորտը կարգավորող հիմնական օրենսդրությունը ներառում է ՀՀ ընդերքի մասին օրենսգիրքը<sup>10</sup>, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը<sup>11</sup>, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը<sup>12</sup> որպես պայմանագրային հարաբերությունները կանոնակարգող ունիվերսալ իրավական ակտ, ինչպես նաև ոլորտում իրականացվող վարչարարության հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտեր: Բնապահպանական վճարները և ֆիսկալ հարաբերությունները կարգավորում են ՀՀ հարկային օրենսգիրքը<sup>13</sup> և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը<sup>14</sup>: Հանքային ջրերի արդյունահանման համար պահանջվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում, որը համապատասխանում է ՇՄԱԳ-ի օրենքի<sup>15</sup> «Ա» կատեգորիայով սահմանված բնագավառին (հանքային կամ ստորերկրյա ջրերի հանքավայրերի շահագործում՝ ձեռնարկատիրական նպատակով): Հանքային ջրերի արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման պայմանագրերը հրապարակվում են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կայքում<sup>16</sup>: Հանքային ջրերի արդյունահանման ծավալների և բազմաթիվ այլ ցուցանիշների վերաբերյալ տվյալները հրապարակվում են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից ամփոփ տեսքով հրապարակվող վիճակագրական հաշվետվությունների տեղեկագրերում<sup>17</sup>: Հանքային ջրերի արդյունահանման և տեղեկատվության հրապարակման հարցերը կարգավորող իրավական ակտերը ներկայացված են աղյուսակ 2.1.1-ում:

<sup>10</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docid=72865>. ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք (ընդունվել է 28 նոյեմբերի 2011թ.)

<sup>11</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docid=91594>. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 21 հունիսի 2014թ.)

<sup>12</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docid=74658>. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (ընդունվել է 05 մայիսի 1998թ.)

<sup>13</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docid=109017>. ՀՀ հարկային օրենսգիրք (ընդունվել է 10 ապրիլի 2016թ.)

<sup>14</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docid=74375>. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 27 դեկտեմբերի 1997թ.)

<sup>15</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docid=91594>. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք

<sup>16</sup> <http://www.mtad.am/hy/mtad29.29.1/>. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կայք, բնական պաշարներ, ընդերքօգտագործման իրավունք

<sup>17</sup> [https://www.armstat.am/file/article/eco\\_book\\_2019\\_5.pdf](https://www.armstat.am/file/article/eco_book_2019_5.pdf). Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2019թ., Հանքային ջրերի արդյունահանում և օգտագործում

Աղյուսակ 2.1.1

Հանքային ջրերի արդյունահանման ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտեր

Իրավական ակտի անվանումը	Ընդունման ամսաթիվը
ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք <sup>18</sup>	28 նոյեմբերի 2011թ.
ՀՀ հարկային օրենսգիրք <sup>19</sup>	4 հոկտեմբերի 2016թ.
«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք <sup>20</sup>	21 հունիսի 2014թ.
«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք <sup>21</sup>	27 դեկտեմբերի 1997թ.
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք <sup>22</sup>	18 փետրվարի 2004թ.
«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք <sup>23</sup>	11 ապրիլի 2005թ.
«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք <sup>24</sup>	17 մայիսի 2000թ.
«Ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 437-Ն որոշում <sup>25</sup>	22 մարտի 2012թ.
«Հանքային ջրերի արդյունահանման և օգտագործման մասին» ձև 1- հանքաջուր (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության խորհրդի 2015 թվականի փետրվարի 13-ի թիվ 05-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի թիվ 56-Ն որոշում <sup>26</sup>	27 դեկտեմբերի 2019թ.

**Մետաղական բնական պաշարների վերամշակում**

Էապես տարբեր է մետաղական բնական պաշարների վերամշակման ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը: Հաշվի առնելով, որ ի տարբերություն ընդերքօգտագործման ոլորտի, վերամշակման համար չի պահանջվում ստանալ հատուկ թույլտվություն կամ լիցենզիա, գործունեության այս տեսակը կարգավորվում է այլ տնտեսական գործունեության համար նախատեսված իրավական ակտերով: Խոսքը մասնավորապես վերաբերում է մթնոլորտային օդ արտանետումների կամ ջրային ռեսուրսներ արտահոսքերի, ինչպես նաև արտադրական թափոնների տեղադրման համար անհրաժեշտ թույլտվություններ ստանալուն՝ ելնելով կոնկրետ գործունեության տեսակին բնորոշ արտադրական բնութագրիչներից: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ ՇՄԱԳ-ի օրենք) համաձայն, վերամշակման ոլորտի տնտեսական գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման: Նախատեսվող գործունեության այս տեսակը համապատասխանում է ՇՄԱԳ-ի օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետին, որով

<sup>18</sup> ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք <https://www.arlis.am/documentview.aspx?docid=72865>

<sup>19</sup> ՀՀ հարկային օրենսգիրք <https://www.arlis.am/documentview.aspx?docid=109017>

<sup>20</sup> «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք <https://www.arlis.am/documentview.aspx?docid=91594>

<sup>21</sup> «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք <https://www.arlis.am/documentview.aspx?docid=74375>

<sup>22</sup> «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75264>

<sup>23</sup> «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք <https://www.arlis.am/documentview.aspx?docid=72899>

<sup>24</sup> «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք <https://www.arlis.am/documentview.aspx?docid=73114>

<sup>25</sup> «Ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 22 մարտի 2012թ. N 437-Ն որոշում <https://www.arlis.am/documentview.aspx?docid=75220>

<sup>26</sup> «Հանքային ջրերի արդյունահանման և օգտագործման մասին» ձև 1-հանքաջուր (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության խորհրդի 2015 թվականի փետրվարի 13-ի թիվ 05-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի թիվ 56-Ն որոշում <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138149>

սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության՝ «Ա» կատեգորիայի շրջանակներում նախատեսվող գործունեության տեսակները: Նշված կետի համաձայն, ընդերքօգտագործման բնագավառում այս իրավական ռեժիմով գնահատման և փորձաքննության են ենթակա մետաղական, այդ թվում՝ ռադիոակտիվ օգտակար հանածոյի արդյունահանում և (կամ) հանքաքարի, հանքանյութի վերամշակումը, ներառյալ՝ պղծամբարներ կամ պղծատարեր): Հոդվածի բովանդակությունից հետևում է, որ գործունեության այս տեսակի շրջանակներում պետք է իրականացվի նաև ընդերքօգտագործման թափոնների վերամշակման համար շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն ու փորձաքննությունը:

Նույն՝ 14-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի մեկ այլ ենթակետով սահմանված են մետաղների արտադրության և վերամշակման բնագավառում ՇՄԱԳ ենթակա գործունեության տեսակները, որոնք նույնպես դասակարգված են «Ա» կատեգորիայով: Դրանք են՝ մետաղների արտադրության և վերամշակման բնագավառում՝

- մետաղական հանքանյութերի (ներառյալ՝ սուլֆիդային հանքանյութերի) թրծում և ագլոմերացիա,
- հանքանյութից կամ խտանյութից կամ երկրորդային հումքային նյութերից գունավոր, ազնիվ, հազվագյուտ, սև մետաղների կամ դրանց համաձուլվածքների արտադրություն,
- գունավոր մետաղների մշակում, ներառյալ՝ լեգիրացումը, արտադրատեսակների ռեկուպերացիան (զտում, ձուլածագործական արտադրություն և այլն)։

Այսպիսով, ՇՄԱԳ-ի օրենքը այս ոլորտի հարաբերությունները կարգավորող առանցքային իրավական ակտերից մեկն է, որով ամրագրված է մետաղական հանքաքարի, հանքանյութի կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման համար ՇՄԱԳ-ի իրականացման իրավական ռեժիմը:

Ի տարբերություն հանքային ջրերի արդյունահանման ոլորտի, մետաղական բնական պաշարների վերամշակման ոլորտում գործունեություն իրականացնելու համար պահանջվում են համապատասխան թույլտվություններ՝ մթնոլորտային օդ արտանետումներ և ջրային ավազան արտահոսքեր իրականացնելու, արտադրական թափոններ տեղադրելու և պահելու, ինչպես նաև արտադրական առանձնահատկություններից բխող այլ գործողություններ կատարելու համար: Այս հարաբերությունները կարգավորված են տարբեր օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով: Վերամշակման ոլորտին առնչվող օրենսդրությունը ներառում է նաև տեխնիկական անվտանգության ապահովման և փորձաքննության մասին օրենսդրությունը, քանի որ վերամշակման արտադրությունը կազմակերպելու համար կառուցված շինությունները, որտեղ արտադրվում, վերամշակվում, պահվում, փոխադրվում, օգտագործվում կամ ստացվում են մետաղների հալույթներ, հանդիսանում են արտադրական վտանգավոր օբյեկտներ:

Վերամշակման ոլորտի ֆիսկալ հարաբերությունները նույնպես կարգավորվում են ընդհանուր ռեժիմով, մասնավորապես՝ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված բնապահպանական հարկի ձևավորման հարաբերությունները կանոնակարգող դրույթներով և տնտեսվարողների համար հարկման բազայի նկատմամբ հաշվարկվող ընդհանուր հարկատեսակներով և վճարներով, որոնք առավել մանրամասն կներկայացվեն հաջորդիվ: Վերամշակման ոլորտի նկատմամբ իրականացվող վարչարարությունը նույնպես կանոնակարգվում է ընդհանուր հիմունքներով: Վերամշակման ոլորտում տեղեկատվության հրապարակայնությունն ապահովվում է վիճակագրական հաշվետվություններ տրամադրելու միջոցով, որը ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից ամփոփ տեսքով ներկայացված է վիճակագրական հաշվետվությունների տեղեկագրերում, որոնց վերաբերյալ վերլուծությունը հասանելի է մյուս բաժիններում:

Վերամշակման ոլորտը կարգավորող իրավական ակտերը ներկայացված են աղյուսակ 2.1.2-ում:

Աղյուսակ 2.1 2

Վերաձևակման ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտեր

Իրավական ակտի անվանումը	Ընդունման ամսաթիվը
«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք <sup>27</sup>	21 հունիսի, 2014թ.
ՀՀ հարկային օրենսգիրք <sup>28</sup>	4 հոկտեմբերի, 2016թ.
ՀՀ ջրային օրենսգիրք <sup>29</sup>	4 հունիսի 2002թ.
«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք <sup>30</sup>	11 հոկտեմբերի 1994թ.
«Թափոնների մասին» ՀՀ օրենք <sup>31</sup>	24 նոյեմբերի 2004թ.
«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենք <sup>32</sup>	24 հոկտեմբերի 2005թ.
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք <sup>33</sup>	18 փետրվարի, 2004թ.
«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք <sup>34</sup>	11 ապրիլի, 2005թ.
«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք <sup>35</sup>	17 մայիսի, 2000թ.
«Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՀ օրենք <sup>36</sup>	21 մարտի 2018թ.
«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենք <sup>37</sup>	24 նոյեմբերի 2004թ.
«Թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի, չմշակված թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից ջարդոնի և թափոնների, թանկարժեք մետաղներից հանքանյութերի և խտանյութերի ու թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքների՝ Հայաստանի Հանրապետության տարածքից երրորդ երկրներ արտահանումը և Հայաստանի Հանրապետության տարածք երրորդ երկրներից ներմուծումը կանոնակարգելու մասին» ՀՀ կառավարության N 83-Ն որոշում <sup>38</sup>	30 հունվարի 2015թ.
«Տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 1359-Ն որոշում <sup>39</sup>	22 սեպտեմբերի 2011թ.
«Մթնոլորտ արտանետումների կազմի նորմերն ու հսկման մեթոդները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007	14 սեպտեմբերի 2017թ.

<sup>27</sup> «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք <https://www.arlis.am/documentview.aspx?docid=91594>

<sup>28</sup> ՀՀ հարկային օրենսգիրք <https://www.arlis.am/documentview.aspx?docid=109017>

<sup>29</sup> ՀՀ ջրային օրենսգիրք <https://www.arlis.am/documentview.aspx?docid=71621>

<sup>30</sup> «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք <https://www.arlis.am/documentview.aspx?docID=71305>

<sup>31</sup> «Թափոնների մասին» ՀՀ օրենք <https://www.arlis.am/documentview.aspx?docid=1722>

<sup>32</sup> «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենք <https://www.arlis.am/documentview.aspx?docID=65225>

<sup>33</sup> «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75264>

<sup>34</sup> «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք <https://www.arlis.am/documentview.aspx?docid=72899>

<sup>35</sup> «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք <https://www.arlis.am/documentview.aspx?docid=73114>

<sup>36</sup> «Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՀ օրենք <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120755>

<sup>37</sup> «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենք <https://www.arlis.am/documentview.aspx?docid=75239>

<sup>38</sup> «Թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի, չմշակված թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից ջարդոնի և թափոնների, թանկարժեք մետաղներից հանքանյութերի և խտանյութերի ու թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքների՝ Հայաստանի Հանրապետության տարածքից երրորդ երկրներ արտահանումը և Հայաստանի Հանրապետության տարածք երրորդ երկրներից ներմուծումը կանոնակարգելու մասին» ՀՀ կառավարության 30 հունվարի 2015թ. N 83-Ն որոշում <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=95623>

<sup>39</sup> «Տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 22 սեպտեմբերի, 2011թ. N 1359-Ն որոշում <https://www.arlis.am/documentview.aspx?docID=71187>

Իրավական ակտի անվանումը	Ընդունման ամսաթիվը
թվականի հունվարի 11-ի N 67-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 1120-Ն որոշում <sup>40</sup>	
«Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի մարտի 30-ի N 192 և 2008 թվականի օգոստոսի 21-ի N 953-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության N 1673-Ն որոշում <sup>41</sup>	27 դեկտեմբերի 2012թ.
«Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 160-Ն որոշում <sup>42</sup>	2 փետրվարի 2006թ.
«Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 91-Ն որոշում <sup>43</sup>	25 հունվարի 2005թ.
«Ջրօգտագործման թույլտվության օրինակելի ձևաթուղթը և ջրօգտագործման թույլտվության ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 218-Ն որոշում <sup>44</sup>	7 մարտի 2003թ.
«Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 75-Ն որոշում <sup>45</sup>	27 հունվարի 2011թ.
«Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 1110-Ն որոշում <sup>46</sup>	14 օգոստոսի 2003թ.
«Թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծերի հաստատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 2291-Ն որոշում <sup>47</sup>	9 դեկտեմբերի 2005թ.

<sup>40</sup> «Մթնոլորտ արտանետումների կազմի նորմերն ու հսկման մեթոդները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 11-ի N 67-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 14 սեպտեմբերի, 2017թ. 1120-Ն որոշում <https://www.arlis.am/documentview.aspx?docid=116007>

<sup>41</sup> «Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի մարտի 30-ի N 192 և 2008 թվականի օգոստոսի 21-ի N 953-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 27 դեկտեմբերի 2012թ. N 1673-Ն որոշում <https://www.arlis.am/documentview.aspx?docid=80624>

<sup>42</sup> «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2 փետրվարի 2006թ. N 160-Ն որոշում <https://www.arlis.am/documentview.aspx?docid=73837>

<sup>43</sup> «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 25 հունվարի 2005թ. N 91-Ն որոշում <https://www.arlis.am/documentview.aspx?docid=13400>

<sup>44</sup> «Ջրօգտագործման թույլտվության օրինակելի ձևաթուղթը և ջրօգտագործման թույլտվության ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 7 մարտի 2003թ. N 218-Ն որոշում <https://www.arlis.am/documentView.aspx?docid=117800>

<sup>45</sup> «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 27 հունվարի 2011թ. N 75-Ն որոշում <https://www.arlis.am/documentview.aspx?docID=65705>

<sup>46</sup> «Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2003թ. N 1110-Ն որոշում <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=55551>

<sup>47</sup> «Թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծերի հաստատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 9 դեկտեմբերի 2005թ. N 2291-Ն որոշում <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=21727>

Իրավական ակտի անվանումը	Ընդունման ամսաթիվը
«Բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկի ներկայացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 1291-Ն որոշում <sup>48</sup>	5 հոկտեմբերի 2017թ.
«Վիճակագրական տեղեկությունների հավաքագրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2003 թվականի հոկտեմբերի 03-ի թիվ 11-Ն և 2010 թվականի մայիսի 12-ի թիվ 12-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի թիվ 05-Ն որոշում <sup>49</sup>	20 հունիսի 2016թ.

## 2.2. Վճարվող հարկատեսակները

### Հանքային ջրերի արդյունահանում

Հանքային ջրերի արդյունահանման գործունեությամբ զբաղվող տնտեսվարողները վճարում են ՀՀ հարկային օրենսգրքի 6-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված հետևյալ հարկատեսակները և վճարի տեսակները<sup>50</sup>

- շահութահարկ
- եկամտային հարկ
- ավելացված արժեքի հարկ
- տեղական հարկեր (անշարժ գույքի հարկ, փոխադրամիջոցների գույքահարկ)
- մաքսատուրք
- բնօգտագործման վճար
- պետական տուրք

Անհրաժեշտ է նշել նաև, որ հանքային ջրերի արդյունահանմամբ զբաղվող հարկ վճարողները՝ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված պայմանները բավարարելու դեպքում կարող են գործել նաև շրջանառության հարկի կամ միկրոձեռնարկատիրության հարկման համակարգում:

ՀՀ հարկային օրենսգրքի 198-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանում իրականացնող ընդերքօգտագործողները (այդ թվում՝ արտադրված ածխաթթու գազի համար), համարվում են ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման համար բնօգտագործման վճար վճարողներ: Նույն օրենսգրքի 200-րդ հոդվածի համաձայն, բնօգտագործման վճարի օբյեկտ է հանդիսանում ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանումը (այդ թվում՝ ածխաթթու գազի արտադրությունը): Բնօգտագործման վճարի բազա է համարվում՝

- արդյունահանված հանքային ջրի փաստացի ծավալը՝ հորատանցքից (աղբյուրից) երկրի մակերևույթ դուրս եկած (արտամղված) ջրի ծավալը,

<sup>48</sup> «Բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկի ներկայացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 5 հոկտեմբերի 2017թ. N 1291-Ն որոշում <https://www.arlis.am/documentview.aspx?docID=116476>

<sup>49</sup> «Վիճակագրական տեղեկությունների հավաքագրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2003 թվականի հոկտեմբերի 03-ի թիվ 11-Ն և 2010 թվականի մայիսի 12-ի թիվ 12-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 20 հունիսի 2016թ. թիվ 05-Ն որոշում <https://www.arlis.am/documentview.aspx?docid=107397>

<sup>50</sup> ՀՀ հարկային օրենսգրքի, ընդունված 4 հոկտեմբերի 2016թ.

- եթե ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանմանը զուգահեռ իրականացվում է նաև ածխաթթու գազի արտադրություն, ապա ածխաթթու գազի արտադրության համար բնօգտագործման վճարի բազա է համարվում արտադրված ածխաթթու գազի փաստացի ծավալը:

Նույն օրենսգրքի 206-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված են հանքային ջրերի արդյունահանման համար բնօգտագործման վճարի դրույքաչափերը, համաձայն որի՝ հանքային ջրի արդյունահանված պաշարների համար բնօգտագործման վճարը հաշվարկվում է բնօգտագործման վճարի բազայի նկատմամբ հետևյալ դրույքաչափերով (Աղյուսակ 2.2.1):

*Աղյուսակ 2.2.1*

*Արդրերկրյա հանքային ջրերի արդյունահանման համար բնօգտագործման վճարի դրույքաչափերը*

Հանքային ջրի արդյունահանման նպատակը (նշանակությունը)	Դրույքաչափը՝ հաշվետու ժամանակաշրջանում արդյունահանված յուրաքանչյուր խորանարդ մետրի համար (դրամ)
Արդյունաբերական նպատակով	5,650
Բուժական նպատակով, այդ թվում	
ա. բալնեոբուժման (լոգանքներ, ցնցուղ, հիդրոմեթոդ, հոգնա, խմելու միջոցով և այլն) համար	300
բ. ընկալարահներում օգտագործման համար	0
Ածխաթթու գազ ստանալու նպատակով	230
Ռեկրեացիոն (այդ թվում՝ հանգստի նպատակով լողավազաններում օգտագործելու) նպատակով	75

Աղբյուրը. ՀՀ հարկային օրենսգիրք<sup>51</sup>

Արտադրված ածխաթթու գազի համար բնօգտագործման վճարը հաշվարկվում է բնօգտագործման վճարի բազայի նկատմամբ հետևյալ դրույքաչափերով (Աղյուսակ 2.2.2)՝

*Աղյուսակ 2.2.2*

*Արտադրված ածխաթթու գազի համար բնօգտագործման վճարի դրույքաչափերը՝ բնօգտագործման վճարի բազայի նկատմամբ՝*

Հանքավայր	Դրույքաչափը՝ արտադրված ածխաթթու գազի յուրաքանչյուր խորանարդ մետրի համար (դրամ)
«Ջերմուկ» հանքավայր	60
«Արզնի» հանքավայր	70
«Հանքավան» հանքավայր	60
«Բջնի» հանքավայր	55
«Լիճք» հանքավայր	45
«Սուլակ» հանքավայր	45
«Քարաշամբ» հանքավայր	60
«Արզական» հանքավայր	115
«Սայաթ-Նովա» հանքավայր	115
Այլ հանքավայրեր	45

Աղբյուրը. ՀՀ հարկային օրենսգիրք<sup>52</sup>

<sup>51</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=153241>, ՀՀ Հարկային օրենսգիրք, Բաժին 10, Գլուխ 40, Հոդված 206, Կետ 1

<sup>52</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=153241>, ՀՀ Հարկային օրենսգիրք, Բաժին 10, Գլուխ 40, Հոդված 206, Կետ 2



ՀՀ հարկային օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ բնօգտագործման վճարի բազայի չափաքանակները գերազանցելու դեպքում՝ նույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված յուրաքանչյուր նպատակով ջրօգտագործման՝ չափաքանակները գերազանցող փաստացի օգտագործված ջրի ծավալների համար, որպես դրույքաչափ, կիրառվում է նույն մասերով սահմանված դրույքաչափերի եռապատիկ մեծությունը:

ՀՀ հարկային օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ բնօգտագործման վճարի բազայի գրոյական չափաքանակների դեպքում՝ նույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված յուրաքանչյուր նպատակով փաստացի օգտագործված ջրի ծավալների համար, որպես դրույքաչափ, կիրառվում է նույն մասերով սահմանված դրույքաչափի՝

1. տասնապատիկը՝ Հայաստանի Հանրապետության Արարատի և Արմավիրի մարզերում.
2. հնգապատիկը՝ Հայաստանի Հանրապետության մյուս տարածքներում:

Մինչև նույն ժամանակ, ՀՀ հարկային օրենսգրքի 206-րդ հոդվածի համաձայն՝ 2018թ. հունվարի 1-ից ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման համար կիրառվող բնօգտագործման վճարի դրույքաչափերը որոշվում են որպես 2.2.1 և 2.2.2 աղյուսակներում ներկայացված դրույքաչափերի և 1.1 գործակցի արտադրյալ, 2019թ. հունվարի 1-ից՝ որպես այդ դրույքաչափերի և 1.2 գործակցի արտադրյալ, իսկ 2020թ. հունվարի 1-ից՝ որպես այդ դրույքաչափերի և 1.3 գործակցի արտադրյալ:

Հանքային ջրերի արդյունահանման ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարողները վճարում են նաև պետական տուրք՝ տարեկան բազային տուրքի 5000-ապատիկի չափով, որը սահմանված է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19.4-րդ հոդվածով<sup>53</sup> և նույն դրույքաչափերով նախատեսում է պետական տուրքի վճարման պարտավորություն՝ հանքային ջրերի յուրաքանչյուր հանքավայրի կամ հանքահորի՝

- արդյունաբերական (շապցման) նպատակով օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար,
- արդյունաբերական (ածխաթթու գազ ստանալու) նպատակով օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար,
- բուժական (ռեկրեացիոն) նպատակներով օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար:

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում կատարված փոփոխությունների համաձայն, մեկից ավելի արդյունահանման նպատակ ունեցող հանքային ջրի արդյունահանման թույլտվության դեպքում թույլտվության տրամադրման համար պետական տուրքի դրույքաչափը հաշվարկվում է «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նպատակների դրույքաչափերի հանրագումարով<sup>54</sup>:

### **Մետաղական բնական պաշարների վերամշակում**

Վերամշակման գործունեությամբ զբաղվող տնտեսվարողները վճարում են ՀՀ հարկային օրենսգրքի 6-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված հետևյալ հարկատեսակները և վճարի տեսակները՝

- շահութահարկ
- եկամտային հարկ
- ավելացված արժեքի հարկ

<sup>53</sup> «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, ընդունված 27 դեկտեմբերի 1997թ.

<sup>54</sup> <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=7607&lang=arm>, «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք (ՀՕ 172-Ն, ընդունվել է 14 ապրիլի 2021թ.)

- բնապահպանական հարկ
- տեղական հարկեր (անշարժ գույքի հարկ, փոխադրամիջոցների գույքահարկ)
- մաքսատուրք
- բնօգտագործման վճար (ռոյալթի)

Ինչպես հանքային ջրերի արդյունահանման դեպքում, մետաղական օգտակար հանածոների վերամշակմամբ զբաղվող հարկ վճարողները նույնպես կարող են գործել նաև շրջանառության հարկի կամ միկրոձեռնարկատիրության հարկման համակարգում՝ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված պայմանները բավարարելու դեպքում: Մետաղական օգտակար հանածոների վերամշակմամբ զբաղվող հարկ վճարողները նույնպես ոչ բոլոր դեպքերում են հանդիսանում վերը նշված հարկերը կամ վճարները վճարող:

ՀՀ հարկային օրենսգրքի 198-րդ հոդվածի համաձայն, ռոյալթի վճարողներ են համարվում՝

1. Հայաստանի Հանրապետության մետաղական օգտակար հանածոների հանքավայրեր շահագործող և մետաղի խտանյութ կամ ձուլվածք կամ հանքաքարի, խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ցանկացած արտադրանք արտադրող հանդիսացող կազմակերպությունները,
2. Հայաստանի Հանրապետության մետաղական օգտակար հանածոների հանքավայրեր շահագործող և այդ հանքավայրերից արդյունահանված մետաղական օգտակար հանածոներից առանց խտանյութի ստացման ցանկացած արտադրանք արտադրող հանդիսացող կազմակերպությունները,
3. ընդերքօգտագործման թափոններից և (կամ) հանքաքարից մետաղի խտանյութ և (կամ) ձուլվածք կամ ընդերքօգտագործման թափոնների, հանքաքարի, խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ցանկացած արտադրանք արտադրող հանդիսացող կազմակերպությունները՝ անկախ մետաղական օգտակար հանածոյի հանքավայր շահագործող հանդիսանալուց:

Հետևապես, ՀՀ հարկային օրենսգրքի վերը նշված կարգավորման ներքո գործունեություն իրականացնող վերամշակողները նույնպես ռոյալթի վճարողներ են:

Ինչպես մետաղական օգտակար հանածոների արդյունահանման, այնպես էլ դրանց վերամշակման համար ռոյալթի օբյեկտ է համարվում արդյունահանված մետաղական օգտակար հանածոների կամ հանքաքարի կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի օտարումը: Ռոյալթի բազա է համարվում հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված խտանյութի, խտանյութի փոխարեն կամ առանց խտանյութի ստացման ձուլվածքի կամ ընդերքօգտագործման թափոնների, հանքաքարի, խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ստացված ցանկացած վերջնական արտադրանքի (այսուհետ՝ սույն բաժնում խտանյութի հետ միասին՝ արտադրանք) իրացման շրջանառությունը: Իրացման շրջանառության որոշման նպատակով, առանց խտանյութի ստացման հանքաքարի վերամշակումից հետո ստացվող ցանկացած արտադրանքի ֆիզիկական ծավալ է համարվում դրանում պարունակվող մետաղի փաստացի քանակությունը՝ գրամներով կամ տոննաներով: Վերամշակողը կարող է ռոյալթի վճարող համարվել այն դեպքում, երբ միաժամանակ հանդիսանում է նաև արդյունահանող:

Առանձին կարգավորման ռեժիմ է սահմանված ընդերքօգտագործման թափոնների վերամշակման հարցում: Չնայած Հայաստանում դեռևս չկա ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նախադեպ, սակայն գործող օրենսդրության համաձայն, դրանց վերամշակման արդյունքում ստեղծվող արտադրանքի իրացման շրջանառությունից նույնպես առաջանալու է ռոյալթի վճարելու պարտավորություն: Այսինքն, այս դեպքում ռոյալթի վճարելու պարտավորությունն առաջանում է, եթե ընդերքօգտագործման թափոններում պարփակված մետաղական օգտակար հանածոների դիմաց դեռևս վճարված չէ ռոյալթի:

### 2.3. Թույլտվությունների տրամադրման և պայմանագրերի կնքման ընթացակարգեր (2.2, 2.3 և 2.4 պահանջներ)

#### Հանքային ջրերի արդյունահանում

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն, հանքային ջրերը հանդիսանում են օգտակար հանածո, և դրանց արդյունահանման կամ այդ նպատակով երկրաբանական ուսումնասիրությունների համար տրամադրվում է ընդերքօգտագործման իրավունք: Հանքային ջրերի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման համար գործում է նույն իրավական ռեժիմը, որը սահմանված է նույն օրենսգրքով ընդերքօգտագործման համար սահմանված կարգավորումներով: Այնուհանդերձ, հանքային ջրերի պարագայում կան որոշակի առանձնահատկություններ: Մասնավորապես, հանքային ջրերի արդյունահանման համար չի իրականացվում լեռնահատկացում, ինչը նշանակում է, որ հանքային ջրերի պարագայում լեռնահատկացման ակտն ընդերքօգտագործման իրավունքի բաղկացուցիչ մաս չի :

Հանքային ջրերի արդյունահանման ոլորտում ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման առանձնահատկություններից է այն, որ ի տարբերություն մետաղական օգտակար հանածոների արդյունահանման իրավական ռեժիմի, հանքային ջրերի պարագայում մեկ հորատանցքից կարող են օգտվել մեկից ավելի ընդերքօգտագործողներ, ինչն ամրագրված է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 23)-րդ կետով: Հետևապես, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի համաձայն՝ արդյունահանման իրավունք ստացած անձը պարտավոր է նաև երաշխավորել հանքային ջրի հանքավայրի նույն հորատանցքից կամ աղբյուրից այլ ընդերքօգտագործողի կողմից արդյունահանման աշխատանքների անարգել իրականացումը: Նշված երաշխիքի ապահովման մեխանիզմն օրենսգրքով սահմանված չէ:

Հանքային ջրերի արդյունահանման հետ կապված որոշ առանձնահատկություններ կարգավորված են նաև ՀՀ հարկային օրենսգրքով: ՀՀ հարկային օրենսգրքի 212-րդ հոդվածի համաձայն, բնօգտագործման վճար վճարողները ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանված պաշարների հաշվառման նպատակով ՀՀ կառավարության սահմանած կարգով՝

1. միայն մեկ նպատակով հանքային ջրի հորատանցքը (աղբյուրը) շահագործելիս՝ անմիջապես հորատանցքի (աղբյուրի) վրա տեղադրված գազանջատիչից դուրս եկող ջրախողովակի (այսուհետև՝ առաջնային խողովակ) վրա տեղադրում են ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքեր,
2. միաժամանակ մեկից ավելի նպատակներով հանքային ջրի հորատանցքը (աղբյուրը) շահագործելիս՝ առաջնային խողովակին միացված հանքային ջրի օգտագործման յուրաքանչյուր նպատակի համար առանձնացված յուրաքանչյուր խողովակի վրա տեղադրում են ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքեր,
3. ածխաթթու գազ ստանալու նպատակով գազանջատիչից դուրս եկող գազի խողովակի վրա ածխաթթու գազ ստանալու սարք (սարքեր) տեղադրված կամ միացված լինելու դեպքում մինչև ածխաթթու գազ ստանալու սարքն ընկած հատվածում տեղադրում են գազաչափ: Սույն մասում նշված ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերը և գազաչափերը ՀՀ կառավարության սահմանած կարգով ենթակա են կնքման նույն կարգով սահմանված լիազոր պետական մարմինների կողմից: Արդյունահանված պաշարների ծավալների վերաբերյալ տվյալները ՀՀ կառավարության սահմանած կարգով ու ժամկետներում արձանագրվում են հարկային մարմնի և բնօգտագործման վճար վճարողի ներկայացուցիչների համատեղ ակտով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հանքային ջրերի արդյունահանումը հանդիսանում է ՇՄԱԳ-ի գնահատման և

փորձաքննության ենթակա գործունեություն: ՇՄԱԳ-ի գործընթացը նախատեսվում է իրականացնել «Ա» կատեգորիայի իրավական ռեժիմով (հանքային կամ ստորերկրյա ջրերի հանքավայրերի շահագործում՝ ձեռնարկատիրական նպատակով):

Հանքային ջրերի արդյունահանման համար ընդերքօգտագործողի և պետական լիազոր մարմնի (ՏԿԵՆ) միջև կնքվում է ընդերքօգտագործման պայմանագիր, որի համար կիրառվում է ՀՀ կառավարության կողմից հաստատված՝ ընդերքօգտագործման պայմանագրի օրինակելի ձևը<sup>55</sup> իր հավելվածներով: Ինչպես նշվեց, հանքային ջրերի արդյունահանման ոլորտում տրամադրված ընդերքօգտագործման պայմանագրերը հրապարակվում են ՏԿԵՆ-ի կայքում<sup>56</sup>: Հրապարակված են 36 ընդերքօգտագործման պայմանագրեր, որոնք կնքված են, հիմնվելով ընդերքօգտագործման պայմանագրի օրինակելի ձևանմուշի վրա:

ՏԿԵՆ-ի կայքում հրապարակված վերջին տվյալների համաձայն՝ 2021թ. ապրիլի 1-ի դրությամբ առկա են ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման նպատակով տրամադրված 36 ընդերքօգտագործման իրավունքներ<sup>57</sup>: Հրապարակված տվյալները պարունակում են թույլտվություն ստացած՝

- իրավաբանական անձի անվանումը,
- գործունեության իրականացման վայրի հասցեն,
- թույլտվության համարը, տրման ամիսը, ամսաթիվը և տարին,
- գործողության ժամկետի ավարտը,
- պայմանագրի ամիսը, ամսաթիվը և տարին,
- արդյունահանման նպատակը,
- ծանոթագրություն (իրավաբանական անձի անվանափոխության և համանման հարցերի համար):

### Մետաղական բնական պաշարների վերամշակում

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի իմաստով, մետաղական բնական պաշարների վերամշակման գործունեությունը չի համարվում «ընդերքօգտագործում», եթե ընդերքօգտագործման նախագծին համապատասխան՝ ընդերքից արդյունահանման և վերամշակման շղթայի մաս չի կազմում: Հետևապես, ինչպես նշվեց իրավական շրջանակը ներկայացնող բաժնում, վերամշակման ոլորտը հատուկ թույլտվություն կամ լիցենզիա պահանջող գործունեության տեսակ չէ: Այս կարգավորումներից բխում է, որ վերամշակման համար ընդերքօգտագործման հարաբերությունները կարգավորող օրենսդրության պահանջները կիրառելի են միայն այն տնտեսվարողների նկատմամբ, որոնք մետաղների վերամշակումն իրականացնելուն զուգահեռ անմիջականորեն մետաղական օգտակար հանածոյի արդյունահանողներ կամ ընդերքօգտագործման թափոններ վերամշակողներ են:

Այն դեպքում, երբ վերամշակումն իրականացվում է ընդերքօգտագործման իրավունք չունեցող տնտեսվարողների կողմից, պահանջվում է ստանալ միայն այնպիսի թույլտվություններ, որոնք ՀՀ օրենսդրության համաձայն անհրաժեշտ են տվյալ տեսակի գործունեության համար:

<sup>55</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docid=75220>. «Ընդերքօգտագործման պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 22 մարտի 2012թ. N 437-Ն որոշում

<sup>56</sup> <http://mtad.am/hy/mtad01.07.2/>. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կայք, Տեղեկատվություն 30.06.2021թ. դրությամբ ածխաթթվային ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների մասին և հրապարակված ընդերքօգտագործման պայմանագրեր

<sup>57</sup> [http://www.mtad.am/u\\_files/file/2021-ynderq/28-4Hanqayinlrer\\_cucak.pdf](http://www.mtad.am/u_files/file/2021-ynderq/28-4Hanqayinlrer_cucak.pdf). Տեղեկատվություն 01.04.2021թ. դրությամբ ածխաթթվային ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների մասին

Մասնավորապես, վերամշակող ոլորտի համար, որպես կանոն, պահանջվում են մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման, արտադրական թափոնների տեղադրման և/կամ պահման, ջրօգտագործման թույլտվություններ: Ելնելով արտադրական առանձնահատկություններից, կարող է պահանջվել ջրային ավազանն աղտոտող նյութերի արտահոսքի թույլտվություն: Նշված թույլտվություններից յուրաքանչյուրի ստացման համար սահմանված են օրենսդրական կարգավորումներ: Թույլտվությունների ստացման հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի ցանկը ներկայացված է Աղյուսակ 2.1.2-ում:

Եթե գործունեության տեսակն ընդգրկված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված գործունեության տեսակների մեջ, ապա անհրաժեշտ է իրականացնել ՇՄԱԳ-ի փորձաքննություն և ստանալ դրական փորձաքննական եզրակացություն: ՇՄԱԳ-ի փորձաքննությունն իրականացնում և փորձաքննական եզրակացություն է տրամադրում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կազմում գործող՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ը: Փորձաքննական եզրակացությունը հաստատվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարի կողմից: Որպես արտադրական վտանգավոր օբյեկտ, վերամշակման արտադրությունը կազմակերպելու համար կառուցված շինությունների համար պահանջվում է ստանալ նաև տեխնիկական անվտանգության փորձաքննության դրական եզրակացություն: Տեխնիկական անվտանգության փորձաքննությունը հաստատվում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կազմում գործող՝ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի կողմից:

Ի թիվս նշված փաստաթղթերի՝ մետաղական օգտակար հանածոների վերամշակմամբ զբաղվող տնտեսվարողների համար կարող է անհրաժեշտություն առաջանալ ստանալու նաև այլ թույլտվություններ: Այդ թույլտվությունների ստացման անհրաժեշտությունը պայմանավորված է գործունեության առանձնահատկություններով: Մասնավորապես, եթե գործունեությունը ենթադրում է թափոնների գոյացում, որոնք պետք է տեղադրվեն երկրի մակերևույթի վրա (փորվածքներում, պոչամբարներում և այլն), ապա դրա համար տնտեսվարողը պետք է սահմանված կարգով ստանա նաև թափոնների տեղադրման թույլտվություն<sup>58</sup>: Եթե գործունեության իրականացումը զուգորդվելու է մթնոլորտային օդ արտանետումներով՝ համապատասխանաբար պետք է ստանալ այդպիսի արտանետումներ կատարելու համար թույլտվություն՝ ըստ սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների: Գործունեության ընթացքում ջրօգտագործում իրականացնելու համար պահանջվում է սահմանված կարգով ստանալ ջրօգտագործման թույլտվություն: Վերը թվարկված բոլոր թույլտվությունները տրամադրվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից: Համապատասխան գործունեության իրականացման համար կարող են պահանջվել նաև այլ թույլտվություններ՝ ելնելով գործունեության առանձնահատկություններից:

## 2.4. Իրական սեփականատերերը (2.5 պահանջ)

Հանքային ջրերի արդյունահանման և մետաղական բնական պաշարների վերամշակման ոլորտներում իրական սեփականատերերի բացահայտման հարցերի իրավական կարգավորումները տրվելու են նոր մեխանիզմով, որոնք վերաբերում են ոչ միայն ընդերքօգտագործողներին, այլև մյուս բոլոր տնտեսվարողներին: ՀՀ Ազգային ժողովը 2021թ. հունիսի 3-ին ընդունել է օրենքների փաթեթ, որով ընդլայնվում է իրական շահառուների բացահայտման պարտավորություն ունեցող կազմակերպությունների շրջանակը<sup>59</sup>: Նշված

<sup>58</sup> «Թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծերի հաստատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 09 դեկտեմբերի 2005թ. N 2291-Ն որոշում

<sup>59</sup>

[https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5](https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5)

փոփոխություններով, «իրական սեփականատեր» եզրույթը փոխարինվում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված «իրական շահառու» եզրույթով: Կատարվել են նաև փոփոխություններ իրական շահառու հանդիսանալու իրավական հիմքերի ձևակերպումներում:

Նշված փոփոխություններով սահմանված՝ իրական շահառուների բացահայտման պահանջը տարբեր իրավաբանական անձանց համար ուժի մեջ է մտնում տարբեր ժամանակահատվածներում: Մասնավորապես՝

- հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող, ինչպես նաև տեսալսողական մեդիածառայություն մատուցող իրավաբանական անձանց համար իրական շահառուների բացահայտման պարտականությունները ծագում են 2021թ. սեպտեմբերի 1-ից,
- հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում չներգրավված՝ այլ իրավաբանական անձանց համար իրական շահառուների բացահայտման պարտականությունները ծագում են 2022թ. հունվարի 1-ից,
- միայն ֆիզիկական անձ մասնակիցներ ունեցող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպությունների համար իրական շահառուների բացահայտման պարտականությունները ծագում են 2023թ. հունվարի 1-ից:

Այսպիսով, հանքային ջրերի արդյունահանման և մետաղական բնական պաշարների վերամշակման ոլորտում իրական շահառուների բացահայտման վերաբերյալ իրավական դաշտը գնահատելիս անհրաժեշտ է առաջնորդվել օրենսդրական կարգավորումներում տեղի ունեցող զարգացումներով, որոնց արդյունքում բացահայտման ենթակա են Հայաստանում գործունեություն իրականացնող բոլոր իրավաբանական անձանց իրական շահառուները:

## 2.5. Հանքաքարի և խտանյութի առք ու վաճառքով զբաղվող տեղական կազմակերպությունների (այսուհետ՝ առք ու վաճառքով զբաղվող կազմակերպություն) գործունեությունը կարգավորող օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտը

Առք ու վաճառքով զբաղվող կազմակերպությունների գործունեությունը կարգավորող օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտը բավական բազմաշերտ է, և ընդգրկում է ոչ միայն ներպետական, այլև մաքսային միության շրջանակներում գործող իրավակարգավորումներ: Իրավական և ինստիտուցիոնալ առումով առկա է տարբերակված մոտեցում թանկարժեք մետաղների և ոչ թանկարժեք մետաղների առք ու վաճառքը կարգավորող հարաբերություններում: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունում թանկարժեք մետաղների, չմշակված թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից ջարդոնի և թափոնների, թանկարժեք մետաղներից հանքանյութերի և խտանյութերի ու թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքների արտահանման և ներմուծման համար սահմանված է մանրակրկիտ իրավական կարգավորում<sup>60</sup>: Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխելիս նշված ապրանքատեսակներից շատերի համար նախատեսված են

[%A5%D6%80/2021/06/23/%D5%88%D5%BE-%D5%A7-%D5%AB%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B7%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BC%D5%B8%D6%82%D5%B6/108/](#) ԱՃԹՆ կայք

<sup>60</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=97322>. «Թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի, չմշակված թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից ջարդոնի և թափոնների, թանկարժեք մետաղներից հանքանյութերի և խտանյութերի ու թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքների՝ Հայաստանի Հանրապետության տարածքից երրորդ երկրներ արտահանումը և Հայաստանի Հանրապետության տարածք երրորդ երկրներից ներմուծումը կանոնակարգելու մասին» ՀՀ կառավարության 30 հունվարի 2015թ. N 83-Ն որոշում

սահմանափակումներ<sup>61</sup>, մաքսային սահմանով դրանց տեղափոխման համար պահանջվում է լիցենզիա: Լիցենզավորումն իրականացվում է համաձայն ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 83-Ն որոշման, 2014թ. մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի N7 հավելվածով հաստատված՝ «Երրորդ երկրների առնչությամբ ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» արձանագրության դրույթների, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդունված այլ որոշումների<sup>62</sup>: Թանկարժեք մետաղներ պարունակող ապրանքների ցանկում<sup>63</sup> առանձնացված են նաև այնպիսիք, որոնց արտահանման համար լիցենզիա չի պահանջվում:

Այն մետաղների ներմուծման և արտահանման համար, որոնք ընդգրկված չեն թանկարժեք մետաղներ պարունակող ապրանքների ցանկում, չեն պահանջվում հատուկ ընթացակարգեր: Դրանց ներմուծման և արտահանման համար գործում է ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված՝ ընդհանուր ֆիսկալ ռեժիմը: Մասնավորապես, ներքին շուկայում վաճառք իրականացնելու դեպքում, իրացման շրջանառությունից հաշվարկվում և վճարվում է ռոյալթի, ինչպես նաև ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված մյուս ընդհանուր հարկատեսակները (շահութահարկ, ԱԱՀ և այլն՝ ըստ արտադրական առանձնահատկությունների): Նշված ապրանքների վերավաճառքի դեպքում նույնպես գոյանում են ընդհանուր հարկային պարտավորություններ՝ բացառությամբ ռոյալթի: Ոչ թանկարժեք մետաղների ներմուծման և արտահանման համար լիցենզիա չի պահանջվում: Հարկ է նշել նաև որ ռոյալթի վճարողներն արդեն իսկ ԱՃԹՆ-ի շրջանակում հաշվետու մասնակիցներ են, և վերջիններիս վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտվում է ԱՃԹՆ-ի զեկույցներում:

Այս գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի նույնականացման հիմնական ցուցանիշը տնտեսական գործունեության տեսակի դասիչներն են, որոնցով հնարավոր է ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից ձեռք բերել տեղեկատվություն՝ Հայաստանում առք ու վաճառքով զբաղվող կազմակերպությունների մասին: Նույնականացման հիմք կարող են ծառայել նաև Պետական եկամուտների կոմիտեին ներկայացված հարկային հաշվետվությունները՝ գնահատելու համար հարկային ռեժիմը, որով աշխատում են տվյալ տնտեսվարողները: ՀՀ վիճակագրական կոմիտեին նույնպես չեն ներկայացվում ապաագրեգացված տվյալներ մետաղական հանքաքարի և խտանյութի առքի և վաճառքի վերաբերյալ: Այս տեսակի գործունեությամբ զբաղվող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը չունեն վճարված հարկերի և այլ վճարների վերաբերյալ առանձին ձևաթղթով հրապարակային հաշվետվություններ ներկայացնելու պարտավորություն:

Հետևապես, առկա իրավական կարգավորումների և տեղեկատվական բազաների հիման վրա գործնականում հնարավոր չէ ստանալ այս ապրանքների առք ու վաճառքով զբաղվող տնտեսվարողների գործունեության վերաբերյալ տեղեկատվություն, որը կհամապատասխանի ԱՃԹՆ-ի ստանդարտով պահանջվող տվյալների թափանցիկությանը:

<sup>61</sup> Հավելվածներ N 3 և 5 ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 83-Ն որոշման

<sup>62</sup> ՀՀ էկոնոմիկայի նախարարության կայք <https://mineconomy.am/page/310>

<sup>63</sup> «Թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի, չմշակված թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից ջարդոնի և թփոնների թանկարժեք մետաղներից հանքանյութերի և խտանյութերի ու թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքների» Հայաստանի Հանրապետության տարածքից երրորդ երկրներ արտահանումը և Հայաստանի Հանրապետության տարածք երրորդ երկրներից ներմուծումը կանոնակարգելու մասին ՀՀ կառավարության 30 հունվարի 2015թ. N 83-Ն որոշում <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=97322>

### 3. Ոլորտներից պետության ստացած եկամուտները և դրանց բաշխումը



### 3.1. Ոլորտների ընկերություններից մուտքերը պետական բյուջե (պահանջ 4.1)

ԱՃԹՆ-ի հիմնարար բաղադրիչն է արդյունահանող ոլորտից եկամուտների և վճարների բացահայտումը: Բոլոր անդամ երկրները պարտավոր են բացահայտել տեղեկատվություն արդյունահանող ընկերությունների կողմից վճարված հարկերի և վճարների վերաբերյալ, և այս տեղեկատվությունը պետք է լինի համակողմանի, այսինքն պետք է ներկայացնի բնական պաշարների օգտագործումից ստացված ընդհանուր եկամուտների ամբողջական պատկերը:

Ըստ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ ստորերկրյա հանքային ջրեր արդյունահանող և մետաղական բնական պաշարների վերամշակմամբ զբաղվող ընկերությունների կողմից 2018 և 2019թթ. ընթացքում պետական բյուջե վճարվել են հետևյալ հարկատեսակները և պետական տուրքերը.

#### Աղյուսակ 3.1.1

2018 և 2019թթ. ընթացքում ստորերկրյա հանքային ջրեր արդյունահանող և մետաղական բնական պաշարների վերամշակմամբ զբաղվող ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկատեսակները և պետական տուրքերը

	Ստորերկրյա հանքային ջրեր արդյունահանող ընկերություններ	Մետաղական բնական պաշարներ վերամշակող ընկերություններ
Շահութահարկ	✓	✓
Ավելացված արժեքի հարկ	✓	✓
Եկամտային հարկ	✓	✓
Շրջանառության հարկ	✓	✓
Բնապահպանական հարկ	✓	✓
Բնօգտագործման վճար	✓	✓
Ակցիզային հարկ	✓	✓
Այլ հարկեր կամ վճարումներ	✓	✓
Ջրօգտագործման թույլտվության տրամադրման պետական տուրք	✓	✓
Հանքային ջրերի յուրաքանչյուր հանքավայրի կամ հանքահորի՝ արդյունաբերական (շալցման) նպատակով օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար պետական տուրք	✓	-

Աղբյուրը. ՊԵԿ-ի՝ ԱՃԹՆ-ի նախնական ուսումնասիրության շրջանակում ներկայացված հաշվետվություններ

Ոլորտներում գործող կազմակերպությունների կողմից պետական բյուջե վճարվող հարկերի և վճարների մասին տեղեկատվություն ստանալու նպատակով նույնականացված կազմակերպությունների ցանկն ուղարկվել է ՊԵԿ: ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվությունը կողմավորված է, քանի որ անվանական տեղեկատվությունը հարկային գաղտնիք է:



Նախքան ոլորտների կողմից պետբյուջե վճարված հարկերի և վճարների վերլուծությանն անցնելը, հարկ է նշել, որ երկու ոլորտների ընկերությունների կողմից վճարված հարկերի և վճարների ծավալները չեն ներկայացնում կոնկրետ այդ երկու ոլորտներում իրականացրած գործունեության արդյունքում գոյացած և վճարման ենթակա վճարների ճիշտ պատկերը: Պարզառոտ այն է, որ ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման և բնական մետաղական պաշարների վերամշակման


ուղորդների ընկերությունների մի մասը, բացի այդ երկու գործունեություններից, իրականացնում է նաև այլ գործունեություն: Հետևաբար, ուղորդների ընկերությունների կողմից պետությունը կատարած վճարումների մեջ ներառված են նաև նշված այլ գործունեության իրականացման արդյունքում գոյացած հարկերը և վճարները:

### 3.1.1. Ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման ուղորդից մուտքերը պետական բյուջե

Ըստ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ 2019թ. ընթացքում ստորերկրյա հանքային ջրեր արդյունահանող կազմակերպություններից պետական բյուջե է մուտքագրվել 5,528.3 մլն դրամ, ինչը կազմում է պետբյուջեի եկամուտների 0.38%-ը: Ընդ որում, 2019թ. ընթացքում ուղորդի կազմակերպությունների կողմից վճարված հարկերի և տուրքերի մեջ գրեթե մեկ-երրորդը կազմել է միայն ավելացված արժեքի հարկը: Եկամտային և ակցիզային հարկերը կազմել են համապատասխանաբար ընդհանուրի 23.6%-ը և 24.7%-ը:

#### Գծապատկեր 3.1.1.1

2019 թ. ընթացքում ստորերկրյա հանքային ջրեր արդյունահանող ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված ընդհանուր հարկերի և տուրքերի համամասնությունները



Աղբյուրը. ՊԵԿ-ի՝ ԱՃԹՆ-ի նախնական ուսումնասիրության շրջանակում ներկայացված տեղեկատվություն

Ավելացված արժեքի հարկի վճարումները 2019թ. նվազել են 1.3%-ով նախորդ տարվա նկատմամբ: Փոխարենը, մյուս երկու խոշոր հարկատեսակները՝ եկամտային հարկը և ակցիզային հարկն աճել են համապատասխանաբար 13.4%-ով և 4.1%-ով նույն ժամանակահատվածի ընթացքում: Սույն և մնացած հարկատեսակների մասով մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ստորև՝ աղյուսակում:

Աղյուսակ 3.1.1.1

2018 և 2019թթ. ընթացքում ստորերկրյա հանքային ջրեր արդյունահանող ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված ընդհանուր հարկերը և տուրքերը, միլիոն դրամ


	2018	2019	Տարեկան փոփոխություն, %	Պետբյուջեի եկամուտները 2019թ.	Ոլորտից եկամուտների մասնաբաժին պետբյուջեի եկամուտների մեջ 2019 թ., %
Շահութահարկ	367	439	19.7%	181,266	0.2%
Ավելացված արժեքի հարկ	1,786	1,763	-1.3%	474,377	0.4%
Եկամտային հարկ	1,149	1,303	13.4%	410,348	0.3%
Շրջանառության հարկ	6	8	42.9%	28,998	0.0%
Բնապահպանական հարկ	21	21	-	58,261	0.7%
Բնօգտագործման վճար	345	398	15.5%		
Ակցիզային հարկ	1,313	1,366	4.1%	127,535	1.1%
Զրօգտագործման թույլտվության տրամադրման պետական տուրք	0	0	-		
Հանքային ջրերի յուրաքանչյուր հանքավայրի՝ արդյունաբերական նպատակով օգտագործման թույլտվության տրամադրման համար պետական տուրք	69	92	32.8%	45,860	0.2%
Այլ հարկեր կամ վճարներ	127	137	8.1%	137,655	0.1%
<b>Ընդամենը</b>	<b>5,183</b>	<b>5,528</b>	<b>6.7%</b>	<b>1,464,300</b>	<b>0.4%</b>

Աղբյուրը. ՊԵԿ-ի՝ ԱՃԹՆ-ի նախնական ուսումնասիրության շրջանակում ներկայացված հաշվետվություններ

2019թ. ընթացքում վճարված ավելացված արժեքի հարկի մոտ կեսը փոխանցվել է միայն մեկ կազմակերպության կողմից: 2018թ. այդ ցուցանիշը կազմել է 45.2%: 2019թ. ավելացված արժեքի հարկի վճարումների 23.9%-ն է վերաբերել ԵՏՄ անդամ պետություններից ապրանքների ներմուծման արդյունքում առաջացող հարկային պարտավորություններին, իսկ 2018թ. 18.5%-ը:

Գծապատկեր 3.1.1.2

2018 և 2019թթ. ընթացքում ստորերկրյա հանքային ջրեր արդյունահանող ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված ավելացված արժեքի հարկը և եկամտային հարկն ըստ ընկերությունների, հազար դրամ



Աղբյուրը. ՊԵԿ-ի՝ ԱՃԹՆ-ի նախնական ուսումնասիրության շրջանակում ներկայացված տեղեկատվություն

Ինչ վերաբերում է ակցիզային հարկին, ապա այդ հարկի գծով վճարում 2018 և 2019թթ. ընթացքում կատարել է ընդամենը երկու կազմակերպություն: Ընդ որում, վճարի մոտ 92%-ն իրականացվել է դրանցից մեկի կողմից:

Ընկերությունների 10%-ը նույնականացվել են, ելնելով այդ ընկերությունների կողմից պետությանը վճարված հարկերի և այլ վճարների չափերից. պետբյուջեի մուտքերն այս ընկերություններից եղել են ամենաշատը:

Աղյուսակ 3.1.1.2

2018 և 2019թթ. ընթացքում ստորերկրյա հանքային ջրեր արդյունահանող ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված բոլոր հարկերի և պետական փոփոխության գումարները ըստ ընկերությունների, հազար դրամ

	2018		2019	
	Վճարում	Մասնաբաժին	Վճարում	Մասնաբաժին
Ընկերությունների մոտ 10%	4,396,242	84.8%	4,605,909	83.3%
Մնացած ընկերություններ	786,401	15.2%	922,369	16.7%
<b>Ընդամենը</b>	<b>5,182,643</b>	<b>100.0%</b>	<b>5,528,278</b>	<b>100.0%</b>

Աղբյուրը. ՊԵԿ-ի՝ ԱՃԹՆ-ի նախնական ուսումնասիրության շրջանակում ներկայացված հաշվետվություններ


**3.1.2. Մետաղական բնական պաշարների վերամշակման ոլորտից մուտքերը պետական բյուջե**

Ինչպես նշվել է Ներածության մեջ, ոլորտի կազմակերպությունները դասակարգվել են երկու խմբի՝ ԱԱԿ և միկրո և շրջանառության հարկ վճարող կազմակերպությունների: 2019թ. ընթացքում մետաղական բնական պաշարների վերամշակմամբ զբաղվել է 64 ընկերություն, որոնց կողմից պետական բյուջե է մուտքագրվել 8,163.9 մլն դրամ, ինչը կազմում է պետբյուջեի եկամուտների մոտ 0.56%-ը: Ընդ որում, 2019թ. ընթացքում վճարված հարկերի և տուրքերի մեջ

գրեթե կեսը կազմել է միայն ավելացված արժեքի հարկը, չնայած այն հանգամանքին, որ 2019թ. 64 ընկերությունից միայն 27-ն են գործել ԱԱՀ հարկային ռեժիմով: Մնացածը գործել են միկրո և շրջանառության հարկի ռեժիմներով: ԱԱՀ ռեժիմով աշխատող կազմակերպությունների կողմից վճարվել է նաև շահութահարկ, որը կազմել է ոլորտից պետական բյուջե մուտք գործած ամբողջ վճարների 18.8%-ը 2019թ. ընթացքում: Ինչ վերաբերում է եկամտային հարկին, ապա այս հարկի վճարումը կախված չէ կազմակերպության՝ սույն պարբերության մեջ նշված երկու հարկային ռեժիմներից որևէ մեկի ներքո գործելու հետ: Այսպիսով, եկամտային հարկի վճարումներից պետական բյուջեի մուտքերը 2019թ. կազմել են ընդհանուր ոլորտի մուտքերի 31.2%-ը: Ընդհանուր առմամբ, 2019թ. ընթացքում ոլորտի 64 կազմակերպությունների կողմից վճարված հարկերի և տուրքերի ընդհանուր գումարի մոտ 99.9%-ը փոխանցվել է ԱԱՀ ռեժիմով աշխատող կազմակերպությունների կողմից:

**Գծապարկեր 3.1.2.1**

*2019թ. ընթացքում մեդադական բնական պաշարների վերամշակմամբ զբաղվող ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված ընդհանուր հարկերի և տուրքերի համամասնությունները*



Աղբյուրը. ԴԵԿ-ի՝ ԱՃԹՆ-ի նախնական ուսումնասիրության շրջանակում ներկայացված հաշվետվություններ

Բոլոր երեք խոշոր հարկատեսակներն աճել են 2019թ. նախորդ տարվա նկատմամբ: Դրանց մասով մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ստորև:

Աղյուսակ 3.1.2.1

2018 և 2019թթ. ընթացքում մեքսիկական բնական պաշարների վերամշակմամբ զբաղվող ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված ընդհանուր հարկերը և փոխքերը, միլիոն դրամ


	2018	2019	Տարեկան փոփոխություն, %	Պետբյուջեի եկամուտները 2019 թ.	Ոլորտից եկամուտների մասնաբաժին պետբյուջեի եկամուտների մեջ 2019թ., %
Շահութահարկ	1,095	1,536	40.3%	181,266	0.8%
Ավելացված արժեքի հարկ	3,219	3,853	19.7%	474,377	0.8%
Եկամտային հարկ	2,437	2,544	4.4%	410,348	0.6%
Շրջանառության հարկ	5	6	27.3%	28,998	0.0%
Բնապահպանական հարկ	30	47	53.2%	58,261	0.1%
Բնօգտագործման վճար	1	1	-12.2%		
Ակցիզային հարկ	22	17	-25.5%	127,535	0.0%
Զրօգտագործման թույլտվության տրամադրման պետական տուրք	0	0	0.0%	45,860	0.0%
Այլ հարկեր կամ վճարներ	131	160	22.2%	137,655	0.1%
<b>Ընդամենը</b>	<b>6,941</b>	<b>8,164</b>	<b>17.6%</b>	<b>1,464,300</b>	<b>0.6%</b>

Աղբյուրը. ՊԵԿ-ի՝ ԱՃԹՆ-ի նախնական ուսումնասիրության շրջանակում ներկայացված տեղեկատվություն

2019թ. ընթացքում վճարված շահութահարկի կեսից մի փոքր ավելին, իսկ ԱԱՀ-ի 28.2%-ը հաշվարկվել է միայն մեկ կազմակերպության կողմից: 2019թ. ԱԱՀ վճարումների 14.4%-ը վերաբերել է ԵՏՄ անդամ պետություններից ապրանքների ներմուծման արդյունքում առաջացող հարկային պարտավորություններին:

Գծապատկեր 3.1.2.2

2018 և 2019թթ. ընթացքում մետադական բնական պաշարների վերամշակմամբ զբաղվող ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված շահութահարկը, ավելացված արժեքի հարկը և եկամտային հարկն ըստ ընկերությունների, հազար դրամ



Աղբյուրը. ՊԵԿ-ի՝ ԱՃԹՆ-ի նախնական ուսումնասիրության շրջանակում ներկայացված հաշվետվություններ

Ինչ վերաբերում է ակցիզային հարկին, ապա այդ հարկի գծով վճարում 2019թ. ընթացքում կատարել է ընդամենը երկու կազմակերպություն ԵՏՍ անդամ պետություններից ապրանքների ներմուծման արդյունքում: Ընդ որում, վճարի 99.5%-ն իրականացվել է դրանցից մեկի կողմից:

Ինչպես և ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման ոլորտի ընկերությունների դեպքում, այստեղ ևս ընկերությունների 5%-ն առանձնացվել է, ելնելով այդ ընկերությունների կողմից պետությանը վճարված հարկերի և այլ վճարների չափերից:

Աղյուսակ 3.1.2.2

2018 և 2019թթ. ընթացքում մետադական բնական պաշարների վերամշակմամբ զբաղվող ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված բոլոր հարկերի և պետական փոխարժեքի գումարներն ըստ ընկերությունների, հազար դրամ


	2018		2019	
	Վճարում	Մասնաբաժին	Վճարում	Մասնաբաժին
Ընկերությունների մոտ 5%	4,115,013	59.3%	5,368,961	65.8%
Մնացած ընկերություններ	2,825,937	40.7%	2,794,987	34.2%
<b>Ընդամենը</b>	<b>6,940,951</b>	<b>100.0%</b>	<b>8,163,948</b>	<b>100.0%</b>

Աղբյուրը. ՊԵԿ-ի՝ ԱՃԹՆ-ի նախնական ուսումնասիրության շրջանակում ներկայացված հաշվետվություններ

Ընդհանուր առմամբ 2019թ. մետադական բնական պաշարների վերամշակմամբ զբաղվող ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի և այլ վճարների մեծ մասը՝ մոտ 66%-ը կատարվել են ներքին արդյունահանողից գնում կատարած ԱԱՀ հարկային ռեժիմով աշխատող 4 ընկերությունների կողմից (5,373.6 մլն ՀՀ դրամ), մինչդեռ միկրո և շրջանառության հարկի հարկային ռեժիմով աշխատող 37 ընկերությունների կողմից կատարված փոխանցումները նույն տարում կազմել են ընդամենը մոտավորապես 11 մլն դրամ, կամ ընդհանուրի 0.1%-ը:

Գծապատկեր 3.1.2.3

2019թ. ընթացքում մեքսիկական բնական պաշարների վերամշակմամբ զբաղվող ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված բոլոր հարկերի և պետական տուրքերի գումարներն ըստ հարկային ռեժիմների, միլիոն դրամ



Աղբյուրը. ՊԵԿ-ի՝ ԱՃԹՆ-ի նախնական ուսումնասիրության շրջանակում ներկայացված տեղեկատվություն

### 3.2. Ոլորտի ընկերություններից մուտքերը համայնքային բյուջեներ (պահանջ 4.6)

ՏԿԵՆ-ի և ՊԵԿ-ի կողմից տրված բանավոր պարզաբանումների համաձայն, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանմամբ և մետաղական բնական պաշարների վերամշակմամբ (ներառյալ հանքաքարի և խտանյութի առք ու վաճառքով) զբաղվող ընկերությունների կողմից համայնքային բյուջեներ կատարվող վճարումների մասով տեղեկատվություն չի հավաքագրվում. ՏԿԵՆ-ի պաշտոնական կայքում<sup>64</sup> առկա է տեղեկատվություն համայնքների բյուջետային եկամուտների վերաբերյալ, որտեղ համայնքային բյուջեներ մուտք գործող եկամուտները չեն առանձնացվում ըստ վերը նշված երկու ոլորտներից ստացվող եկամուտների: Այս ոլորտների կազմակերպությունների գործունեության համայնքների և դրանց վճարած հարկերի և այլ վճարումների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է հավաքագրվի առանձին համայնքներից հատուկ հանձնարարականի կամ օրենսդրական կարգավորման հիման վրա:

### 3.3. Եկամուտների բաշխումը (պահանջներ 5.1, 5.2, 5.3)

Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն, Հայաստանի Հանրապետությունում մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման իրավունք ունեցող, ինչպես նաև այլ ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկից մասհանումներ կատարվում են և առանձին տողով արտացոլվում այն համայնքի բյուջեում, որի

<sup>64</sup> <http://www.mta.am/hy/budgetary-incomes/>, ՏԿԵՆ-ի պաշտոնական կայք



տարածքում նշված ընկերությունների գործունեությունը թողնում է վնասակար ազդեցություն<sup>65</sup>։ Բնապահպանական հարկից համայնքների վարչական և ֆոնդային բյուջեներ մուտքագրվող մասհանումները օգտագործվում են տվյալ համայնքների տարածքում բացառապես բնապահպանական ծրագրերի իրականացման համար։

Նախորդ պարբերությունում նշված այլ ընկերությունների ցանկը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված չափորոշիչների հիման վրա։

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքում սահմանվել է բոլոր մետաղական օգտակար հանածո արդյունահանելու թույլտվություն ունեցող ընկերություններից բացի այլ ընկերությունների ցանկը, որոնց կողմից իրականացված բնապահպանական հարկի վճարներից կատարվում են մասհանումներ համայնքներում բնապահպանական միջոցառումներ իրականացնելու նպատակով<sup>66</sup>։

2021թ. հուլիսի 15-ին ընդունվել, իսկ հուլիսի 17-ից ուժի մեջ է մտել «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված այլ ընկերությունների ընտրության չափորոշիչները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշումը<sup>67</sup>։ Այն տարածվելու է 2022թ. հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա։ Այս որոշմամբ այլ ընկերությունների ցանկում ներառվում են այն ընկերությունները, որոնց կողմից ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված՝ արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման, ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտահոսքերի և հատուկ հատկացված տեղերում ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնների տեղադրման և պահման բնապահպանական հարկի գծով հաշվարկված գումարներից առնվազն մեկի մասով տվյալ տարվան նախորդող երկու տարում հաշվարկված հարկի հանրագումարը պակաս չէ 2 մլն դրամից։

ՏԿԵՆ-ի կողմից տրված պարզաբանումների համաձայն, քանի որ ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանմամբ և մետաղական բնական պաշարների վերամշակմամբ զբաղվող ընկերությունների մի մասը վճարում է բնապահպանական հարկ, սահմանված շեմը հատելու դեպքում այդ ընկերությունների կողմից վճարված բնապահպանական հարկերը ևս կբաշխվեն համայնքներում բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով։

Ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման և մետաղական բնական պաշարների վերամշակման ոլորտներից պետական և համայնքային բյուջեներ իրականացվող վճարների օգտագործման գործընթացը մեծ մասամբ չի վերահսկվում հանրության կողմից, քանի որ դրանք կուտակվում են պետական և համայնքային բյուջեներում և ծախսվում ընդհանուր հիմունքներով՝ այլ ոլորտներից մուտքագրվող հարկային և այլ վճարների հետ միասին։ Այս ոլորտներից ստացվող եկամուտներից իրականացվող ծախսերի՝ հանրության կողմից վերահսկման գործիքակազմ առկա է միայն «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի շրջանակներում իրականացվող բնապահպանական հարկի վճարների մասով։ Նշված օրենքի համաձայն, ինչպես արդեն նշվեց, համայնքների վարչական և ֆոնդային բյուջեներ մուտքագրվող մասհանումները հանդիսանում են նպատակային միջոցներ և օգտագործվում են տվյալ համայնքների տարածքում բացառապես

<sup>65</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143046>, Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին ՀՀ օրենք, Հոդված 1

<sup>66</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143032>, «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին ՀՀ օրենք, Հոդված 4

<sup>67</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=154470>, «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված այլ ընկերությունների ընտրության չափորոշիչները սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշում

բնապահպանական և առողջապահական ծրագրերի իրականացման համար: Ընդ որում, համայնքներին հատկացումներն իրականացվում են սուբվենցիաների տեսքով:

### 3.4. Էականության շեմեր՝ տեղեկատվությունը բացահայտելու համար

ԱՃԹՆ-ի ստանդարտի N 13 ուղեցույցը տրամադրում է էականությունը սահմանելու ուղղություն՝ հետևյալ չորս քայլի օգնությամբ.

1. հստակ հասկանալ ոլորտից եկամտային հոսքերը,
2. որոշել, որ եկամտային հոսքերն են էական, և արդյոք պետք է կիրառվեն վճարման շեմեր,
3. նույնականացնել հաշվետու ընկերությունները,
4. փաստաթղթավորել ԲՇԽ-ի քննարկումները և դատողություններն այս հարցի շուրջ:

Եկամուտները և վճարումները համարվում են էական, եթե դրանց բացթողումը կարող է էապես ազդել ԱՃԹՆ-ի զեկույցի համակողմանիության վրա:

Ստորև աղյուսակում ներկայացված են ոլորտների ընկերությունների կողմից պետբյուջե վճարված հարկերի և վճարների մասնաբաժինները պետբյուջեի ընդհանուր եկամուտներում, ինչպես նաև մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից վճարված հարկերում և վճարներում:

#### Աղյուսակ 3.4.1

2019թ. ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման և մետաղական բնական պաշարների վերամշակման ոլորտների ընկերությունների կողմից վճարված հարկերը և դրանց մասնաբաժինը պետբյուջեի եկամուտներում և մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից պետբյուջե վճարված ընդհանուր հարկերում, միլիոն դրամ

Ոլորտը	Ընդամենը վճարված հարկեր և վճարներ	Պետբյուջեի եկամուտ	Մետաղական հանքաքար արդյունահանողների կողմից պետբյուջե վճարված հարկեր
		1,464,300	84,996
Ստորգետնյա հանքային ջրերի արդյունահանում	5,528	0.38%	6.1%
Մետաղական բնական պաշարների վերամշակում	8,164	0.56%	8.8%

Պետբյուջեի ընդհանուր եկամուտների տեսանկյունից ոլորտների հոսքերը կարելի է համարել ոչ էական, սակայն եթե դիտարկենք դրանք մետաղական հանքաքար արդյունահանող ընդերքօգտագործող ընկերությունների կողմից վճարված հարկերի հետ համեմատության տեսանկյունից, դրանք կազմում են մետաղական հանքաքար արդյունահանող ընդերքօգտագործող ընկերությունների կողմից վճարված հարկերի 6-9%-ը, որը բազմաշահառու խումբը կարող է համարել էական: Առավել էական են մետաղական բնական պաշարներ վերամշակող ընկերությունների կողմից վճարված գումարները: Հարկ է նշել սակայն, որ դրանց 66%-ը, 5,373 միլիոն դրամը, վճարվել է ներքին արդյունահանող ընկերություններից գնում կատարած՝ 4 ընկերությունների կողմից: Հետևաբար, մետաղական բնական պաշարների վերամշակմամբ զբաղվող ընկերություններին՝ ԱՃԹՆ-ի շրջանակում ներառելու համար կարելի է դիտարկել վերը նշված 4 ընկերությունները, հաշվի առնելով նաև այն փաստը, որ, ինչպես նշվեց բաժնի սկզբում, վերլուծության մեջ տեղ գտած ընկերությունների ցանկը չի ներառում միայն Հայաստանում արդյունահանված մետաղների վերամշակող ընկերությունները, քանի որ ընկերություններն ընտրվել են ըստ տնտեսական դասիչների, որտեղ հենց այս ոլորտը նույնականացված չէր: Հարկ է նշել, որ այս 4 ընկերությունները մինչ այժմ պետական բյուջե ոռոյաթի չեն վճարել:

Ինչ վերաբերում է ստորգետնյա հանքային ջրեր արդյունահանողներին, այստեղ նույնպես ներկայացված տվյալները չի կարելի համարել ներկայացուցչական հենց հանքային ջրերի արդյունահանման ոլորտի համար, քանի որ, ընկերությունների ցանկն ուսումնասիրելիս, ակնհայտ է, որ դրանք, բացի հանքային ջրերի արդյունահանումից, զբաղվում են նաև այլ ապրանքների արտադրությամբ, ավելին, այլ ծառայությունների մատուցմամբ, և ներկայացված հարկերի և վճարների գումարներն ամբողջությամբ չի կարելի վերագրել հանքային ջրերի արդյունահանմանը: Ստորգետնյա հանքային ջրերի արդյունահանումից գոյացած հարկերը և վճարներն այլ գործունեությունից առաջացած հարկերից և վճարներից տարանջատելը ներկայումս իրատեսական չէ:

Վերը նշված սահմանափակումների պայմաններում հնարավոր չէ հիմնավորված որոշում կայացնել ոլորտի էականության մասին:

Ի լրումն, ոլորտներն ԱՃԹՆ-ի շրջանակում ներառելու որոշման հարցում, մենք առաջարկում ենք հաշվի առնել նաև էականության որակական չափանիշները, օրինակ հանքային ջրերի՝ որպես բնական ռեսուրս առանձնակի կարևորություն ունենալու հանգամանքը, ինչպես նաև նույն ոլորտի՝ շրջակա միջավայի վրա ունեցած ազդեցությունները:

# 4. Ոլորտների հետախուզումը, արդյունահանումը և արտահանումը


## 4.1. Ներածական տեղեկատվություն

### 4.1.1. Հանքային ջրերի սահմանումը և հորատման մեխանիզմը

Հայաստանի Հանրապետության տարածքում կան ստորերկրյա ջրեր: Ըստ ՀՀ ջրային օրենսգրքի, ստորերկրյա ջրերը երկրակեղևը կազմող ապարների մեջ հեղուկ կամ գոլորշի կամ կարծր վիճակում գտնվող ջրերն են, որոնք լինում են քաղցրահամ և հանքային: Ստորերկրյա քաղցրահամ ջրերը մինչև 1 գ/լ հանքայնացմամբ ջրերն են, իսկ 1 գ/լ-ից ավելի հանքայնացում ունեցող ջրերը համարվում են հանքային<sup>68</sup>: Հանքային ջրերը հիմնական իոնաաղային և գազային բաղադրությամբ, կենսաբանական ակտիվ նյութերի բարձր պարունակությամբ և յուրահատուկ հատկություններով (ռադիոակտիվությունը, միջավայրի ջերմաստիճանը, ռեակցիան) պայմանավորված մարդու օրգանիզմի վրա բուժիչ ազդեցություն ունեցող բնական ջրերն են: Հանքային ջրերն առաջանում են ապարների խզումային խախտումների զոնաներում և դուրս են գալիս երկրի մակերևույթ սառը և տաք աղբյուրների ձևով (բնական աղբյուր): Բնական հանքային ջուր ստանում են նաև հորատելով՝ գետնի մեջ անցք բացելով (հանքային ջրի հորատանցք): Հորատանցքը ենթակա է համապատասխան կերպով կահավորման, որի նկատմամբ պահանջների մի մասը սահմանվում է օրենսդրությամբ<sup>69</sup>: Ստորև ներկայացված է հանքային ջրի հորատանցքի գլխամասի սխեման, որը թույլ է տալիս պատկերացում կազմել հանքային ջրի արդյունահանման գործընթացի մասին:

Պարկեր 4.1.1.1

Ածխաթթվային հանքային ջրի ջրհավաք հորատանցքի գլխամասի սխեմա



<sup>68</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docid=121550>, ՀՀ ջրային օրենսգիրք, Գլուխ 1, Հոդված 1

<sup>69</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=116492>, Ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի հաշվառման նպատակով ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի, գազաչափերի տեղադրման և կնքման, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների կարտադրված ածխաթթու գազի ծավալների վերաբերյալ տվյալների արձանագրման կարգերը և ժամկետները սահմանելու մասին ՀՀ Կառավարության որոշում

- |                         |                                   |
|-------------------------|-----------------------------------|
| 1. Հորատանցքի բերան     | 10. Տեխնիկական ջրաչափ             |
| 2. Հորատանցքի փական     | 11. Թողքի խողովակ                 |
| 3. Ծնշումաչափ           | 12. Առաջնային խողովակ             |
| 4. Գազանջատիչ           | 13. Ջրի ծախսի չափման խողովակ      |
| 5. Գազանջատիչի միջնապատ | 14. Ջրի ծախսի չափման փական        |
| 6. Ազատ գազի չափման ելք | 15. Տեխնիկական ջրաչափ             |
| 7. Ջրաչափական ապակի     | 16. Առաջնային խողովակի փական      |
| 8. Առաջնային ջրաչափ     | 17. Առանձնացված ջրաչափ            |
| 9. Թողքի փական          | 18. Ջրի ծախսի չափման տարողություն |

Նշումներ. Այս կառուցվածքը կարող է տարբերվել՝ ելնելով հանքային ջրերի արդյունահանման նպատակներից կամ այլ հանգամանքներից, սակայն բոլոր հիմնական կառուցվածքային բաղադրիչներն այստեղ ներկայացված են Աղբյուրը. ՏԿԵՆ-ի, Ընդերքի վարչություն

Հանքավայրերում առկա հանքային ջրերը կարող են բնական կերպով հոսել կամ էլ պահանջել նախնական գրգռման գործընթաց: Այն պահից, երբ հանքային ջուրը սկսում է հոսել հորատանցքից, ջրի հոսքն ընդհատելը կարող է նպատակահարմար չլինել, քանի որ ջրի հոսքի պարբերաբար դադարեցումը կհանգեցնի ջրի որակական հատկանիշների փոփոխմանը: Այդ պատճառով հանքավայրի շահագործման պահից սկսած հորատանցքից ջրի հոսքն ամբողջությամբ փակել չի կարելի, մոնիթորինգի արդյունքում կարելի է բերել փականային ռեժիմի (2)՝ հոսքը քչացնելով, սակայն կան նաև հանքավայրեր, որտեղից դուրս եկող ջրի հոսքը երբեք չի դադարեցվում:

Հորատանցքերով հանքային ջրերի հանքավայրերի շահագործումը, ելնելով հանքավայրի կոնդիցիոն չափորոշիչներից, ջրի ու անջատվող ածխաթթու գազի հարաբերակցությունից և օգտագործման նպատակից, կարող է իրականացվել գազանջատիչով (4) և առանց գազանջատիչի<sup>70</sup>: Գազանջատիչից ածխաթթու գազը կա՛մ արտանետվում է մթնոլորտ (6), կա՛մ կարող է հոսել գազատար խողովակով: Երկրորդ դեպքում անջատված գազն օգտագործվում է ածխաթթու գազի արտադրության համար: Ածխաթթու գազի արտադրության դեպքում գազանջատիչից դուրս եկող ջուրը մի անգամից հեռացվում է թողքի խողովակով (11), եթե այն չի օգտագործվում այլ նպատակներով:

Ածխաթթու գազի կորզումից բացի այլ նպատակներով հանքային ջրերի արդյունահանման դեպքում (շապցում, բուժական և ռեկրեացիոն), գազանջատումից հետո (առկայության դեպքում) ջուրը հոսում է առաջնային խողովակով (12) և անցնում առաջնային խողովակի փականով (16): Այդ փականը նախատեսված է արտադրություն իրականացնող կազմակերպությունների կողմից արտադրության համար պահանջվող հանքային ջրի քանակը կարգավորելու համար: Յուրաքանչյուր առանձին նպատակով հանքային ջրերի արդյունահանման դեպքում տեղադրվում է առանձին խողովակ: Հորատանցքից հոսող և արտադրական նպատակներով օգտագործվող հանքային ջրերի ծավալների տարբերության չափով հանքային ջրերը (ազատ հոսք) հեռացվում են թողքի խողովակով, որը պետք է տեղակայված լինի այնպես, որ հնարավոր չլինի հետագայում հոսող ջուրը օգտագործել այլ նպատակներով:



*Հանրապետական երկրաբանական ֆոնդի մասնագետի հետ քննարկումների արդյունքում պարզ է դառնում, որ այստեղ առկա է արդյունահանված հանքային ջրերի ծավալների ոչ օպտիմալ օգտագործում: Հորատանցքից հոսող ջրի մեծ մասը հեռացվում է թողքի խողովակով: Դա համարվում է ջրի «բնական» կորուստ, քանի որ, չնայած այդ ջրի ծավալները հոսելու ընթացքում չեն ծառայում ոչ մի արդյունաբերական նպատակի, հոսքի դադարեցումը հանգեցնում է հանքային ջրի հարկանիշների վարացման: Այս պայմաններում առնվազն կարելի է նույն ջրի*

<sup>70</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=116492>, Ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի հաշվառման նպատակով ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի, գազաչափերի տեղադրման և կնքման, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի ծավալների վերաբերյալ տվյալների արձանագրման կարգերը և ժամկետները սահմանելու մասին ՀՀ Կառավարության որոշում, Կետ 4

ծավալները համապատասխան նպատակով (բացի ածխաթթու գազի կորզումից) օգտագործելուն զուգահեռ կորզել ածխաթթու գազ: Սակայն այսպեղ առկա է խոչընդոտ, քանի որ ածխաթթու գազի կորզման համար պահանջվում է առանձին թույլտվություն, չնայած այն հանգամանքին, որ ածխաթթու գազի կորզման համար օգտագործվում է նույն ջրի ծավալը, որը հետագայում ծառայելու է այլ նպատակի: Կարող է նպատակահարմար դիտվել շապցման կամ բուժական (ռեկրեացիոն) նպատակով հանքային ջրերի արդյունահանման իրավունք փրամադրելուն զուգահեռ թույլատրել նաև ածխաթթու գազի արտադրություն:

Բացի այդ, ամեն հորատանցքից սովորաբար արդյունահանում իրականացնում է միայն մեկ արդյունահանող, սակայն հորատանցքը կարող է շահագործվել մեկից ավելի արդյունահանողների կողմից (ջրի բավարար քանակի առկայության դեպքում): Նմանապիսի մոտեցումը հնարավորություն կտա խուսափելու նոր հորատանցքերի շահագործումից և, ջրի բավարար քանակի առկայության դեպքում, թույլ կտա կրճատել հանքային ջրերի ազատ հոսքի ծավալները:

Ջրի ծախսի չափման խողովակը (13) նախատեսված է հանքային ջրի որակի մշտադիտարկումների իրականացման համար: Ստուգումների ժամանակ դիտարկվում է նաև հորատանցքից անընդմեջ հոսող ջրի ծավալների կրճատումն այնպես, որ հանքային ջրերի հատկանիշները մնան անփոփոխ:

#### 4.1.2. Մետաղների վերամշակումը

Մետաղների վերամշակումը մետաղների հանքաքարերի և խտանյութերի մշակումն է մաքուր մետաղներ ստանալու նպատակով: Վերամշակման նպատակն է ստանալ պատրաստի մետաղական բաղադրիչներ, որոնք հետագայում հնարավոր կլինի օգտագործել տնտեսության տարբեր ոլորտներում: Մետաղների վերամշակումը կարող է իրականացվել տարբեր եղանակներով.

- *Խտանյութերի և մետաղական հանքաքարերի ձուլում:* Տեղի է ունենում առաջնային նյութերի՝ խտանյութերի և մետաղական հանքաքարերի առանձնացում այլ՝ ոչ պիտանի նյութերից և դրանց առաջնային մշակում ձուլման տեսքով, որի վերջնական արդյունքը հատուկ հատկանիշներով խառնուրդի ստացումն է:
- *Հալված մետաղների սառեցում:* Սա ենթադրում է ձուլված մետաղի տեղակայում հատուկ ջերմակայուն օբյեկտների մեջ, ինչի արդյունքում ձուլված մետաղը ստանում է այդ օբյեկտի տեսքը:
- *Մետաղների շտամպավորում:* Սա ենթադրում է պինդ մետաղի մշակում, ուժ գործադրելով, հարվածների միջոցով:
- *Մետաղների վերջնական տեսքի ապահովում:* Սա ենթադրում է մետաղների զոդում կամ կտրում, ինչպես նաև ձևափոխում հատուկ սարքավորումների միջոցով<sup>71</sup>:

#### 4.2. Ոլորտների հետախուզումը (պահանջ 3.1)

Համաձայն ՏԿԵՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության, ՀՀ տարածքում 2021թ. փետրվարի դրությամբ կան գնահատված և հաստատված շահագործական պաշարներով հանքային ջրերի 24 հանքավայրեր, որոնք, օրենսդրությամբ սահմանված կարգով, հաշվառված են օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում: 24 հանքավայրերից շահագործվում են 17-ը: ՏԿԵՆ-ի տեսանկյունից շահագործվող է համարվում այն հանքավայրը, որի շահագործման համար տրամադրվել է թույլտվություն: Առկա է 82 հորատանցք, որոնցից

<sup>71</sup> <http://www.ilocis.org/documents/chpt82e.htm>

շահագործվում են 31-ը, և 4 աղբյուր, որոնցից շահագործվում են 2-ը: Հանքավայրերի և դրանց տեղակայման մասին տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակում:

*Աղյուսակ 4.2.1*

*ՀՀ տարածքում առկա հանքային ջրերի հանքավայրերն ըստ մարզերի*

Հանքավայրի գտնվելու վայրը (մարզը)	Հանքավայրի անվանումը	Կարգավիճակը
Արարատի մարզ	Վեդու Արարատ հանքավայր	Շահագործվում է
Գեղարքունիքի մարզ	Լիճքի հանքավայր	Շահագործվում է
	Սևանի հանքավայր	Շահագործվում է
	Արևիկի հանքավայր	Չի շահագործվում
Լոռու մարզ	Կիրովականի «Մեղրուտի տեղամասի» հանքավայր	Շահագործվում է
	Կաթնաղբյուրի (ներառյալ «Լուսաղբյուր» աղբյուրի տեղամասը) հանքավայր	Շահագործվում է
	Ձորագետի հանքավայր	Չի շահագործվում
Կոտայքի մարզ	Հանքավանի հանքավայր	Շահագործվում է
	Բջնիի հանքավայր	Շահագործվում է
	Արզականի հանքավայր	Շահագործվում է
	Սուլակի հանքավայր	Չի շահագործվում
	Քարաշամբի հանքավայր	Շահագործվում է
	Արզնիի հանքավայր	Շահագործվում է
	Ուլաշիկի թիվ 5 աղբյուրի հանքավայր	Շահագործվում է
Շիրակի մարզ	Ղուկասյանի հանքավայր	Շահագործվում է
Սյունիքի մարզ	Շենաթաղի թիվ 1 հանքային ջրի աղբյուրի հանքավայր	Շահագործվում է
Վայոց Ձորի մարզ	Ջերմուկի (ներառյալ «Պուճուր գետի» և «Ջերմուկ-1» տեղամասերը) հանքավայր	Շահագործվում է
	Արփիի հանքավայր	Չի շահագործվում
	Սայաթ-Նովայի հանքավայր	Չի շահագործվում
	Արենիի թիվ 1 հանքային ջրի աղբյուրի հանքավայր	Չի շահագործվում
Տավուշի մարզ	Ներքին Աղդանի (Ակնաղբյուրի) հանքավայր	Շահագործվում է
	Լալիգյուղի հանքավայր	Չի շահագործվում
	Դիլիջանի հանքավայր	Շահագործվում է
	Ֆրոլովա-Բալկա հանքավայր	Շահագործվում է

Աղբյուրը. ՏԿԵՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվություն, անհատական վերլուծություններ

Հորատանցքերի և բնական աղբյուրների վիճակի մասին հստակ տեղեկատվություն առկա է միայն շահագործման հանձնված հորատանցքերի և աղբյուրների մասով:



*ՏԿԵՆ-ի կողմից տրամադրված մեկնաբանությունների համաձայն, առնվազն վերջին 20 տարիների ընթացքում հորատանցքերի և աղբյուրների գույքագրում չիրականացնելու պատճառով հայտնի չեն շահագործման չհանձնված հորատանցքերի ու աղբյուրների տեխնիկական վիճակները:*

2011թ. հուլիսի տվյալների համաձայն, ՀՀ տարածքում հանքային ջրերի արդյունահանման առավելագույն հնարավոր ծավալը կազմել է 298.74 լիտր/վայրկյան (բնական ինքնահոսի



պայմաններում): Քանի որ այդ պահից սկսած նոր հանքավայրեր չեն հայտնաբերվել, այդ ծավալը համարվում է անփոփոխ 2021թ. հունվարի 1-ի դրությամբ: Այս ծավալների մեջ մտնում են ինչպես շահագործվող, այնպես էլ չշահագործվող հանքավայրերի արդյունահանման հնարավորությունները: Շահագործման հանձնված հանքավայրերից հոսող ջրի ծավալը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 68.73 լիտր/վայրկյան:


#### 4.3. Ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանումը և արտադրությունը, մետաղական բնական պաշարների վերամշակումը (պահանջ 3.2)

##### 4.3.1. Ստորերկրյա հանքային ջրեր արդյունահանող կազմակերպությունները

ՏԿԵՆ-ի պաշտոնական կայքում տեղադրված տեղեկատվության համաձայն՝ 2021թ. ապրիլի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման նպատակով տրամադրվել է 36 ընդերքօգտագործման թույլտվություն: Ստորև ներկայացված է նշված թույլտվության ստացման ընթացակարգը և այն ունեցող կազմակերպությունների ցանկը, գործունեության վայրը, նպատակը, թույլտվության տրման ամսաթիվը և գործունեության ժամկետի ավարտը:

Գծապատկեր 4.3.1.1

Ստորերկրյա հանքային ջրի արդյունահանման թույլտվության տրամադրման ընթացակարգը



-  << SԿԵՆ
-  << ԱԻՆ
-  << ՇՄՆ
-  Ընկերություն

ՏԿԵՆ կողմից տրամադրված մեկնաբանության համաձայն վերջինս ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունից ստացել է պարզաբանում, որում նշվում է, որ հանքային ջրերի հանքավայրերում արդյունահանման աշխատանքներ իրականացնելու նպատակով տեխնիկական անվտանգության փորձաքննություն չի պահանջվում:

*Աղյուսակ 4.3.1.1*

*Սպորտերկրյա հանքային ջրերի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման իրավունք ունեցող կազմակերպությունների ցանկը 2021թ. ապրիլի 1-ի դրությամբ*

Իրավաբանական անձի անվանումը	Գործունեության իրականացման վայրը	Թույլտվության տրման ամսաթիվ	Գործողության ժամկետի ավարտ	Արդյունահանման նպատակը
«Ադամանդ-Կ» ՍՊԸ	Վայոց Ձորի մարզ, Ջերմուկի հանքավայր	23.11.12թ.	15.08.2022թ.	բուժական (ռեկրեացիոն)
«Ավշար ջուր» ՍՊԸ	Արարատի մարզ, Վեդու Արարատ հանքավայր	07.02.19թ.	07.02.2069թ.	արդյունաբերական /շաղցում/
«Արատտա Գոլդ» ՍՊԸ	Կոտայքի մարզ, Հանքավանի հանքավայր	20.10.12թ.	18.09.2021թ.	աճխաթառու գազի կորզում
«Արարատ Գրուպ» ՍՊԸ	Արարատի մարզ, Վեդու «Արարատ» հանքավայր	20.10.12թ.	28.06.2036թ.	արդյունաբերական /շաղցում/
«Արզնի» առողջարան» ՓԲԸ	Կոտայքի մարզ, Արզնիի հանքավայր	20.10.12թ.	27.08.2021թ.	բուժական (ռեկրեացիոն)
«Արսեն և Ներսես» ՍՊԸ	Սյունիքի մարզ, Շենաթաղի հանքավայր	18.01.13թ.	17.11.2021թ.	արդյունաբերական /շաղցում/
«Բյուրեղ հանքային ջրի» ՓԲԸ	Կոտայքի մարզ, Բջնիի հանքավայր	20.10.12թ.	13.07.2021թ.	արդյունաբերական /շաղցում/
«Դիլիջան» հանքային ջրի գործարան ՍՊԸ	Տավուշի մարզ, Դիլիջանի հանքավայր	20.10.12թ.	07.08.2067թ.	արդյունաբերական /շաղցում/
«Երևանի Գարեջուր» ՓԲԸ	Վայոց Ձորի մարզ, Ջերմուկի հանքավայր	20.10.12թ.	16.03.2036թ.	արդյունաբերական /շաղցում/
«Էկո ագրո» ՍՊԸ	Կոտայքի մարզ, Քարաշամբի հանքավայր	17.05.19թ.	17.05.2069թ.	արդյունաբերական /շաղցում/
«Էմ Այ Բի Քոնսալթինգ» ՍՊԸ	Տավուշի մարզ, Ֆրոլովա-Բալկա հանքավայր	03.09.20թ.	03.09.2070թ.	արդյունաբերական /շաղցում/
«Էյ Ընդ Էմ Ռեյր» ՍՊԸ	Կոտայքի մարզ, Ուլաշիկի հանքավայր	03.12.16թ.	03.12.2066թ.	արդյունաբերական /շաղցում/
«Իջևանի գինու, կոնյակի գործարան» ՓԲԸ	Տավուշի մարզ, Ներքին Աղդանի (Ակնաղբյուրի) հանքավայր	17.07.17թ.	17.07.2067թ.	արդյունաբերական /շաղցում/

Իրավաբանական անձի անվանումը	Գործունեության իրականացման վայրը	Թույլտվության տրման ամսաթիվ	Գործողության ժամկետի ավարտ	Արդյունահանման նպատակը
«Իոնեն-Մես» ՍՊԸ	Կոտայքի մարզ, Արզականի հանքավայր	27.11.12թ.	26.12.2069թ.	բուժական (ռեկրեացիոն)
«Լարգո-վին» ՍՊԸ	Կոտայքի մարզ, Հանքավանի հանքավայր	25.02.13թ.	21.08.2021թ.	բուժական (ռեկրեացիոն)
«Լիճք» հանքային ջրերի գործարան» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, Լիճքի հանքավայր	08.04.20թ.	08.05.2070թ.	արդյունաբերական /շաղցում/
«Լիճք» հանքային ջրերի գործարան» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, Լիճքի հանքավայր	08.04.20թ.	08.05.2070թ.	աժխաթթու գազի կորզում
«Կառա» ՍՊԸ	Տավուշի մարզ, Ֆրյուվա-Բալկա հանքավայր	20.12.19թ.	20.12.2069թ.	արդյունաբերական /շաղցում/
«Հանքավան» առողջարանային համալիր ԲԲԸ	Կոտայքի մարզ, Հանքավանի հանքավայր	17.05.16թ.	17.05.2066թ.	բուժական (ռեկրեացիոն)
«Նաիրի» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, Լիճքի հանքավայր	18.12.12թ.	15.04.2069թ.	աժխաթթու գազի կորզում
«Նյու Իդա» ՍՊԸ	Լոռու մարզ, Կաթնաղբյուրի հանքավայր	25.04.19թ.	25.04.2069թ.	արդյունաբերական /շաղցում/
«Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ	Վայոց Ձորի մարզ, Ջերմուկի հանքավայր	17.05.16թ.	17.05.2028թ.	բուժական (ռեկրեացիոն)
«Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ	Վայոց Ձորի մարզ, Ջերմուկի հանքավայր	17.05.16թ.	17.05.2051թ.	արդյունաբերական /շաղցում/
«Ռաֆայել» ՀԶ ՍՊԸ	Կոտայքի մարզ, Արզականի հանքավայր	20.10.12թ.	15.10.2024թ.	բուժական (ռեկրեացիոն)
«ՌՌՌ հանքային ջրերի գործարան» ՓԲԸ	Կոտայքի մարզ, Բջնիի հանքավայր	20.10.12թ.	25.12.2021թ.	արդյունաբերական /շաղցում/
«ՌՌՌ հանքային ջրերի գործարան» ՓԲԸ	Կոտայքի մարզ, Բջնիի հանքավայր	20.10.12թ.	25.12.2021թ.	աժխաթթու գազի կորզում
«Սևան» հանքային ջրերի գործարան» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, Սևանի հանքավայր	25.09.14թ.	25.09.2064թ.	արդյունաբերական /շաղցում/
«Սիմոնա Ակվա» ՍՊԸ	Արարատի մարզ, Վեդու Արարատ հանքավայր	25.02.13թ.	30.12.2022թ.	արդյունաբերական /շաղցում/
«Սվ ջուր» ՍՊԸ	Կոտայքի մարզ, Արզնիի հանքավայր	22.09.20թ.	22.09.2070թ.	արդյունաբերական /շաղցում/
«Վանակվա գրուպ» ՍՊԸ	Վայոց Ձորի մարզ, Կոտայքի մարզ, Արզնիի հանքավայր	25.10.18թ.	25.10.2068թ.	արդյունաբերական /շաղցում/

Իրավաբանական անձի անվանումը	Գործունեության իրականացման վայրը	Թույլտվության տրամա ամսաթիվ	Գործողության ժամկետի ավարտ	Արդյունահանման նպատակը
	Ջերմուկի հանքավայր			
«Վանաձոր Ասսար» Առողջարան ՍՊԸ	Լոռու մարզ, Կիրովականի հանքավայր	11.02.13թ.	18.05.2023թ.	բուժական (ռեկրեացիոն)
«Վարդ աղբյուր» ՍՊԸ	Շիրակի մարզ, Ղուկասյանի հանքավայր	27.02.16թ.	27.02.2066թ.	արդյունաբերական /շալցում/ և ածխաթթու գազի կորզում
«Վիգեն» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, Լիճքի հանքավայր	18.12.12թ.	21.12.2070թ.	ածխաթթու գազի կորզում
«ՎՀՀ» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, Դարանակի հանքավայր	23.08.14թ.	23.08.2064թ.	քաղցրահամ ջուր
«Տեխնոման» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, Լիճքի հանքավայր	26.06.14թ.	26.06.2064թ.	ածխաթթու գազի կորզում
«Տեխնոման» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, Լիճքի հանքավայր	30.10.20թ.	30.10.2070թ.	ածխաթթու գազի կորզում

Աղբյուրը. ՏԿԵՆ-ի պաշտոնական կայք<sup>72</sup>


Նշված կազմակերպություններն արդյունահանումն իրականացնում են ՀՀ 8 մարզերում՝ Արարատի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Սյունիքի, Վայոց Ձորի, Տավուշի և Շիրակի: Կազմակերպությունների գրեթե մեկ երրորդը գործում է Կոտայքի մարզում, մինչդեռ Շիրակի և Սյունիքի մարզերից յուրաքանչյուրում գործում է ընդամենը մեկական կազմակերպություն («Վարդ աղբյուր» ՍՊԸ և «Արսեն և Ներսես» ՍՊԸ համապատասխանաբար): Սա պայմանավորված է համապատասխան մարզերում հանքավայրերի քանակով:

Կազմակերպությունների գործունեությունը հետապնդում է հետևյալ նպատակները՝ շալցում, ածխաթթու գազի կորզում, բուժական և ռեկրեացիոն: Միայն մեկ կազմակերպություն՝ «ՎՀՀ» ՍՊԸ-ն, ստացել է հանքային ջուր արդյունահանելու նպատակով ընդերքօգտագործման իրավունք, սակայն դատական կարգով նույն իրավունքի ներքո ձեռք է բերել նաև քաղցրահամ ջուր արդյունահանելու թույլտվություն և զբաղվում է հենց այդ գործունեությամբ: Կազմակերպությունների մեծամասնությունը ստորերկրյա հանքային ջրերն արդյունահանում է շալցման նպատակով: Արդյունահանման յուրաքանչյուր թույլտվություն տրամադրվել է վերը նշված նպատակներից միայն մեկի իրականացման համար, բացառությամբ «Վարդ աղբյուր» ՍՊԸ-ի և «Լիճք» հանքային ջրերի գործարան» ՍՊԸ-ի, որոնց տրված մեկ թույլտվության ներքո կազմակերպությունները կարող են արդյունահանել հանքային ջուրը և՛ շալցման, և՛ ածխաթթու գազի կորզման նպատակով: Տվյալ պահին այդպիսի հնարավորություն չի գործում և յուրաքանչյուր նպատակով գործունեության իրականացման համար պահանջվում է առանձին թույլտվություն: Մինևույն կազմակերպությունը կարող է ստանալ տարբեր նպատակներով հանքային ջրի արդյունահանման տարբեր թույլտվություններ: Դրանց շարքին են դասվում «ՌԻՌ հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ն, «Տեխնոման» ՍՊԸ-ն, և «Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ-ն: Այսպիսով, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման իրավունք ունեն թվով 32 կազմակերպություններ: Ստորև ներկայացված է այդ կազմակերպությունների քանակն ըստ գործունեության տեղանքի (մարզի) և նպատակի:

<sup>72</sup> [http://www.mtad.am/u\\_files/file/2021-ynderq/28-4Hanqayinlrer\\_cucak.pdf](http://www.mtad.am/u_files/file/2021-ynderq/28-4Hanqayinlrer_cucak.pdf)

Գծապատկեր 4.3.1.1

Կազմակերպությունների քանակն ըստ գործունեության տեղանքի (մարզերի) և նպատակի



Աղբյուրը. ՏԿԵՆ պաշտոնական կայք<sup>73</sup>, անհատական վերլուծություններ

**4.3.2. Բնական մետաղական պաշարներ վերամշակող կազմակերպությունները**


Ինչ վերաբերում է մետաղական բնական պաշարների վերամշակմամբ զբաղվող տեղական կազմակերպություններին, ապա, ինչպես նշվել է այս նախնական ուսումնասիրության ներածության մեջ, 2021թ. ապրիլի դրությամբ դրանք 66-ն են եղել:

2021թ. ընթացքում ԱԱՀ հարկային ռեժիմով աշխատել է 66-ից 29 ընկերություն, ընդ որում դրանցից 4-ը կատարել է գնում ներքին արդյունահանողից: Կազմակերպությունների ամբողջական ցանկը ներկայացվել է Աղյուսակ 1.2.2-ում:

<sup>73</sup> [http://www.mtad.am/u\\_files/file/2021-ynderq/28-4HanqayinIrer\\_cucak.pdf](http://www.mtad.am/u_files/file/2021-ynderq/28-4HanqayinIrer_cucak.pdf)

Գծապատկեր 4.3.2.1

Կազմակերպությունների քանակն ըստ հարկային ռեժիմների



Աղբյուրը. ՊԵԿ-ի՝ ԱՃԹՆ-ի նախնական ուսումնասիրության շրջանակում ներկայացված տեղեկատվություն

**4.3.3. Ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանումը**

Ստորերկրյա հանքային ջրերի փաստացի արդյունահանման ծավալները մոտ 2 անգամ աճել են 2015-2019թթ. ընթացքում՝ 2019թ. հասնելով տարեկան 356.4 հազար խորանարդ մետրի (տե՛ս ստորև՝ աղյուսակում): Նույն ժամանակահատվածում աճել են նաև ընդերքօգտագործման իրավունքով սահմանված հանքային ջրերի արդյունահանման ծավալները (մոտ 2.5 անգամ): Իրավունքով սահմանված արդյունահանման ծավալները 2015-2019թթ. ընթացքում յուրաքանչյուր տարում գրանցել են աճ նախորդ տարվա նկատմամբ միջինում 26% տարեկան բարդ աճի տեմպով: Ինչ վերաբերում է հանքային ջրերի արդյունահանման փաստացի ծավալին, վերջինս գրանցել է 13.6% նվազում 2016թ.՝ 2015թ. նկատմամբ և 17.1% նվազում 2017թ.՝ 2016թ. նկատմամբ, չնայած այն հանգամանքին, որ այդ տարիների ընթացքում տրվել է հանքային ջուր արդյունահանելու ևս 6 թույլտվություն, որոնցից 5-ը 2016թ.: 2018 և 2019 թթ. ընթացքում փաստացի ծավալները գրանցել են բարձր աճ՝ համապատասխանաբար 74.9% և 73.8%-ի չափով նախորդող տարվա համեմատությամբ: Հանքային ջրերի ընդերքօգտագործման իրավունքով սահմանված, ինչպես նաև փաստացի արդյունահանման ծավալները և դրանց տարբերությամբ պայմանավորված ազատ հոսքերը ներկայացված են ստորև:

Աղյուսակ 4.3.3.1

«Հանքային ջրերի արդյունահանումը 2015-2019թթ. ընթացքում, հազար խորանարդ մետր»

	2015	2016	2017	2018	2019
Հանքային ջրերի արդյունահանման ծավալներն ըստ ընդերքօգտագործման իրավունքի	639	869	883	1,136	1,612
Հանքային ջրերի արդյունահանման փաստացի ծավալները	164	141	117	205	356
Փաստացի արդյունահանված հանքային ջրի ծավալի մասնաբաժինն ընդերքօգտագործման իրավունքով սահմանված արդյունահանման ծավալի մեջ	25.6%	16.3%	13.3%	18.0%	22.1%
Ազատ հոսքեր	475	728	766	931	1,256

Աղբյուրը. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե<sup>74</sup>

Ազատ հոսքը սահմանափակող որևէ կարգավորում առկա չէ:

Հանքային ջրերի մեծ մասն արդյունահանվում է Գեղարքունիքի, Կոտայքի և Վայոց Ձորի մարզերում: Դիտարկված ժամանակահատվածի ընթացքում այս երեք մարզերում արդյունահանված հանքային ջրերի ծավալը կազմել է ընդհանուրի միջինում 96.1%-ը, իսկ 2019թ. այս ցուցանիշը հասել է 99.4%-ի: Ստորև ներկայացված են հանքային ջրերի արդյունահանման փաստացի ծավալներն ըստ մարզերի:

Աղյուսակ 4.3.3.2

«Հանքային ջրերի արդյունահանման փաստացի ծավալները 2015-2019թթ. ընթացքում ըստ մարզերի, հազար խորանարդ մետր»

	2015	2016	2017	2018	2019
Արարատ	0.5	15.6	0.7	0.6	0.6
Գեղարքունիք	109.8	55.9	58.8	60.1	198.7
Լոռի	0.3	0.2	0.3	0.2	0.2
Կոտայք	19.2	39.2	36.0	103.3	110.9
Շիրակ	-	-	-	-	-
Սյունիք	0.9	0.8	0.9	0.9	0.8
Վայոց Ձոր	30.8	28.6	19.2	39.4	44.8
Տավուշ	2.1	1.1	1.3	0.5	0.4
Ընդամենը ՀՀ	163.6	141.4	117.2	205.0	356.4

Աղբյուրը. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե<sup>75</sup>

Ածխաթթու գազի կորզման նպատակով օգտագործվող հանքային ջրերի ծավալները գերազանցում են շշալցման համար օգտագործվող հանքային ջրերի ծավալներին: 2015-2019թթ. ընթացքում Գեղարքունիքի մարզում հանքային ջրերի արդյունահանման ծավալների միջինում 99.5%-ն ուղղված է եղել ածխաթթու գազի կորզմանը: Կոտայքի մարզում ևս շշալցման նպատակով հանքային ջրերի արդյունահանման ծավալները մեծ չեն՝ միջինում 28.5%, բացի այդ, այս մասնաբաժինը նվազման միտում է դրսևորում և կազմում է 11.3% 2019թ., քանի որ նկատելի

<sup>74</sup> [https://www.armstat.am/file/article/eco\\_book\\_2019\\_5.pdf](https://www.armstat.am/file/article/eco_book_2019_5.pdf). Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում

<sup>75</sup> [https://www.armstat.am/file/article/eco\\_book\\_2019\\_5.pdf](https://www.armstat.am/file/article/eco_book_2019_5.pdf). Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում



աճ են գրանցել ռեկրեացիայի նպատակով ջրերի արդյունահանման ծավալները: Միևնույն ժամանակ, Վայոց ձորի մարզում արդյունահանման համեմատաբար մեծ ծավալները մեծամասամբ պայմանավորված են շշալցման նպատակով հանքային ջրերի արդյունահանմամբ (միջինում 66%): Արարատի, Սյունիքի և Տավուշի մարզերի արդյունահանումն ամբողջությամբ ուղղվել է շշալցմանը, իսկ Լոռու մարզինը՝ ամբողջությամբ բուժական նպատակներին: Շիրակի մարզում, դիտարկված ժամանակահատվածի ընթացքում, հանքային ջրերի արդյունահանում տեղի չի ունեցել: Ստորև՝ աղյուսակում, ներկայացված են արդյունահանված հանքային ջրերի օգտագործման ծավալներն ըստ նպատակների:

*Աղյուսակ 4.3.3.3*

*«Հ հանքային ջրերի ծավալներն ըստ օգտագործման նպատակների 2015-2019թթ. համար, հազար խորանարդ մեդր»*

	2015	2016	2017	2018	2019
<b>Շշալցում</b>	34.9	46.7	26.1	40.8	44.9
<b>Ածխաթթու գազի կորզում <sup>76</sup></b>	109.4	55.0	58.5	72.1	198.5
<b>Բուժական</b>	16.2	16.4	14.1	14.7	5.3
<b>Ռեկրեացիա</b>	1.3	21.5	18.0	76.8	89.6
<b>Ընդամենը</b>	<b>161.8</b>	<b>139.6</b>	<b>116.7</b>	<b>204.4</b>	<b>338.3</b>

Աղբյուրը. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե<sup>77</sup>

Ածխաթթու գազի կորզման ծավալների մեջ ներառված չէ հանքային ջրերի համալիր օգտագործման ժամանակ ուղեկցող ածխաթթու գազի ստացման համար ծախսված ջրի ծավալը: Դա իրենից ներկայացնում է ածխաթթու գազի կորզումից բացի այլ նպատակով հանքային ջրերի օգտագործման ժամանակ ածխաթթու գազի կորզման ծավալները:

Արդյունահանված և փաստացի օգտագործված հանքային ջրերի ծավալների միջև առկա է որոշակի տարբերություն: Ըստ վիճակագրական տվյալների, դա պայմանավորված է երկու հանգամանքներով՝ ջրի կորստով և ջրի՝ առանց օգտագործման այլ կազմակերպություններին փոխանցմամբ: Այսինքն, արդյունահանող ընկերությունները չեն օգտագործել հանքային ջուրն արտադրական նպատակով, այլ այն արդյունահանել են և փոխանցել այլ ընկերություններին, որպեսզի վերջիններս օգտագործեն հանքային ջրերը համապատասխան արտադրական նպատակով: Այլ կազմակերպություններին հանքային ջրի փոխանցում տեղի է ունեցել ողջ դիտարկված ժամանակահատվածի ընթացքում, սակայն վիճակագրական տվյալներում սկսվել է բացահայտվել միայն 2019թ.: 2019թ. փոխանցումները տեղի են ունեցել Վայոց Ձորի և Տավուշի մարզերում արդյունահանված ջրերից՝ համապատասխանաբար 13.6 և 0.2 հազար մետր խորանարդ ծավալներով: Մնացած տարբերությունը կապված է ջրի կորստի հետ: Վերջինի մասին տվյալները ներկայացված են ստորև՝ աղյուսակում:

<sup>76</sup> Առանց հանքային ջրերի համալիր օգտագործման ժամանակ ուղեկցող ածխաթթու գազի ստացման համար ծախսված ջրի ծավալի:

<sup>77</sup> [https://www.armstat.am/file/article/eco\\_book\\_2019\\_5.pdf](https://www.armstat.am/file/article/eco_book_2019_5.pdf), Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում

Աղյուսակ 4.3.3.4

ՀՀ հանքային ջրերի կորուստը 2015-2019թթ. ընթացքում ըստ մարզերի, հազար խորանարդ մետր

	2015	2016	2017	2018	2019
Արարատ	-	0.7	0.2	0.1	-
Գեղարքունիք	0.1	0.1	0.1	0.1	0.1
Լոռի	-	-	-	-	-
Կոտայք	0.2	0.6	-	-	4.1
Շիրակ	-	-	-	-	-
Սյունիք	-	-	-	-	-
Վայոց Ձոր	1.1	0.2	-	0.3	0.1
Տավուշ	0.4	0.2	0.2	0.1	-
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>1.8</b>	<b>1.8</b>	<b>0.5</b>	<b>0.6</b>	<b>4.3</b>

Աղբյուրը. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե<sup>78</sup>

Այս համատեքստում կորուստը հանքային ջրի՝ ընկերության առանձնացված խողովակով անցնելուց հետո առաջացած կորուստներն են: Կորուստները հիմնականում առաջանում են արդյունահանված հանքային ջրերն արտադրական նպատակով օգտագործելու ժամանակ: Չնայած այն հանգամանքին, որ, ըստ վիճակագրական տվյալների, կորուստների ընդհանուր ծավալները շատ փոքր մաս են կազմում ընդհանուր օգտագործված հանքային ջրերի ծավալների մեջ, արտադրական գործունեության ծավալման ժամանակ առաջացած կորուստներն ունեն նկատելի մասնաբաժին արտադրական նպատակներով օգտագործվող հանքային ջրերի ծավալների մեջ: Մասնավորապես դա նկատելի է 2019թ., երբ կորուստների մակարդակը կտրուկ աճ է գրանցել: Վիճակագրական կոմիտեի կողմից տրված պարզաբանման համաձայն, դա պայմանավորված է Կոտայքի մարզում գործող շշալցող կազմակերպության կողմից իր հոսքագծերը հանքային ջրերով լվանալու հանգամանքով: Լվացման համար օգտագործվող ջրի ծավալը հաշվարկվել է որպես կորուստ:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից տրված պարզաբանումների, կորուստների ծավալների մեջ ներառված չեն այլ կազմակերպություններին փոխանցված հանքային ջրերի օգտագործման արդյունքում առաջացած կորուստները, քանի որ այդ կազմակերպությունները չեն ներկայացնում այդպիսի տվյալներ:

Արդյունահանված հանքային ջրերի մի մասը, համապատասխան նպատակով օգտագործվելուց հետո, ենթակա է հեռացման: Այսինքն, հեռացումը հանքային ջրերի նպատակային օգտագործումից հետո այլևս օգտագործման ոչ ենթակա ջրերից ազատվելու գործընթացն է: Ածխաթթու գազի կորզման և ռեկրեացիայի նպատակով օգտագործված ամբողջ հանքային ջրերը հեռացվում են: Բուժական նպատակով արդյունահանված այն հանքային ջրերը, որոնք օգտագործվում են արտաքին օգտագործման ճանապարհով, հեռացվում են, իսկ խմելու համար նախատեսված հանքային ջրերը չեն հեռացվում: Ստորև ներկայացված են հանքային ջրերի հեռացման ծավալները:

<sup>78</sup> [https://www.armstat.am/file/article/eco\\_book\\_2019\\_5.pdf](https://www.armstat.am/file/article/eco_book_2019_5.pdf), Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում

Աղյուսակ 4.3.3.5

ՀՀ հանքային ջրերի հեռացումը 2015-2019թթ. ընթացքում ըստ մարզերի, հազար խորանարդ մետր

	2015	2016	2017	2018	2019
Արարատ	-	0.1	-	0.1	-
Գեղարքունիք	109.5	55.1	58.6	59.8	198.6
Լոռի	0.3	0.2	0.3	0.2	0.3
Կոտայք	7.6	27.8	23.9	87.0	94.7
Շիրակ	-	-	-	-	-
Սյունիք	-	-	-	-	-
Վայոց Ձոր	9.7	137.8	0.1	0.3	-
Տավուշ	0.9	-	-	-	-
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>128.0</b>	<b>221.0</b>	<b>82.9</b>	<b>147.4</b>	<b>293.6</b>

Աղբյուրը. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե<sup>79</sup>

2016թ. Վայոց Ձորի մարզում գրանցված հանքային ջրերի հեռացման մեծ ծավալները (ավելի մեծ քան օգտագործումը) կապված են այն հանգամանքի հետ, որ ներառում են ազատ հոսքերից մի հատված, որը հեռացվել է կոյուղիով: 2019թ. Գեղարքունիքի և Կոտայքի մարզում հեռացման ծավալները մեծ են, քանի որ Գեղարքունիքի մարզում հանքային ջրերն օգտագործվել են հիմնականում ածխաթթու գազի կորզման, իսկ Կոտայքի մարզում՝ ռեկրեացիայի նպատակով, որոնց դեպքում, ինչպես նշվել է, հանքային ջրերի ամբողջ ծավալները ենթակա են հեռացման:

**4.3.4. Արդյունահանված հանքային ջրերի օգտագործումը**

Ինչպես արդեն նշվել է, արդյունահանված հանքային ջրերը օգտագործվում են հետևյալ հիմնական նպատակներով՝ շշալցում, ածխաթթու գազի կորզում, բուժական և ռեկրեացիոն: Խմելու հանքային ջրերը 1 գ/դմ<sup>3</sup>-ից ոչ պակաս հանքայնացումով կամ ավելի քիչ հանքայնացումով, սակայն խմելու հանքային ջրերի համար ընդունված բալնեոլոգիական նորմաներից ոչ պակաս քանակությամբ կենսաբանական ակտիվ նյութեր պարունակող ջրերն են<sup>80</sup>:

Հայաստանի Հանրապետությունում արտադրված խմելու հանքային ջրերի ծավալները բնեղեն և դրամական արտահայտությամբ ներկայացված են ստորև՝ աղյուսակներում:

Աղյուսակ 4.3.4.1

Խմելու հանքային ջրերի արտադրությունը ՀՀ-ում 2015-2019թթ. ընթացքում, հազար լիտր

	2015	2016	2017	2018	2019
Ջրեր հանքային և գազավորած, չքաղցրացված և չբուրավետացված	45,066	48,397	41,431	40,962	45,012
Ջրեր բնական հանքային, չգազավորած	31,629	32,282	36,897	39,345	49,814
<b>Ընդամենը</b>	<b>76,695</b>	<b>80,679</b>	<b>78,328</b>	<b>80,307</b>	<b>94,826</b>

Աղբյուրը. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե<sup>81</sup>

<sup>79</sup> [https://www.armstat.am/file/article/eco\\_book\\_2019\\_5.pdf](https://www.armstat.am/file/article/eco_book_2019_5.pdf), Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում,

<sup>80</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docID=93840>, Հանքային ջրերին ներկայացվող պահանջները հաստատելու մասին ՀՀ Կառավարության որոշում, Կետ 2

<sup>81</sup> <https://www.armstat.am/file/doc/99520938.pdf>, Արդյունաբերության տարեգիրք

Աղյուսակ 4.3.4.2

Հանքային ջրերի արտադրությունը և վերջինիս մասնաբաժինը ՀՀ ընդհանուր թողարկման մեջ 2015-2019թթ. ընթացքում, միլիոն դրամ

	2015	2016	2017	2018	2019
Բնական հանքային և այլ շշալցված ջրերի արտադրություն	13,087	11,834	13,147	13,071	14,602
Ապրանքների և ծառայությունների թողարկում ՀՀ-ում	7,069,111	7,148,940	7,782,851	8,391,362	9,037,520
Ոլորտի մասնաբաժինն ընդհանուր թողարկման մեջ	0.2%	0.2%	0.2%	0.2%	0.2%

Աղբյուրը. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե<sup>82</sup>

Բնական հանքային և այլ շշալցված ջրերի արտադրությունը 2015-2019թթ. ընթացքում կազմել է ՀՀ-ում ապրանքների և ծառայությունների ընդհանուր թողարկման 0.2%-ը:

Հարկ է նշել, որ արտադրության այս ծավալների մեջ ներառված են ոչ միայն բնական հանքային ջրերը, այլև արհեստական հանքային ջրերը, սովորական բնական ջրերը, սառույցը և ձյունը, արհեստական սառեցված ջուրը: Միևնույն ժամանակ այս ծավալների մեջ ներառված չեն բուրավետացված և քաղցրացված հանքային ջրերը, որոնք ներառված են «Ոչ ալկոհոլային այլ խմիչքներ» բաժնում՝ կազմելով դրա մի մասը:



*Խմելու հանքային ջրերի արտադրության մասին ավելի ամբողջական և հստակ տեղեկատվություն ստանալու համար անհրաժեշտ է առանձնացնել «Բնական հանքային ջրերի արտադրություն» ենթաբաժինը «Բնական հանքային և այլ շշալցված ջրերի արտադրություն» բաժնից, ինչպես նաև «Բուրավետացված և քաղցրացված բնական հանքային ջրերի արտադրություն» ենթաբաժինը «Ոչ ալկոհոլային այլ խմիչքների արտադրություն» բաժնից:*

Բուժական նպատակով արդյունահանված հանքային ջրերի ծավալների մասին տվյալները չեն ներկայացվում ըստ խմելու և արտաքին օգտագործման համար օգտագործվող ջրերի ծավալների: Հայտնի չեն արտաքին օգտագործման եղանակով բուժական նպատակով օգտագործվող հանքային ջրերի ծավալները բնեղեն և դրամային արտահայտությամբ, քանի որ արտաքին օգտագործման հանքային ջրերը վերջնական օգտագործման արտադրանք չեն և օգտագործվում են համապատասխան ծառայությունները մատուցելու համար: Նմանատիպ տեղեկատվության կարող են տիրապետել և տրամադրել առանձին կազմակերպությունները՝ ելնելով իրենց կողմից օգտագործվող հանքային ջրերի ծավալներից:

Ռեկրեացիոն նպատակով օգտագործվող հանքային ջրերը հիմնականում ջրային ավազաններ են, որոնք ծառայում են առավելապես հանգստի անցկացման համար: Դրանցից օգտվելու համար նախատեսվում են որոշակի վճարներ, սակայն այդ գործունեության ծավալման արդյունքում ստեղծված արժեքի մասին ևս տեղեկատվություն առկա չէ:

Հանքային ջրերից կորզված ածխաթթու գազի արտադրության մասին տվյալները ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից ներկայացվող վիճակագրական տեղեկատվության մեջ առանձին չեն ներկայացվում, այլ ներառված են «Արդյունաբերական գազերի արտադրություն» բաժնի մեջ՝ կազմելով դրա մի մասը:

<sup>82</sup> Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության հնգանիշ դասակարգման համապատասխան տարիների համար, դասակարգչի համար՝ 11.07.1



Քանի որ այս ճյուղի գործունեությունը և գործունեության ծավալները ևս ուղղակիորեն կապված են արդյունահանված հանքային ջրերի ծավալների հետ, ճյուղի կողմից ստեղծվող արտադրանքի և ավելացրած արժեքի մասին հստակ տեղեկատվություն ստանալու նպատակով անհրաժեշտ է ստորերկրյա հանքային ջրերի կորզմամբ ածխաթթու գազի արտադրության ծավալներն առանձնացնել «Արդյունաբերական գազերի արտադրություն» բաժնից:

#### 4.3.5. Մետաղական բնական պաշարների վերամշակում

ՀՀ ՎԿ-ի կողմից տրված տեղեկատվության համաձայն, վերամշակմանը վերաբերող արտադրատեսակների ծավալների վերաբերյալ հասանելի է հետևյալ տեղեկատվությունը.

##### Աղյուսակ 4.3.5.1

Մետաղական բնական պաշարների վերամշակմանը վերաբերող արտադրություն, տոննա

	2015	2016	2017	2018	2019
Ձուլազանգվածներ չլեգիրված (ածխածնային) պողպատից	19,315	15,725	17,968	17,410	14,810
Պողպատե խողովակներ, սնամեջ տրամատներ և դրանց կցամասերը	10,371	8,046	10,991	10,543	11,342
Բազմաշերտ պանելներ պողպատե թերթերից	5,259	6,401	8,054	12,306	26,744
Ալյումինե սալեր, թերթեր, շերտեր և ժապավեններ 0.2 մմ-ից ավել հաստությամբ	11	6	543	164	11
Ալյումինե նրբաթիթեղ 0.2 մմ-ից ոչ ավելի հաստությամբ	29,642	29,011	33,181	28,359	30,547
Պղինձ կոպտամշակ	11,601	12,920	12,051	8,831	-

Աղբյուրը. ՀՀ ՎԿ-ի՝ ԱՃԹՆ-ի նախնական ուսումնասիրության շրջանակում տրամադրված տեղեկատվություն

Միևնույն ժամանակ ՀՀ ՎԿ-ի պաշտոնական կայքում հասանելի են մետաղական բնական պաշարների վերամշակմանը վերաբերող դրամային տվյալներ:

##### Աղյուսակ 4.3.5.2

Մետաղական բնական պաշարների վերամշակմանը վերաբերող արտադրություն ընթացիկ գներով, միլիոն դրամ

	2015	2016	2017	2018	2019
Պողպատե խողովակներ, սնամեջ տրամատներ և դրանց կցամասերը	2,001	1,571	2,071	3,204	2,365
Պողպատի սառը դրոշմում կամ ճկում	4,514	4,856	6,487	6,892	7,353
Թուջի ձուլում	6,132	6,445	5,388	371	254
Պողպատի ձուլում	8,934	6,315	6,820	5,029	5,742
Մետաղի կռում, մամլում, դրոշմում և գլոցում	137	144	143	310	1,437
Մետաղների մշակում և պատում	394	224	368	648	213
Մետաղների մեխանիկական մշակում	-	-	0	4	17

Աղբյուրը. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե<sup>83</sup>

<sup>83</sup> [https://www.armstat.am/file/article/5nish\\_12\\_2019-.pdf](https://www.armstat.am/file/article/5nish_12_2019-.pdf)  
[https://www.armstat.am/file/article/5nish\\_12\\_2018.pdf](https://www.armstat.am/file/article/5nish_12_2018.pdf)

Նկատելի է, որ 2015-2019թթ. ընթացքում թուջի և պողպատի ձուլման գործունեության ընդհանուր արդյունքները նվազել են, ընդ որում թուջի ձուլման ծավալները դրամական արտահայտությամբ նշված ժամանակահատվածի ընթացքում նվազել են մոտ 24 անգամ՝ հասնելով 254 մլն դրամի:

#### 4.4. Արդյունահանված ստորերկրյա հանքային ջրերի և վերամշակված բնական մետաղական պաշարների արտահանումը (պահանջ 3.3)

##### 4.4.1. Հանքային ջրերի արտահանում

Խմելու հանքային ջրերի արտահանման ծավալները բնեղեն և դրամային արտահայտությամբ ներկայացված են ստորև աղյուսակներում:

###### Աղյուսակ 4.4.1.1

Բնական հանքային ջրերի՝ ՀՀ-ից արտահանման ծավալները 2015-2019թթ. ընթացքում, հազար լիտր

	2015	2016	2017	2018	2019
Բնական հանքային ջրեր (չգազավորած)	560.8	690.1	799.5	912.6	1,107.5
Բնական հանքային ջրեր (այլ)	8,482.2	8,651.8	9,438.7	9,745.0	11,698.6
<b>Ընդամենը</b>	<b>9,043.0</b>	<b>9,341.9</b>	<b>10,238.2</b>	<b>10,657.6</b>	<b>12,806.1</b>

Աղբյուրը. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե<sup>84</sup>

###### Աղյուսակ 4.4.1.2

Բնական հանքային ջրերի՝ ՀՀ-ից արտահանման ծավալները և վերջինիս մասնաբաժինը ՀՀ ընդհանուր արտահանման մեջ 2015-2019թթ. ընթացքում, ԱՄՆ դոլար

	2015	2016	2017	2018	2019
Բնական հանքային ջրեր (չգազավորած)	299,984	427,712	444,183	489,982	519,546
Բնական հանքային ջրեր (այլ)	4,971,249	4,711,961	5,727,710	5,357,042	6,032,262
<b>Ընդամենը</b>	<b>5,271,233</b>	<b>5,139,673</b>	<b>6,171,893</b>	<b>5,847,024</b>	<b>6,551,808</b>
ՀՀ ընդհանուր արտահանումը, հազար ԱՄՆ դոլար	1,485,332	1,791,724	2,237,698	2,412,433	2,648,583
Ոլորտի արտահանման մասնաբաժինն ընդհանուր արտահանման մեջ	0.35%	0.29%	0.28%	0.24%	0.25%

Աղբյուրը. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե<sup>85</sup>

Բնական հանքային ջրերի արտահանման մասնաբաժինն ընդհանուր արտահանման մեջ վերը նշված նույն ժամանակահատվածի ընթացքում տատանվել է 0.24%-0.35%-ի սահմաններում:

[https://www.armstat.am/file/article/5nish\\_12\\_2017.pdf](https://www.armstat.am/file/article/5nish_12_2017.pdf)

<https://www.armstat.am/file/article/5nish-12-2016.pdf>

Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության հնգանիշ դասակարգման համապատասխան տարիների համար

<sup>84</sup> Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 10-նիշ դասակարգման), Պատրաստի սննդի արտադրանք բաժին, դասակարգչի համարներ՝ 2201101100, 2201101900

<sup>85</sup> Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 10-նիշ դասակարգման), Պատրաստի սննդի արտադրանք բաժին, դասակարգչի համարներ՝ 2201101100, 2201101900,

Այստեղ տվյալներն ավելի լավ են արտացոլում հանքային ջրերի ծավալները, չնայած, որ բուրավետացված բնական հանքային ջրերի ծավալներն այս դեպքում ևս չեն ներառված:

Ներքևում ներկայացված են ածխաթթու գազի արտահանման ծավալները:

*Աղյուսակ 4.4.1.3*

*Ածխաթթու գազի՝ ՀՀ-ից արտահանման ծավալները 2015-2019թթ. ընթացքում*

	2015	2016	2017	2018	2019
<b>Ածխաթթու գազ (կգ)</b>	507,854.1	675,680.5	1,054,820.1	1,418,540.0	1,867,546.3
<b>Ածխաթթու գազ (ԱՄՆ դոլար)</b>	116,618	132,979	185,577	255,929	336,819

Աղբյուրը. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե<sup>86</sup>

Ածխաթթու գազ հնարավոր է արտադրել տարբեր մեթոդներով, որոնցից մեկը հանքային ջրերից նրա կորզումն է: Վերևի աղյուսակում ներկայացված ցուցանիշները ներառում են արտադրական բոլոր մեթոդներով արտադրված ածխաթթու գազի արտահանման ծավալները և առանձնացված չեն կոնկրետ հանքային ջրերից կորզված և արտահանված ածխաթթու գազի ծավալները:

Արտաքին օգտագործման (բուժական և ռեկրեացիոն նպատակներով օգտագործվող) հանքային ջրերի արտահանում առկա չէ:

**4.4.2. Հանքաքարերի և խտանյութերի արտահանում**

Ներքևում ներկայացվում են հանքաքարերի և խտանյութերի արտահանման ծավալները 2015-2019թթ. ընթացքում դրամային և բնաիրային տեսքով:

*Աղյուսակ 4.4.2.1*

*Հանքաքարերի և խտանյութերի արտահանման ծավալները, տոննա*

	2015	2016	2017	2018	2019
<b>Պղնձի հանքաքար, խտանյութ</b>	309,184	397,207	475,759	424,815	562,016
<b>Ցինկի հանքաքար, խտանյութ</b>	14,137	9,256	10,193	12,473	12,158
<b>Մոլիբդենի հանքաքար, խտանյութ</b>	960	210	1,214	762	2,092
<b>Թանկարժեք մետաղի հանքաքար, խտանյութ</b>	6,497	6,062	2,164	3,100	3,306

Աղբյուրը. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե<sup>87</sup>

<sup>86</sup> Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 10-նիշ դասակարգման), Այլ անօրգանական թթուներ և ոչ մետաղների թթվածնային պարունակությամբ անօրգանական այլ միացություններ, դասակարգչի համար՝ 2811210000

<sup>87</sup> <https://www.armstat.am/am/?nid=148>, Արտաքին առևտրի տվյալների բազա ըստ ապրանքային անվանացուցակի 4-նիշ դասակարգման

Աղյուսակ 4.4.2.2

Հանքաքարերի և խտանյութերի արտահանման ծավալները, հազար ԱՄՆ դոլար

	2015	2016	2017	2018	2019
Պղնձի հանքաքար, խտանյութ	316,636	356,721	571,485	525,478	626,668
Ցինկի հանքաքար, խտանյութ	12,021	9,617	16,589	20,489	16,475
Մոլիբդենի հանքաքար, խտանյութ	5,763	963	8,641	7,641	17,902
Թանկարժեք մետաղի հանքաքար, խտանյութ	31,562	33,172	2,002	3,273	3,090

Աղբյուրը. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե<sup>88</sup>

Այլումինի, մարգանեցի, նիկելի, կապարի, կոբալտի, քրոմի, վոլֆրամի, տիտանի և անագի հանքաքարերի արտահանում 2014-2019թթ. ընթացքում չի իրականացվել: Երկաթի արտահանման ցուցանիշները նույն ժամանակահատվածի ընթացքում եղել են ոչ նշանակալի և ոչ պարբերական. տեղի է ունեցել միայն 0.05 տոննայի արտահանում 2018թ.:

Ըստ ՎԿ-ի կողմից ներկայացված բանավոր պարզաբանման՝ բնական մետաղական պաշարների վերամշակման ոլորտի արտադրանքի արտահանման ավելի շատ տվյալներ, քան ներկայացվում է ՎԿ-ի պաշտոնական կայքում, առկա չէ:

#### 4.5. Ոլորտների ընկերությունների կողմից կատարվող սոցիալական և բնապահպանական ծախսումները (Պահանջ 6.1)

##### 4.5.1. Ոլորտների ընկերությունների կողմից իրականացվող սոցիալ-տնտեսական ծախսումները

ՏԿԵՆ-ի պաշտոնական կայքում ներկայացված են 2021թ. հունիսի 30-ի դրությամբ առկա ածխաթթվային ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքներն ու պայմանագրերը: Ըստ այդ պայմանագրերում ներկայացված տեղեկատվության՝ որոշ ընկերությունների կողմից ստանձնվել են պարտավորություններ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում: Այդ պարտավորությունները ներկայացված են ստորև՝ աղյուսակում:

Աղյուսակ 4.5.1.1

Ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանմամբ զբաղվող ընկերությունների կողմից պայմանագրով սրանձնված սոցիալ-տնտեսական պարտավորությունները

Ընկերության անվանում	Պարտավորության անվանում	Կատարման ժամկետ	Ներդրումների չափ (հազար դրամ)
«Ավշար ջուր» ՍՊԸ	Դաշտաքար համայնքի բյուջե ներդրում	տարեկան	50
«Էկո Ագրո» ՍՊԸ	Կոտայքի մարզի Թեղենիք համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն	տարեկան	250
«Էմ Այ Բի Քոնսալթինգ» ՍՊԸ	Համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն՝ վճարելով համայնքի բյուջե	տարեկան	400
«Էյ Ընդ Էմ Ռեյր» ՍՊԸ	Դպրոցի կահավորում / կամ համանման այլ գործողություն	2017 թ.	300

<sup>88</sup> <https://www.armstat.am/am/?nid=148>, Արտաքին առևտրի տվյալների բազա ըստ ապրանքային անվանացուցակի 4-նիշ դասակարգման



Ընկերության անվանում	Պարտավորության անվանում	Կատարման ժամկետ	Ներդրումների չափ (հազար դրամ)
	Համայնքի ավտոճանապարհների վերանորոգում	տարեկան	200
	Սոցիալապես անապահով ընտանիքներին օգնություն	տարեկան	500
	Սպորտհրապարակի կահավորում	2017 թ. – 2019 թ.	500
«Իջևանի գինու, կոնյակի գործարան» ՓԲԸ	Աջաջուր համայնքի բյուջե ներդրում	տարեկան	500
«Լիճք» Հանքային ջրերի գործարան» ՍՊԸ	Համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն՝ վճարելով համայնքի բյուջե (այդ թվում՝ մանկապարտեզի աշխատանքներին ֆինանսական մասնակցություն և դպրոցի կարիքների համար գրենական պիտույքների ձեռքբերում)	տարեկան	150
«Լիճք» Հանքային ջրերի գործարան» ՍՊԸ*	Համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն՝ վճարելով համայնքի բյուջե (այդ թվում՝ մանկապարտեզի աշխատանքներին ֆինանսական մասնակցություն և դպրոցի կարիքների համար գրենական պիտույքների ձեռքբերում)	տարեկան	100
«Կառա» ՍՊԸ	Տավուշի մարզի Դիլիջան համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն՝ վճարելով համայնքի բյուջե	տարեկան	200
«Հանքավան» առողջարանային համալիր» ԲԲԸ	Համայնքի բյուջե ներդրում	տարեկան	1,500
«Նյու Իդա» ՍՊԸ	Ստեփանավան համայնքի Կաթնաղբյուր գյուղի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն	տարեկան	500
	Ստեփանավան համայնքի Կաթնաղբյուր գյուղի սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողի ուսման տարեկան վարձի տրամադրում	տարեկան	300
	Ստեփանավան համայնքի Կաթնաղբյուր գյուղի դպրոցի համար անհրաժեշտ սարքավորումների, նյութերի, գրենական պիտույքների տրամադրում	տարեկան	200
«Զերմուկ Գրուպ» ՓԲԸ	Համայնքի բյուջե ներդրում	տարեկան	200
«Զերմուկ Գրուպ» ՓԲԸ*	Համայնքի բյուջե ներդրում	տարեկան	300
«Սվ Զուր» ՍՊԸ	Համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն՝ վճարելով համայնքի բյուջե	տարեկան	450

Ընկերության անվանում	Պարտավորության անվանում	Կատարման ժամկետ	Ներդրումների չափ (հազար դրամ)
«Սևան» Հանքային ջրերի գործարան» ՍՊԸ	Գավառ քաղաքի սոցիալական զարգացման ծրագրերին մասնակցություն	տարեկան	500
«Վանակվա գրուպ» ՍՊԸ	Համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն	տարեկան	50
	Սոցիալապես անապահով ընտանիքի 1 ուսանողի ուսման տարեկան վարձի տրամադրում	տարեկան	100
	Դպրոցի համար անհրաժեշտ գրենական պիտույքների տրամադրում	տարեկան	100
«Վարդ աղբյուր» ՍՊԸ	Վարդաղբյուր, Ջուլգաղբյուր և Կարմիրավան համայնքների բյուջե ներդրում	տարեկան	յուրաքանչյուր համայնքին 500-ական
«Տեխնոման» ՍՊԸ	Համայնքի սոցիալական զարգացման ծրագրերին մասնակցություն	տարեկան	400
«Տեխնոման» ՍՊԸ*	Համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն՝ վճարելով համայնքի բյուջե	տարեկան	200

Նշումներ. \* նույն կազմակերպության կողմից ստանձնվել են տարբեր պարտավորություններ տարբեր գործունեությունների իրականացման համար ստացած նույն պայմանագրի ներքո Աղբյուրը. ՏԿԵՆ-ի պաշտոնական կայքում ներկայացված տեղեկատվություն<sup>89</sup>

Նկատելի է, որ հիմնականում պարտավորությունների կատարումը կրում է պարբերական բնույթ (տարեկան), իսկ պարտավորությունների գումարը հիմնականում չի գերազանցում 1 մլն ՀՀ դրամը:

#### 4.5.2. Բնապահպանական հարկ

Ըստ ՀՀ հարկային օրենսգրքի, բնապահպանական հարկը բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով պետական բյուջե վճարվող հարկ է<sup>90</sup>: Այն վճարվում է ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով ու չափերով<sup>91</sup>: Օրենսգրքի 162-րդ հոդվածը սահմանում է, թե ովքեր են բնապահպանական հարկ վճարողները, իսկ 164-րդ հոդվածը սահմանում է բնապահպանական հարկով հարկման օբյեկտը:

#### Հանքային ջրերի արդյունահանում

Հանքային ջրերի արդյունահանում իրականացնելու համար ընդերքօգտագործումը վճարովի է: Մասնավորապես, ըստ ՏԿԵՆ-ի և ՊԵԿ-ի կողմից տրված տեղեկատվության, հանքային ջրերի արդյունահանում իրականացնողների կողմից 2018-2019թթ. ընթացքում պետական բյուջե կատարվող բնապահպանական ծախսումներն են եղել.

- բնապահպանական հարկ՝ բնապահպանական միջոցառումների իրականացման համար,
- պետական սեփականություն համարվող բնական պաշարների օգտագործման համար բնօգտագործման վճար,

<sup>89</sup> <http://mtad.am/hy/mtad01.07.2/>

<sup>90</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=153241>, ՀՀ Հարկային օրենսգիրք, Բաժին 8, Գլուխ 30, Հոդված 161, Կետ 1

<sup>91</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=153241>, ՀՀ Հարկային օրենսգիրք, Բաժին 8


- պետական տուրքեր՝ ընդերքօգտագործման և ջրօգրագործման թույլտվությունների տրամադրման համար:

Ըստ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության, 2019թ. ստորերկրյա հանքային ջրեր արդյունահանող ընկերությունների կողմից բնապահպանական հարկի վճարները կազմել են 21.3 մլն դրամ՝ մնալով գրեթե անփոփոխ նախորդ տարվա նկատմամբ և կազմելով նույն տարում ոլորտից պետբյուջեի ստացած եկամուտների 0.4%-ը: 2018-2019թթ. հարկ վճարած ստորերկրյա հանքային ջրեր արդյունահանող 31 ընդերքօգտագործողներից միայն ինն է բնապահպանական հարկ վճարել իր գործունեության իրականացման համար, իսկ յոթը՝ ԵՏՄ տարածքից հարկման ենթակա արտադրատեսակ ներմուծելու համար: Ընդ որում, 2019թ. բնապահպանական հարկի ընդհանուր վճարների մոտ 73%-ը կատարվել է միայն մեկ կազմակերպության կողմից:

**Գծապատկեր 4.5.2.1**

*Ստորերկրյա հանքային ջրեր արդյունահանող ընկերությունների կողմից իրականացված բնապահպանական հարկի վճարները 2018 և 2019թթ. ընթացքում, հազար դրամ*

Աղբյուրը. ՊԵԿ-ի՝ ԱՃԹՆ-ի նախնական ուսումնասիրության շրջանակում ներկայացված տեղեկատվություն



**Մետաղական բնական պաշարների վերամշակում**


Մետաղական բնական պաշարների վերամշակման ոլորտի կազմակերպությունների կողմից պետական բյուջե կատարվում են հետևյալ բնապահպանական վճարները՝

- բնապահպանական հարկ,
- բնօգտագործման վճար,
- ռոյալթի:

Ըստ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության, 2019թ. մետաղական բնական պաշարների վերամշակման ոլորտի ընկերությունների կողմից բնապահպանական հարկի վճարները կազմել են 46.6 մլն ՀՀ դրամ՝ աճելով 53.2%-ով նախորդ տարվա նկատմամբ և կազմելով նույն տարվա ընթացքում ոլորտից պետբյուջե մուտքերի 0.6%-ը: 2018-2019թթ. 64 վերամշակողներից միայն 12-ն է բնապահպանական հարկ վճարել իր գործունեության իրականացման համար, իսկ չորսը՝ ԵՏՄ տարածքից հարկման ենթակա արտադրատեսակ ներմուծելու համար: Ընդ որում, 2019թ. բնապահպանական հարկի ընդհանուր վճարների մոտ 78.5%-ը կատարվել է միայն երկու կազմակերպությունների կողմից 2018թ. 83.3%-ի դիմաց:

#### Գծապատկեր 4.5.2.2

Բնական պաշարների վերամշակման ոլորտի ընկերությունների կողմից իրականացված բնապահպանական հարկի վճարները 2018 և 2019թթ. ընթացքում, հազար դրամ



Աղբյուրը. ՊԵԿ-ի ԱՃԹՆ-ի նախնական ուսումնասիրության շրջանակում ներկայացված տեղեկատվություն

#### 4.5.3. Բնօգտագործման վճար

##### Հանքային ջրերի արդյունահանում

Ըստ ՀՀ հարկային օրենսգրքի, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման համար բնօգտագործման վճար վճարողներ են համարվում Հայաստանի Հանրապետության ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանում իրականացնող ընդերքօգտագործողները (այդ թվում՝ արտադրված ածխաթթու գազի համար)<sup>92</sup>: Ինչպես նշվեց 2-րդ գլխում, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման (այդ թվում՝ ածխաթթու գազի արտադրության) համար բնօգտագործման վճարի բազա է համարվում արդյունահանված հանքային ջրի փաստացի ծավալը՝ հորատանցքից (աղբյուրից) երկրի մակերևույթ դուրս եկած (արտանդված) ջրի ծավալը: Եթե ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանմանը զուգահեռ իրականացվում է նաև ածխաթթու գազի արտադրություն, ապա ածխաթթու գազի արտադրության համար բնօգտագործման վճարի բազա է համարվում արտադրված ածխաթթու գազի փաստացի ծավալը<sup>93</sup>: Արդյունահանված հանքային ջրի համար վճարների հաշվարկն իրականացվում է հաշվետու ժամանակաշրջանում արդյունահանված յուրաքանչյուր խորանարդ մետր հանքային ջրի համար, հարկային օրենսգրքով սահմանված դրույքաչափերով, որոնք ներկայացվել են 2-րդ գլխում:

Ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների համար պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով՝

1. միայն մեկ նպատակով հանքային ջրի հորատանցքը շահագործելիս՝ ջրօգտագործողների կողմից Կառավարության սահմանած կարգով տեղադրված ջրահաշվիչ սարքով (առաջնային ջրահաշվիչով) հաշվետու ժամանակաշրջանում հաշվառված ջրի ծավալը և շահագործման տվյալ նպատակի համար ՀՀ հարկային օրենսգրքի 206-րդ հոդվածով սահմանված համապատասխան դրույքաչափը,

<sup>92</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=153241>, ՀՀ Հարկային օրենսգրք, Բաժին 10, Գլուխ 40, Հոդված 198, Կետ 3

<sup>93</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=153241>, ՀՀ Հարկային օրենսգրք, Բաժին 10, Գլուխ 40, Հոդված 201, Կետ 3

2. միաժամանակ մեկից ավելի նպատակներով հանքային ջրի հորատանցքը շահագործելիս ջրօգտագործողների կողմից Կառավարության սահմանած կարգով տեղադրված յուրաքանչյուր ջրահաշվիչ սարքով հաշվետու ժամանակաշրջանում հաշվառված ջրի ծավալը և ՀՀ հարկային օրենսգրքի 206-րդ հոդվածով սահմանված համապատասխան դրույքաչափը՝ որպես շահագործման առանձին նպատակների համար հաշվարկված բնօգտագործման վճարների հանրագումար,
3. ածխաթթու գազ ստանալու նպատակով գազանջատիչից դուրս եկող գազի խողովակի վրա ածխաթթու գազ ստանալու սարք տեղադրված (միացված) լինելու դեպքում ջրօգտագործողի կողմից արտադրված ածխաթթու գազի համար բնօգտագործման վճարը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանում գազանջատիչից դուրս եկող գազի խողովակի վրա Կառավարության սահմանած կարգով տեղադրված գազաչափով հաշվառված ածխաթթու գազի ծավալը և ՀՀ հարկային օրենսգրքի 206-րդ հոդվածով՝ ըստ հանքավայրի սահմանված համապատասխան դրույքաչափը<sup>94</sup>:

2018թ. հունվարի 1-ից ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման համար կիրառվող բնօգտագործման վճարի դրույքաչափերը որոշվում են որպես սահմանված դրույքաչափերի և 1.1 գործակցի արտադրյալ, 2019թ. հունվարի 1-ից՝ որպես սահմանված դրույքաչափերի և 1.2 գործակցի արտադրյալ, իսկ 2020թ. հունվարի 1-ից՝ որպես սահմանված դրույքաչափերի և 1.3 գործակցի արտադրյալ<sup>95</sup>:

ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն, 2019թ. ստորերկրյա հանքային ջրեր արդյունահանող ընկերությունների կողմից իրականացված բնօգտագործման ընդհանուր վճարները կազմել են մոտ 398.1 մլն դրամ, իսկ 2018թ.՝ 344.6 մլն դրամ: Նշված երկու տարիների ընթացքում բնօգտագործման վճարներ կատարել են 21 ընկերություններ, ընդ որում, վճարների մոտ 83%-84%-ը հավաքագրվել է միայն երկու կազմակերպությունից:

### **Մետաղական բնական պաշարների վերամշակում**

2019թ. բնօգտագործման վճարի մուծում իրականացրել է ընդամենը 3 վերամշակող ընկերություն ընդհանուր 1.3 մլն դրամի չափով՝ 2018թ. 1.4 մլն դրամի փոխարեն: Ընդ որում, այդ երկու տարիների ընթացքում վճարների մոտ 97.6%-ն իրականացվել է միայն մեկ կազմակերպության կողմից:

Ինչպես նշվել է սույն ուսումնասիրության Բաժին 2.2-ում, թափոնների վերամշակման արդյունքում ստեղծվող արտադրանքի իրացման շրջանառությունից առաջանում է ոռոյալթի վճարելու պարտավորություն, չնայած Հայաստանում դեռևս չկա ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նախադեպ:

#### **4.5.4. Պետական տուրք**

##### **Հանքային ջրերի արդյունահանում**

Պետական սեփականություն հանդիսացող ընդերքի և օգտակար հանածոների, մասնավորապես հանքային ջրերի յուրաքանչյուր հանքավայրի կամ հանքահորի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար կազմակերպությունները պետք է վճարեն պետական տուրք: Տուրքի դրույքաչափերը ներկայացված են ստորև աղյուսակում:

<sup>94</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=153241>, ՀՀ Հարկային օրենսգրք, Բաժին 10, Գլուխ 43, Հոդված 216, Կետ 2

<sup>95</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=153241>, ՀՀ Հարկային օրենսգրք, Բաժին 10, Գլուխ 41, Հոդված 206, Կետ 6

Աղյուսակ 4.5.4.1

Հանքավայրի կամ հանքահորի օգտագործման (շահագործման) համար վճարվող տարեկան պետական տուրքի չափն ըստ հանքային ջրերի արդյունահանման նպատակների

Օգտագործման նպատակ	Տուրքի չափ
արդյունաբերական (շշալցում)	բազային տուրքի 5,000-ապատիկի չափով
արդյունաբերական (ածխաթթու գազի ստացում)	բազային տուրքի 500-ապատիկի չափով
բուժական/ռեկրեացիոն	բազային տուրքի 500-ապատիկի չափով

Աղբյուրը. Պետական տուրքի մասին ՀՀ օրենք<sup>96</sup>

Բազային տուրքի չափ է սահմանվում 1,000 դրամը:

Ինչպես նշվել է 2.2 բաժնում, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում կատարված փոփոխությունների համաձայն, մեկից ավելի արդյունահանման նպատակ ունեցող հանքային ջրի արդյունահանման թույլտվության դեպքում թույլտվության տրամադրման համար պետական տուրքի դրույքաչափը հաշվարկվում է «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նպատակների դրույքաչափերի հանրագումարով<sup>97</sup>:

Հանքային ջրերի յուրաքանչյուր հանքավայրի կամ հանքահորի՝ արդյունաբերական (շշալցման) նպատակով օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար վճարված պետական տուրքերի ընդհանուր գումարը 2019թ. կազմել է 91.8 մլն դրամ, ինչը 22.6 մլն դրամով ավելի շատ է նախորդող տարվա ընթացքում հավաքագրված գումարից:

2019թ. ընթացքում ստորերկրյա հանքային ջրեր արդյունահանող ընկերությունների կողմից իրականացվել է նաև երկու վճարում ջրօգտագործման թույլտվության տրամադրման համար՝ ընդամենը 20,000 ՀՀ դրամի չափով, իսկ 2019թ.՝ յոթ վճարում՝ ընդամենը 70,000 ՀՀ դրամի չափով:

#### 4.6. Բվազի-ֆիսկալ ծախսումները (Պահանջ 6.2)

Ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման և մետաղական բնական պաշարների վերամշակման ոլորտներում պետությունը մասնակցություն չունի:

#### 4.7. Ոլորտների ներդրումը տնտեսության մեջ (Պահանջ 6.3)

Հանքային ջրերի արտադրության և արտահանման մասնաբաժինները համապատասխանաբար ընդամենն ապրանքների և ծառայությունների թողարկման և ընդհանուր արտահանման մեջ, ինչպես նաև արտադրության կենտրոնացվածության վերլուծությունը ներկայացվել են սույն գլխի 4.3 և 4.4 բաժիններում:

<sup>96</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=154071>, Պետական տուրքի մասին ՀՀ օրենք, Գլուխ 4, Հոդված 19.4, Կետ 6

<sup>97</sup> <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=7607&lang=arm>, «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք (ՀՕ 172-Ն, ընդունվել է 14 ապրիլի 2021թ.)

#### 4.7.1. Ոլորտներում զբաղվածությունը

##### Հանքային ջրերի արդյունահանում

Ըստ ՀՀ ՎԿ-ի կողմից տրված մեկնաբանության, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման և մետաղական բնական պաշարների վերամշակման (ներառյալ հանքաքարի և խտանյութի առք ու վաճառքով զբաղվող տեղական կազմակերպությունների գործունեությունը) ոլորտների աշխատանքի շուկայի տվյալներից առկա է վարձու աշխատողների թվաքանակը:

##### Աղյուսակ 4.7.1.1

Բնական հանքային և այլ շրջված ջրերի արտադրության ոլորտի վարձու աշխատողների թվաքանակը և վերջինիս մասնաբաժինը ՀՀ ընդամենն աշխատողների մեջ, 2015-2019թթ.

	2015	2016	2017	2018	2019
Կին	300	300	300	800	900
Տղամարդ	800	800	900	300	300
Ընդամենը	1,100	1,100	1,200	1,100	1,200
ՀՀ ընդամենն աշխատողների թվաքանակ*	-	-	519,776	556,677	598,237
Ոլորտի մասնաբաժինն ընդհանուրի մեջ	-	-	0.2%	0.2%	0.2%

Նշումներ. \*Ըստ ՀՀ ՎԿ-ի կողմից տրված մեկնաբանության, 2017թ. նախորդող տարիների համար տվյալ ցուցանիշը չի հաշվարկվել

Աղբյուրը. ՀՀ ՎԿ-ի ԱՃԹՆ-ի նախնական ուսումնասիրության շրջանակում տրամադրված տեղեկատվություն, ՀՀ ՎԿ-ի պաշտոնական կայք<sup>98</sup>

##### Մետաղական բնական պաշարների վերամշակում

##### Աղյուսակ 4.7.1.2

Հիմնային մեքաղների արտադրության ոլորտի վարձու աշխատողների թվաքանակը և վերջինիս մասնաբաժինը ՀՀ ընդամենն աշխատողների մեջ, 2015-2019թթ.

	2015	2016	2017	2018	2019
Կին	400	400	400	400	400
Տղամարդ	3,800	3,300	3,400	3,800	3,900
Ընդամենը	4,200	3,700	3,800	4,200	4,300
ՀՀ ընդամենն աշխատողների թվաքանակ	-	-	519,776	556,677	598,237
Ոլորտի մասնաբաժինն ընդհանուրի մեջ			0.7%	0.8%	0.7%

Նշումներ. \*Ըստ ՀՀ ՎԿ-ի կողմից տրված մեկնաբանության, 2017թ. նախորդող տարիների համար տվյալ ցուցանիշը չի հաշվարկվել

Աղբյուրը. ՀՀ ՎԿ-ի ԱՃԹՆ-ի նախնական ուսումնասիրության շրջանակում տրամադրված տեղեկատվություն

Որպես այդպիսին, բնական պաշարների վերամշակմամբ կամ հանքաքարի և խտանյութի առք ու վաճառքով զբաղվող տեղական կազմակերպությունների աշխատանքի շուկայի առանձնացված տվյալներ չեն ներկայացվում ՀՀ ՎԿ-ի կողմից: Փոխարենը հանքարդյունաբերության և դրան

<sup>98</sup> [https://www.armstat.am/file/article/trud\\_2020\\_14.pdf](https://www.armstat.am/file/article/trud_2020_14.pdf)  
[https://www.armstat.am/file/article/trud\\_2019\\_11.pdf](https://www.armstat.am/file/article/trud_2019_11.pdf)

Աշխատանքի շուկան Հայաստանում համապատասխան տարիների համար

հարակից ոլորտների աշխատանքի շուկայի տվյալները բաժանվում են երկու մասի՝ մետաղական հանքաքարի արդյունահանման ոլորտ և հիմնային մետաղների արտադրության ոլորտ:



*Ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման և մետաղական բնական պաշարների վերամշակման (ներառյալ հանքաքարի և խտանյութի առք ու վաճառքով զբաղվող տեղական կազմակերպությունների գործունեությունը) ոլորտների աշխատանքի շուկայի մասին ապաստանագրված տեղեկատվություն չի ներկայացվում ՀՀ ՎԿ-ի կողմից:*

#### **4.7.2. Ոլորտների նկատմամբ հանրային հետաքրքրության գնահատվող մակարդակը**

Հանքային ջրերն օգտագործվում են ներքին (խմելու) և արտաքին (լոգանք, հիդրոմետրում, ցնցուղ և այլն) ընդունման միջոցով, ինչպես նաև ածխաթթու գազ կորզելու նպատակով: Հայաստանում հանքային ջրերի օգտագործման վերը նշված առաջին 2 եղանակների վերաբերյալ կա ձևավորված հանրային որոշակի հետաքրքրություն, սակայն արտաքին օգտագործման ճանապարհով սպառվող հանքային ջրերն ավելի մեծ ուշադրության են արժանանում:

Ընդհանուր առմամբ առցանց տիրույթում առկա են ոլորտի վերաբերյալ ոչ մեծ քանակությամբ ճանաչողական և վերլուծական նյութեր ինչպես հայերենով, այնպես էլ այլ լեզուներով (մասնավորապես ռուսերեն և անգլերեն): Դրանք վերաբերում են հիմնականում խմելու և արտաքին օգտագործման հանքային ջրերին: Ածխաթթու գազի կորզման ոլորտի մասին տեղեկատվություն գրեթե առկա չէ ու փաստացի հանքային ջրերի օգտագործման այս ճյուղը քիչ հետաքրքրական է հասարակության համար, քանի որ ոլորտը չունի էական վնասակար ազդեցություն շրջակա միջավայրի վրա (կներկայացվի հաջորդիվ՝ պահանջ 6.4-ի շրջանակներում), ինչպես նաև չկա ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանմամբ ածխաթթու գազի կորզման վերաբերյալ բավարար տեղեկացվածություն՝ ոլորտի վերաբերյալ տեղեկատվության բացակայության պատճառով:

Նկատելի է հետաքրքրությունը բուժական նպատակով հանքային ջրերի օգտագործման ոլորտում՝ ելնելով ոլորտին առնչվող հրապարակումներից և նյութերից: Առկա է բավական շատ տեղեկատվություն այս թեմայով տարբեր լեզուներով<sup>99</sup>, որոնք մասնավորապես վերաբերում են հանքային ջրերի բուժական հատկություններին ու առողջարաններին: Այսպիսի տեղեկություններ տեղադրում են հիմնականում առողջարանները և ճանապարհորդական կազմակերպությունները:

Խմելու հանքային ջրերի մասին տեղեկատվությունն առկա է հիմնականում դրանք վաճառող կազմակերպությունների կայքերում, ընդ որում ինչպես հայկական շուկայում, այնպես էլ արտասահմանյան, ինչպես հայերենով, այնպես էլ այլ լեզուներով: Հատկապես շեշտադրվում են ջրերի առողջարար հատկանիշները:

Պետք է նշել, որ անկախ փորձագիտական և մասնագիտական շրջանակների կողմից այս ոլորտի մասին տեղեկատվության հրապարակում շատ հազվադեպ է տեղի ունենում:

Ինչ վերաբերում է մետաղական բնական պաշարների վերամշակմանը, ապա այս ոլորտի մասին հանրային հետաքրքրության մակարդակը ցածր է: Ուսումնասիրությունների արդյունքում չեն հայտնաբերվել մասնագիտական հրապարակումներ, վերլուծություններ և հետազոտություններ տվյալ ոլորտի վերաբերյալ:



*Այսպիսով, հանքային ջրերի արդյունահանման ոլորտի հանրային հետաքրքրության մակարդակը մեծամասամբ ապահովվում է այդ ոլորտում գործող կամ այդ ոլորտի հետ կապված ընկերությունների/անձանց կողմից: Հասարակական հետաքրքրությունն ունի մեծամասամբ կոմերցիոն բնույթ և դրսևորվում է մեծամասամբ ոլորտի կողմից թողարկվող արտադրանքի և ծառայությունների*

<sup>99</sup> <https://izi.travel/ru/7fbc-jermowki-hank-ayin-jrer/hy>, <https://www.jermukarmenia.com/en/jermuk>



նկատմամբ պահանջարկի մակարդակով, իսկ ոլորտի վրա ներգործության կամ ոլորտում տեղի ունեցող իրադարձություններով հետաքրքրվածության մակարդակը ցածր է: Ոլորտը չունի էական ազդեցություն շրջակա միջավայրի վրա և այդ առումով ևս չի գրավում հասարակության ուշադրությունը: Ոլորտի վրա արտաքին ազդեցությունը պայմանավորված է առավելապես պետական միջնորդությամբ և վերահսկողությամբ:

Մերառական բնական պաշարների վերամշակման ոլորտի նկատմամբ հետաքրքրությունը ցածր է: Դրա պատճառներից մեկը վերը նշված այն հանգամանքն է, որ ոլորտի վերաբերյալ չկա բավարար տեղեկատվություն, որպեսզի ձևավորի հանրային հետաքրքրվածություն:

#### 4.7.3. Հովանավորչական-բարեգործական բնույթի միջոցառումների վերաբերյալ առկա տեղեկատվություն

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակում միջոցառումներ իրականացնում են հիմնականում ավելի մեծ ճանաչում ու գործունեության մեծ մասշտաբներ ունեցող կազմակերպությունները: Տարբեր ընկերությունների կայքերի ու այլ հասանելի տեղեկատվության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ստորերկրյա հանքային ջրեր արդյունահանող ընկերություններից հասարակական կամ բարեգործական գործունեություն ծավալում են հիմնականում «ՌՌՌ հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ն, «Երևանի գարեջուր» ՓԲԸ-ն և «Իջևանի գինու կոնյակի գործարան» ՓԲԸ-ն:

Ելնելով ընկերության կայքում տեղադրված տեղեկատվությունից՝ «ՌՌՌ հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ն<sup>100</sup> ծավալում է բավականաչափ ակտիվ հովանավորչական և բարեգործական գործունեություն: Տարբեր առիթների ընթացքում կազմակերպությունն անվճար տրամադրում է իր արտադրանքը՝ մասնավորապես սովորական խմելու ջուրը: Կազմակերպվում են ակցիաներ, որոնց շրջանակներում հաղթողները ստանում են նվերներ: «ՌՌՌ հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ն հովանավորել է «Այկիդո» սպորտաձևի սեմինարի անցկացումը: Կազմակերպությունը Հայ Օգնության Ֆոնդի անդամ է, որի շրջանակներում իրականացնում է բարեգործական գործունեություն, մասնավորապես միջոցառումներից մեկի արդյունքում հասույթի մի մասը փոխանցվել է մանուկների խնամքի համար նախատեսված ֆոնդին: Այսպիսով, կարելի է նկատել, որ այս կազմակերպությունը ծավալում է հովանավորչական-բարեգործական տարաբնույթ գործունեություն:

«Երևանի գարեջուր» ՓԲԸ-ի<sup>101</sup> և «Իջևանի գինու կոնյակի գործարան» ՓԲԸ-ի<sup>102</sup> հասարակական գործունեությունները նմանատիպ են և հիմնականում արտահայտվում են տարբեր տեսակի փառատոների և ցուցահանդեսների մասնակցությամբ, սակայն բարեգործական և հովանավորչական գործունեության ծավալման մասին տեղեկատվություն առկա չէ:

#### 4.8. Հանքային ջրերի արդյունահանման և մետաղական բնական պաշարների վերամշակման գործունեությունների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա (Պահանջ 6.4)

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի համաձայն, ընդերքօգտագործողը պետք է ապահովի մթնոլորտի, ջրային ռեսուրսների, հողի, կենդանական և բուսական աշխարհի պաշտպանությունն ու պահպանումը, ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցումը<sup>103</sup>: Ընդերքօգտագործողը պետք է նաև իրականացնի շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված պայմանագրային պարտավորությունները (առկայության դեպքում):

<sup>100</sup> <http://bjni.am/>

<sup>101</sup> <http://kilikia.am/>

<sup>102</sup> <https://www.ijevangroup.am/blog/cat/1>

<sup>103</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=146898>, ՀՀ ընդերքի մասին օրենսգրք, Գլուխ 8, Հոդված 64, Կետ 1

ՏԿԵՆ-ի պաշտոնական կայքում հրապարակված ստորերկրյա հանքային ջրեր արդյունահանող ընկերությունների պայմանագրերի մեջ ներկայացվում է բնապահպանական կառավարման պլան (առկայության դեպքում), որտեղ նշվում են ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումները: Յուրաքանչյուր ընկերության բնապահպանական կառավարման պլանը տարբեր է: Պլանի մեջ, որոշ դեպքերում, ներկայացվում է նաև միջոցառումների իրականացման համար հատկացման ենթակա գումարի չափը, որը ներկայացված է աղյուսակով:

*Աղյուսակ 4.8.1*

*Ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանմամբ զբաղվող ընկերությունների կողմից պայմանագրով սահմանված բնապահպանական միջոցառումների իրականացման համար հատկացվող գումարները*

Ընկերության անվանում	Հատկացվող գումարի չափ (հազար ՀՀ դրամ)
«Ավշար ջուր» ՍՊԸ	200
«Էկո Ագրո» ՍՊԸ	50
«Էյ Ընդ Էմ Ռեյր» ՍՊԸ	200
«Իջևանի գինու, կոնյակի գործարան» ՓԲԸ	200
«Հանքավան» առողջարանային համալիր» ԲԲԸ	200
«Նյու Իդա» ՍՊԸ	50
«Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ	200
«Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ*	200
«Սևան» Հանքային ջրերի գործարան» ՍՊԸ	100
«Վանակվա գրուպ» ՍՊԸ	40
«Վարդ աղբյուր» ՍՊԸ	200
«Տեխնոման» ՍՊԸ	100

Նշումներ. \* նույն կազմակերպության կողմից միջոցառումների իրականացման համար հատկացվում են առանձին գումարներ առանձին պայմանագրերի ներքո  
 Աղբյուրը. ՏԿԵՆ-ի պաշտոնական կայքում ներկայացված տեղեկատվություն<sup>104</sup>

Վերը ներկայացված բոլոր ընկերությունների դեպքում, ըստ պայմանագրի, բնապահպանական միջոցառումների մշտադիտարկումների ծրագիրը ենթակա է վերանայման 5 տարին մեկ պարբերականությամբ:

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի համաձայն, ընդերքի օգտագործման և պահպանության, ինչպես նաև ընդերքօգտագործման հետ կապված շրջակա միջավայրի պահպանության պետական կառավարումն իրականացնում են կառավարությունը և տվյալ բնագավառում լիազոր պետական կառավարման մարմինները՝ իրենց իրավասությունների շրջանակներում: Այդ իրավասությունների մեջ է մտնում ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման ժամանակ անհրաժեշտ ռեժիմային դիտարկումների, ջրային ռեսուրսները սպառումից և աղտոտումից պահպանելու միջոցառումների կարգի սահմանում<sup>105</sup>: ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում ներկայացված են 2020թ. դրությամբ ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլաններ, բնապահպանական միջոցառումների ծրագրեր և բնապահպանական կառավարման պլաններ

<sup>104</sup> <http://mtad.am/hy/mtad01.07.2/>

<sup>105</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=146898>, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքը, Գլուխ 2, Հոդված 15, Կետ 1 և 2

ներկայացրած ընկերությունների ցանկերը, որտեղ ներկայացված չէ ոչ մի հանքային ջուր արդյունահանող կազմակերպություն<sup>106</sup>:

Ռեժիմային դիտարկումները բնական և տեխնածին գործոնների ազդեցության հետևանքով ստորերկրյա հանքային ջրերի շահագործվող հանքավայրերի ջրային ռեսուրսների վիճակի (որակի, քանակի) փոփոխման նկատմամբ պարբերաբար իրականացվող գործողությունների համակարգն է, որն իրականացվում է տվյալ հանքավայրը շահագործող ընդերքօգտագործողի կողմից սեփական միջոցների հաշվին: Ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման ժամանակ անհրաժեշտ ռեժիմային դիտարկումների նպատակն է՝

- հանքավայրի շահագործման ժամանակ հանքային ջրի քանակի և որակի կայունության պահպանումը,
- հնարավոր սպառման և աղտոտման բացահայտումն ու նախագգուշացումը,
- ստորերկրյա հանքային ջրերի աղտոտման և սպառման աստիճանի գնահատման մասին հենակետային տվյալների ստացումը,
- ամփոփ տվյալների հիման վրա առաջարկությունների մշակումը և ներկայացումը լիազոր մարմնին և այլն<sup>107</sup>:

Դիտարկման արդյունքում հանքային ջրերի հանքավայրին բնորոշ և հաստատված քանակական և որակական չափորոշիչներից էական շեղումներ հայտնաբերելու դեպքում բացահայտվում են պատճառները, մշակվում ու իրականացվում է կանխարգելիչ միջոցառումների ծրագիր՝ հանքավայրի ջրային ռեսուրսները սպառումից և աղտոտումից պահպանելու համար<sup>108</sup>:

Ռեժիմային դիտարկումների իրականացման և դրանց արդյունքների մասին տեղեկատվությունը հանրամատչելի չէ:

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ ստորերկրյա ջրերի հանքավայրերն ու ջրատար հորիզոններն աղտոտումից զերծ պահելու և պահպանությունն ապահովելու նպատակով ջրհանների ու աղբյուրների շուրջը ստեղծվում են սանիտարական պահպանման գոտիներ, որոնց սահմաններում իրագործվում են հողի, ջրի, մթնոլորտի և կանաչապատ տարածքների հնարավոր աղտոտումը և հողի դեգրադացումը բացառող միջոցառումներ<sup>109</sup>: Ռեկրեացիոն նպատակով գործունեություն ծավալող յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ռեկրեացիոն գոտիներում պետք է ապահովի ջրային ռեսուրսների հիդրոլոգիական, հիդրոմորֆոլոգիական և ջրաքիմիական պահպանության պահանջների իրագործումը: Հայաստանի Հանրապետության ռեկրեացիոն գոտիներում ջրային ռեսուրսների նկատմամբ պահանջները սահմանվում են օրենսդրությամբ<sup>110</sup>:

<sup>106</sup> <http://www.mnp.am/shrjaka-mijavayr/ynderq>

<sup>107</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=79591>, ՀՀ կառավարության որոշումը ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման ժամանակ անհրաժեշտ ռեժիմային դիտարկումների, ջրային ռեսուրսներն սպառումից և աղտոտումից պահպանելու միջոցառումների կարգը սահմանելու մասին, Կետ 2 և 3

<sup>108</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docID=79591>, ՀՀ կառավարության 2012 թվականի նույեմբերի 22-ի «Ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման ժամանակ անհրաժեշտ ռեժիմային դիտարկումների, ջրային ռեսուրսներն սպառումից և աղտոտումից պահպանելու միջոցառումների կարգը սահմանելու մասին» թիվ 1484-Ն որոշում

<sup>109</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=31198>, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքը, Գլուխ 8, Հոդված 67, Կետ 1

<sup>110</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=145926>, Շրջակա միջավայրի նախարարության հրաման ռեկրեացիոն գոտիներում ջրային ռեսուրսների պահպանության պահանջները սահմանելու մասին

#### 4.8.1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ու փորձաքննությունը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենքի համաձայն, նախքան գործունեություն ծավալելը և/կամ մինչև հիմնադրության փաստաթղթի ընդունումը, իրականացվում է արդյունահանողի գործունեության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում, այդ թվում՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննություն<sup>111</sup>: Գնահատումը և փորձաքննությունը ելնում են բնական պաշարների արդյունավետ, համալիր և բանական օգտագործման պահանջներից, կենդանական ու բուսական աշխարհի պահպանման անհրաժեշտությունից, շրջակա միջավայրին և մարդու առողջությանը հասցվող վնասի հատուցելիության ճանաչումից: Շրջակա միջավայրի նախարարության կայքէջում առկա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախագծերը և դրանց եզրակացությունները: Վերջինների մասով հասանելիությունը ներկայացված է [Հավելված 4](#)-ում:

Գնահատման նպատակն է շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հիմնադրության փաստաթղթի և նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը: Փորձաքննության նպատակն է հայտի կամ գնահատման հավաստիության ստուգումը, հիմնադրության փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության թույլատրելիության որոշումը: Հիմնադրության փաստաթուղթը շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փաստաթղթի (քաղաքականություն, ռազմավարություն, հայեցակարգ, ուրվագիծ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր և այլն) նախագիծն է:

Հանքային ջրերի արդյունահանման ոլորտի պարագայում գնահատման և փորձաքննության իրականացման ընթացքում դիտարկվում են հիմնականում և մասնավորապես ստորերկրյա ջրերը, դրանց կատեգորիան, հոսքի ռեժիմը, որակական և քանակական ցուցանիշները, ջրօգտագործումը, ջրահեռացումը, ջրային համակարգը կամ դրա առանձին մասերը և այլ բնութագրերը:

Գնահատման և շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա գործունեության տեսակները դասակարգվում են երեք կատեգորիայի՝ Ա, Բ, Գ՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Ձեռնարկատիրական նպատակով հանքային կամ ստորերկրյա ջրերի հանքավայրերի շահագործումը ներառվում է Ա կատեգորիայում<sup>112</sup>, նույն ինչ մետաղական հանքաքարի արդյունահանման դեպքում (ավելի մանրամասն ներկայացված է սույն ուսումնասիրության Բաժին 2.1-ում):

Ինչ վերաբերում է մետաղական բնական պաշարների վերամշակմանը, ապա, ինչպես նշվել է 2-րդ գլխում, դրա հետ կապված գործունեության տեսակները ևս ներառվում են Ա կատեգորիայում<sup>113</sup>:



*Հանքային ջրերի արդյունահանման ոլորտը ներառված է Ա կատեգորիայում և համարվում է շրջակա միջավայրի վրա ամենամեծ ազդեցությունն ունեցող ճյուղերից մեկը: Սակայն, ըստ ՏԿԵՆ-ի կողմից տրված պարզաբանումների, իրականում հանքային ջրերի արդյունահանումը չունի վնասակար էական ազդեցություն շրջակա միջավայրի վրա (համեմատության համար հարկ է նշել, որ Ա կատեգորիայի մեջ են ներառված այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են արոմակայանների գործունեությունը, մետաղական և ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանումը, նավթամթերքի արտադրությունը և այլն): Ավելին, որոշ դեպքերում բնական*

<sup>111</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140512>, ՀՀ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենք, Գլուխ 4, Հոդված 15, Կետ 1

<sup>112</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140512>, ՀՀ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենք, Գլուխ 3, Հոդված 14, Կետ 3 և 4

<sup>113</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140512>, Գլուխ 3, Հոդված 14, Կետ 4

աղբյուրներից կամ չօգտագործվող և անդադար հոսող հանքային ջրերի հանքավայրերի հորատանցքերից հոսող ջուրը կարող է դառնալ ճահճացումների, սողանքների և այլ անբարենպաստ իրավիճակների պատճառ: Հանքային ջրի նպատակային օգտագործումը կարող է վերացնել այդ խնդիրները: Սակայն այս ոլորտի՝ Ա կատեգորիայում ներառելը բարդացնում է ԿՎԿՄ ոլորտում գործունեություն սկսելու ընթացքը և հանդիսանում է արհեստական խոչընդոտ: Սակայն, ամեն դեպքում, կարիք կա նշելու, որ հանքային ջրերի արդյունահանման ժամանակ հնարավոր է սանիտարական պահպանման գոտու և դեպի շալցման գործարան ջրագծի փարածքում հողաբուսական շերտի խախտում, մթնոլորտային օդի աղտոտում արտանետվող ածխաթթու գազով, ջրային ռեսուրսների աղտոտում և հողերի հանքայնացում, աղակալում:

## 5. Ուորտների վերաբերող տվյալների հասանելիությունը

## 5.1. Տեղեկատվության հրապարակայնացմանը խոչընդոտող օրենսդրական, նորմատիվ կարգավորման, ադմինիստրատիվ կամ պրակտիկ գործոնները (ստանդարտի 7.1 և 7.2 պահանջներ)

Այս բաժնում ներկայացված են այն հարցերը, որոնք կարող են պարունակել իրավական կամ ինստիտուցիոնալ խոչընդոտներ, մասնավորապես՝

- ԱՃԹՆ-ի ստանդարտների լիարժեք կատարման և
- թափանցիկության ավելի բարձր աստիճանի ապահովման համար:

### 5.1.1. Տեղեկատվության հրապարակայնացմանը խոչընդոտող օրենսդրական և նորմատիվ կարգավորման գործոնները

#### Հանքային ջրերի արդյունահանում

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 9-րդ հոդվածով սահմանված են ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնությանն առնչվող հարցերը: Համաձայն նշված կարգավորումների՝ լիազոր մարմինն իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է նաև օգտակար հանաժող արդյունահանող ընդերքօգտագործողների հետ կնքված ընդերքօգտագործման պայմանագրերը և դրանցում կատարվող փոփոխությունները՝ բացառելով «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հրապարակման ոչ ենթակա տեղեկատվության (տվյալների) հրապարակումը:

Վիճակագրական կոմիտեի կողմից տվյալների ճշգրտությանն առնչվող ուսումնասիրություններ չեն իրականացվում: Ընթացիկ տարվա հաշվետու ժամանակահատվածում կազմակերպությունների կողմից ներկայացված տվյալների ճշգրտությունն իրականացվում է նախորդ տարվա համապատասխան տվյալների հետ համադրման միջոցով: Համադրելիություն այլ վիճակագրության հետ առկա չէ<sup>114</sup>:

Ի տարբերություն մետաղական օգտակար հանածոների ոլորտի, հանքային ջրերի ոլորտում գործող ընդերքօգտագործողները չեն ներկայացնում ԱՃԹՆ-ի հաշվետվություններ, քանի որ չկա այդպիսի օրենսդրական պահանջ: Պետական մարմինների (ՊԵԿ, ՏԿԵՆ, ՇՄՆ) կողմից չեն հրապարակվում այդ ոլորտում գործող ընդերքօգտագործողներից ստացված տվյալները՝ վերջիններիս կողմից վճարված հարկերի, տեղական հարկերի և այլ վճարների վերաբերյալ, քանի որ գործող օրենսդրությամբ ընկերությունների կողմից վճարվող հարկերի վերաբերյալ տեղեկատվությունը հանդիսանում է առևտրային և հարկային գաղտնիք պարունակող տեղեկատվություն:

#### Մետաղական բնական պաշարների վերամշակում

Մետաղական բնական պաշարների վերամշակման գործունեությունը չի պահանջում հատուկ թույլտվություն կամ լիցենզիա, ինչպես նաև պետական լիազոր մարմնի հետ կնքվող առանձին պայմանագիր:

Ինչպես հանքային ջրերի ոլորտում, այս ոլորտում ևս տվյալների հրապարակայնության հարցում կա հարկային և առևտրային գաղտնիքի խնդիրը, որին սակայն կարելի է անդրադառնալ միայն այն ժամանակ, երբ լուծված կլինի այդ ընկերությունների նույնականացման խնդիրը:

<sup>114</sup> <https://armstat.am/file/Qualitydec/am/24.4.pdf>, ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք, Որակի հոշակագիր, հանքային ջրերի օգտագործում և արդյունահանում

## 5.1.2. Տեղեկատվության հրապարակայնացմանը խոչընդոտող ադմինիստրատիվ և պրակտիկ գործոնները

### Հանքային ջրերի արդյունահանում

Սույն ուսումնասիրության մեջ քննարկվեց նաև հանքային ջրերի արդյունահանման ծավալների վերաբերյալ տվյալների թափանցիկության հարցը՝ վիճակագրական տվյալների հասանելիության համատեքստում: Հարկ է նշել սակայն, որ յուրաքանչյուր ընդերքօգտագործող այդ տվյալները ՀՀ վիճակագրական կոմիտեին է տրամադրում առանձին: Հաշվետվությունը կազմում են հանքային ջրերի օգտագործմամբ և արդյունահանմամբ զբաղվող և հաշվետու տարում գործունեություն ծավալած կազմակերպությունները, որոնք ներկայացնում են հանքային ջրերի արդյունահանման և ածխաթթու գազի կորզման ծավալներն ըստ ընդերքօգտագործման իրավունքի, դրանց փաստացի օգտագործման ծավալները, օգտագործման նպատակները, կորուստների ծավալները և մի շարք այլ ցուցանիշներ<sup>115</sup>, սակայն վիճակագրական կոմիտեն հրապարակում է ընդհանրացված տվյալներ: Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական հրապարակումներում<sup>116</sup> (հայերեն և ռուսերեն) ներկայացված են հանքային ջրերի արտադրության ծավալները՝ «Ջրեր հանքային և գազավորած, չքաղցրացված» տողի ներքո<sup>117</sup>: Հետևապես կարելի է ասել, որ հանքային ջրերի ոլորտում առկա տվյալներն ըստ ընկերությունների ապագրեգացված չեն:

Հանքային ջրերի արդյունահանման ծավալների վերաբերյալ առավել հանգամանալից տվյալներ ներկայացված են ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ «Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում» վիճակագրական տարեկան ժողովածուում<sup>118</sup>, (հայերեն և անգլերեն): Մասնավորապես, նշված ժողովածուի մաս կազմող՝ «Հանքային ջրերի արդյունահանումը և օգտագործումը» հրապարակման<sup>119</sup> մեջ արտացոլված են ՀՀ վիճակագրական կոմիտեի հաշվառման համակարգում ընդգրկված բնական հանքային ջուր արդյունահանող կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների ամփոփ տվյալներն ըստ ՀՀ մարզերի: Տվյալներն ապագրեգացված են՝ ըստ հանքային ջրերի արդյունահանման և ածխաթթու գազի կորզման ծավալների, օգտագործման նպատակի, կորուստների և այլ ցուցանիշների:

### Մետաղական բնական պաշարների վերամշակում

Ոլորտի արտադրության և արտահանման ծավալների վերաբերյալ առկա են ընդհանրացված վիճակագրական տվյալներ, որոնք վիճակագրական հաշվետվություններում ներկայացված են որպես «հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն» կամ

<sup>115</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138149>, «Հանքային ջրերի արդյունահանման և օգտագործման մասին» ձև 1-հանքաջուր (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության խորհրդի 2015 թվականի փետրվարի 13-ի թիվ 05-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ վիճակագրության պետական խորհրդի թիվ 56-Ն որոշում

<sup>116</sup> <https://armstat.am/am/?nid=82&id=2236>, ՀՀ վիճակագրական կոմիտեի, հրապարակումներ

<sup>117</sup> [https://armstat.am/file/article/sv\\_12\\_19a\\_121.pdf](https://armstat.am/file/article/sv_12_19a_121.pdf), Արդյունաբերական արտադրանքի ծավալները և արտադրության ինդեքսը, 2019թ.

<sup>118</sup> <https://armstat.am/am/?nid=82&id=2301>, ՀՀ վիճակագրական կոմիտեի, հրապարակումներ

<sup>119</sup> [https://armstat.am/file/article/eco\\_book\\_2019\\_5.pdf](https://armstat.am/file/article/eco_book_2019_5.pdf), «Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում» վիճակագրական տարեկան ժողովածու, «Հանքային ջրերի արդյունահանում և օգտագործում»



«հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր» տողերի ներքո<sup>120</sup>:

Վերամշակված մետաղական արտադրանքի արտահանման առումով վիճակագրական տվյալներում ներկայացված են «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» տողերով<sup>121</sup>, ինչը թույլ չի տալիս առանձնացնել Հայաստանում արդյունահանված մետաղական օգտակար հանածոների վերամշակման արդյունքում պատրաստված և արտահանված ապրանքների ապագրեզացված տվյալները:

Ընդհանուր առմամբ, խնդրահարույց է նաև բնական մետաղական պաշարների վերամշակման ոլորտի կազմակերպությունների ցանկի նույնականացումը: Նույնականացումը կատարվել է տնտեսական դասակարգիչների հիման վրա. ընտրվել են բնական մետաղական պաշարների վերամշակման ոլորտին առնչվող գործունեությունները, քանի որ, որպես այդպիսին, այդ ոլորտն առկա չէ դասակարգիչների մեջ: Ուստի հնարավոր է, որ ցանկի մեջ ներառված լինեն այնպիսի կազմակերպություններ, որոնք չեն ծավալում բնական մետաղական պաշարների վերամշակման գործունեություն: Նման խնդրից խուսափելու համար անհրաժեշտ է հստակ մատնանշել տվյալ ոլորտը տնտեսական դասակարգիչների մեջ:

## 5.2. Տեղեկատվության հասանելիությունը պետական գերատեսչությունների համակարգերում

Նախնական ուսումնասիրության մեջ տեղ գտած տվյալները մեծամասամբ վերցվել են պետական մարմինների պաշտոնական կայքերից կամ ստացվել են այդ մարմիններին կատարած հարցումների արդյունքում: Տեղեկատվությունն ամբողջացնելու համար տեղի են ունեցել նաև քննարկումներ, զրույցներ և հանդիպումներ պետական համապատասխան մարմինների ներկայացուցիչների հետ: Սակայն, կան նաև տեղեկատվություններ, որոնք անհրաժեշտ են ԱՃԹՆ-ի շրջանակներում ներկայացման համար, սակայն որոշակի պատճառներով չեն ներկայացվում պետական մարմինների կողմից կամ ներկայացվում են ավելի ագրեզացված տեսքով: Այդպիսի դեպքերը ներկայացված են ստորև:

- ՀՀ ՎԿ-ի կողմից ներկայացված հանքային ջրերի արտադրության տվյալների մեջ ներառված են ոչ միայն բնական հանքային ջրերը, այլև արհեստական հանքային ջրերը, սովորական բնական ջրերը, սառույցը և ձյունը, արհեստական սառեցված ջուրը: Միևնույն ժամանակ այս ծավալների մեջ ներառված չեն բուրավետացված և քաղցրացված հանքային ջրերը, որոնք ներառված են «Ոչ ակտիվային այլ խմիչքներ» բաժնում՝ կազմելով դրա փոքր մասը: Այսինքն, ներկայացված տվյալներով հնարավոր չէ հստակ պատկերացում կազմել հենց բնական հանքային ջրերի օգտագործման արդյունքում արտադրված արտադրանքի ծավալների և արժեքի մասին: Այս նպատակով կարող է առաջարկվել առանձնացնել «Բնական հանքային ջրերի արտադրություն» ենթաբաժինը «Բնական հանքային և այլ շշայցված ջրերի արտադրություն» բաժնից, ինչպես նաև «Բուրավետացված և քաղցրացված բնական հանքային ջրերի արտադրություն» ենթաբաժինը «Ոչ ակտիվային այլ խմիչքների արտադրություն» բաժնից վիճակագրական տեղեկատվության ներկայացման ժամանակ:
- Հայտնի չեն առանձին վերցրած արտաքին և ներքին օգտագործման եղանակով բուժական նպատակով օգտագործվող հանքային ջրերի ծավալները բնեղեն և դրամային արտահայտությամբ, քանի որ այդպիսի վիճակագրական բաժանում չի իրականացվում և

<sup>120</sup> [https://armstat.am/file/article/sv\\_12\\_19a\\_121.pdf](https://armstat.am/file/article/sv_12_19a_121.pdf), Արդյունաբերական արտադրանքի ծավալը և արտադրության ինդեքսները, 2019թ., էջեր 11-րդ, 13-րդ և 19

<sup>121</sup> [https://www.armstat.am/file/article/sv\\_01\\_19a\\_411.pdf](https://www.armstat.am/file/article/sv_01_19a_411.pdf), Ապրանքների արտահանում և ներմուծում

Նմանատիպ տեղեկատվություն չի հավաքագրվում: Նմանատիպ տեղեկատվության կարող են տիրապետել և այն տրամադրել առանձին կազմակերպությունները՝ ելնելով իրենց կողմից օգտագործվող հանքային ջրերի և դրանց օգտագործման արդյունքում մատուցված ծառայությունների ծավալներից:

- Հանքային ջրերից կորզված ածխաթթու գազի արտադրության մասին տվյալները վիճակագրական տեղեկատվության մեջ չեն առանձնացվում, այլ ներառված են «Արդյունաբերական գազերի արտադրություն» բաժնի մեջ: Ճյուղի կողմից ստեղծվող արտադրանքի մասին հստակ տեղեկատվություն ստանալու նպատակով անհրաժեշտ է ՀՀ ՎԿ-ի կողմից ներկայացվող տեղեկատվության մեջ հանքային ջրերից ածխաթթու գազի արտադրության ծավալներն առանձնացնել «Արդյունաբերական գազերի արտադրություն» բաժնից:
- ՀՀ ՎԿ-ի կողմից հրապարակված ածխաթթու գազի արտահանման մասին տվյալները ներառում են արտադրական բոլոր մեթոդներով արտադրված ածխաթթու գազի արտահանման ծավալները և առանձնացված չեն կոնկրետ հանքային ջրերից կորզված և արտահանված ածխաթթու գազի ծավալները: Նմանատիպ տեղեկատվություն կարող են ունենալ և տրամադրել առանձին կազմակերպությունները:
- Մետաղական բնական պաշարների վերամշակման ճյուղը որպես այդպիսին չի առանձնացվում ՀՀ ՎԿ-ի կողմից ներկայացվող վիճակագրական տեղեկատվության մեջ և բարդություն է առաջանում տվյալ ոլորտին վերաբերող գործունեությունը մետաղների արդյունահանման և արտադրության գործունեություններից տարանջատելիս: Ինչպես նաև անհնարին է դառնում կոնկրետ այդ ոլորտի գործունեության՝ ներառյալ տնտեսության մեջ ոլորտի դերի գնահատումը:
- Ոլորտների ընկերությունների կողմից համայնքային բյուջեներ վճարվող միջոցների մասին տեղեկատվություն առկա չէ: Տեղեկատվությունը հնարավոր է ստանալ համայնքներից համապատասխան հանձնարարականի կամ օրենսդրական ակտի սահմանման միջոցով:

### 5.3. ԱՃԹՆ պահանջների և առկա տեղեկատվության համեմատական

Սույն նախնական ուսումնասիրությունը պատրաստվել է հիմնվելով ԱՃԹՆ-ի ստանդարտի վրա: Այնուամենայնիվ, որոշակի օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներից ելնելով հնարավոր չի եղել նախնական ուսումնասիրության մեջ ներկայացնել ստանդարտով պահանջվող ամբողջ տեղեկատվությունը, ինչի արդյունքում առկա են որոշակի տարբերություններ սույն աշխատանքի մեջ ներկայացված և ԱՃԹՆ-ի ստանդարտներով նախատեսված տեղեկատվության միջև: Տվյալների հասանելիության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է [Հավելված 5](#)-ում:

### 5.4. «Ծրագիր» եզրույթի սահմանումը

Համաձայն ԱՃԹՆ-ի 4.7 ստանդարտի, ծրագիրը սահմանվում է որպես գործառնական գործողություններ, որոնք ղեկավարվում են մեկ պայմանագրով, լիցենզիայով, վարձակալության, կոնցեսիոն կամ նույնպիսի իրավական համաձայնագրով և հիմք են հանդիսանում կառավարության հանդեպ վճարման պարտավորությունների համար: Այդուհանդերձ, եթե մեկից ավելի նման պայմանագրեր էապես փոխկապակցված են, ապա բազմաշահառու խումբը պետք է հստակորեն որոշի և փաստաթղթավորի, թե որ դեպքերն են համարվում մեկ ծրագիր:

Ստորգետնյա հանքային ջրերի արդյունահանման ոլորտում որպես ծրագիր կարելի է դիտարկել 1 ընդերքօգտագործման իրավունքով/թույլտվությամբ իրականացվող գործունեությունը: Սակայն, հաշվի առնելով այն փաստը, որ ոլորտի որոշ ընկերություններ, բացի հանքային ջրերի արդյունահանումից, զբաղվում են նաև այլ գործունեությամբ, և չունեն դրա գծով առանձնացված

հաշվառում, ներկայումս այս ընկերությունների համար անհնար կլինի ծրագրային մակարդակի հաշվետվողականությունը:

Ինչ վերաբերում է մետաղական բնական պաշարների վերամշակման ոլորտին, «ծրագրի» եզրույթի որոշումը կիրառելի չէ այս ոլորտի ընկերությունների գործունեության համար, քանի որ, առանձին պայմանագրի/թույլտվության բացակայության պարագայում, հարկերի հաշվարկման հիմք է հանդիսանում ընկերությունների ընդհանուր գործունեությունը:

## 5.5. Առնչվող օրենքներում և այլ իրավական ակտերում տեղեկատվության հրապարակայնացման խոչընդոտների վերացման տարբերակներն ու առաջարկությունները

### Հանքային ջրերի արդյունահանում

Ներկայումս բացակայում են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներ հանքային ջրերի արդյունահանման ոլորտից մուտքագրվող եկամուտների հետ կապված հրապարակային տեղեկությունները: Չկան նաև հրապարակային տվյալներ ընկերությունների սոցիալ-տնտեսական հատկացումների վերաբերյալ:

Հանքային ջրերի ոլորտում գործող օրենսդրությունը մեծ մասամբ համեմատելի է մետաղական օգտակար հանածոների ոլորտին: Հետևապես, եթե որոշում կայացվի այս ոլորտը ներառել ԱՃԹՆ-ի շրջանակում, ապա անհրաժեշտ կլինի իրականացնել որոշակի օրենսդրական փոփոխություններ: Մասնավորապես, անհրաժեշտ կլինի սահմանել տվյալների հրապարակման նույնպիսի պահանջներ, ինչպիսիք սահմանված են մետաղական օգտակար հանածոների ոլորտում ընդերքօգտագործման համար՝ իրական շահառուների հրապարակման տարբերությունների հաշվառմամբ: Դրա համար անհրաժեշտ է՝

1. ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում և ՀՀ հարկային օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություններ, որոնցով պարտադիր կդառնա այս ոլորտում տվյալների հրապարակումը մետաղական ընդերքօգտագործման ոլորտի պահանջներին համապատասխան:
2. Մշակել այս ոլորտի առանձնահատկությունները ներառող՝ հրապարակային հաշվետվությունների ձևաթղթեր, որոնք կարող են հիմնված լինել մետաղական օգտակար հանածոների արդյունահանմամբ զբաղվող ընդերքօգտագործողների համար մշակված ձևաթղթերի վրա:

### Մետաղական բնական պաշարների վերամշակում

Վերամշակման ոլորտում պետության և ընկերությունների կողմից ներկայացվող եկամտային հոսքերը ներկայացնելու համար անհրաժեշտ է նախ սահմանել օրենսդրական կարգավորումներ, որոնք թույլ կտան հստակ սահմանել ձեռնարկության՝ վերամշակման ոլորտին պատկանելու չափորոշիչները և սահմանել հաշվետվողականության առանձին ընթացակարգեր:

1. Իրականացնել հարկային հաշվետվողականության փոփոխություն, որպեսզի հնարավոր լինի առանձնացնել Հայաստանում ձեռք բերված օգտակար հանածոյի վերամշակումը երրորդ երկրներից ձեռք բերված հումքի վերամշակումից:
2. ԱՃԹՆ-ի հաշվետվողականության չափանիշներին համապատասխան՝ մշակել վերամշակման ոլորտին բնորոշ հրապարակային հաշվետվությունների ձևաթղթեր:

### Հանքաքարի և խտանյութի առք ու վաճառքով զբաղվող տեղական կազմակերպություններ

Այս ընկերությունների դեպքում անհրաժեշտ կլինի իրականացնել լայնածավալ օրենսդրական փոփոխություններ, որոնք թույլ կտան՝

- առանձնացնել Հայաստանում արդյունահանվող օգտակար հանածոներ ձեռք բերող ընկերություններին երրորդ երկրներից հումք ձեռքբերողներից,
- առանձնացնել Հայաստանում ձեռք բերված օգտակար հանածո վերավաճառողներին՝ առաջնային շուկայում ձեռքբերողներից,
- մշակել համապատասխան հրապարակային հաշվետվությունների ձևաթղթեր:

## 6. Եզրահանգումներ

Շահագրգիռ կողմերի հետ քննարկման արդյունքում ձեռք բերվեց համաձայնություն, որ ուսումնասիրված երկու ոլորտներից որևէ մեկի դեպքում (ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանում և մետաղական բնական պաշարների վերամշակում (ներառյալ հանքաքարի և խտանյութի առք ու վաճառքով զբաղվող տեղական կազմակերպությունների գործունեությունը)) ներկայումս նպատակահարմար չէ լրիվ ծավալով ԱՃԹՆ-ի շրջանակում դիտարկումը՝ ելնելով ոլորտներից պետական եկամուտների և այլ ազդեցությունների ոչ էական լինելու հանգամանքից: Ստորև ներկայացված են ուսումնասիրության հիմնական եզրահանգումները և կետերը.

- Հանքային ջրերի արդյունահանման ոլորտում որոշ չափով արդեն ապահովվում է թափանցիկություն, մասնավորապես.
  - հրապարակվում է ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման թույլտվություն ունեցող ընկերությունների ցանկը,
  - հրապարակվում են ստորերկրյա հանքային ջրեր արդյունահանող ընկերությունների պայմանագրերը,
  - հրապարակվում են ստորերկրյա հանքային ջրեր արդյունահանող ընկերությունների ՇՄԱԳ-ի եզրակացությունները, որոնց հրապարակման որակի/հասանելիության համար նախատեսվում են բարելավվումներ,
  - առկա են որոշակի վիճակագրական տվյալներ ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման վերաբերյալ, որոնք թույլ են տալիս ընդհանուր պատկերացում կազմել ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման և օգտագործման ծավալների վերաբերյալ:
